



EUROPEAN COURT OF HUMAN RIGHTS
COUR EUROPÉENNE DES DROITS DE L'HOMME

Ուղեցույց Մարդու իրավունքների եվրոպական
կոնվենցիայի 2-րդ հոդվածի վերաբերյալ

Կյանքի իրավունք

1-ին հրատարակում

Տպագիր կամ էլեկտրոնային (առցանց) հրատարակության տեսքով սույն զեկույցի ամբողջ կամ մասնակի թարգմանությունը և (կամ) վերարտադրումն իրականացնելու ցանկություն ունեցող հրատարակիչները կամ կազմակերպություններն արտոնման պայմաններին ծանոթանալու համար կարող են դիմել հետևյալ հասցեով՝ publishing@echr.coe.int:

Ընթացիկ թարգմանությունների վերաբերյալ ցանկացած տեղեկություն ստանալու համար խնդրում ենք ծանոթանալ «[Ընթացիկ թարգմանություններ](#)» փաստաթղթին:

Սույն ուղեցույցը պատրաստվել է Իրավաբանական խորհրդատվության վարչության կողմից և պարտադրող չէ Դատարանի համար: Դրանում կարող են մտցվել ձևաբանական շտկումներ:

Սույն ուղեցույցի բնօրինակը գրված է անգլերենով: Ձեռագիրն ավարտուն տեսքի է բերվել 2017 թվականի դեկտեմբերի 31-ին:

Նախադեպային իրավունքին նվիրված ուղեցույցները կարելի է ներբեռնվել այստեղից՝ www.echr.coe.int (Նախադեպային իրավունք –

Իրավաբանական վերլուծություն – Նախադեպային իրավունքին նվիրված ուղեցույցներ): Հրապարակումների մասին վերջին նորություններին ծանոթանալու համար կարող եք այցելել Դատարանի «Twitter»-ի էջը հետևյալ հասցեով՝ <https://twitter.com/echrpublication>.

© Եվրոպայի խորհուրդ, Մարդու իրավունքների Եվրոպական դատարան, 2018թ.

Բովանդակություն

Նախաբան	5
I. Ընդհանուր նկատառումներ	6
Ա. 2-րդ հոդվածի մեկնաբանություն.....	6
Բ. 2-րդ հոդվածից բխող պարտավորությունները պետության համար.....	7
Գ. 2-րդ հոդվածի կիրառելիությունն այն դեպքերում, երբ դիմումատուն մազապուրծ է եղել մահվանից.....	7
II. Կյանքի պաշտպանություն	8
Ա. Պետության դրական պարտականությունների բնույթը.....	8
Բ. Պետության դրական պարտականությունների տիրույթը.....	9
Գ. Կյանքի պաշտպանությունը՝ ըստ համատեքստի.....	10
1. Անձանց պաշտպանությունը պետությունը չներկայացնող դերակատարների կողմից մահաբեր ուժի գործադրումից	10
2. Անձանց պաշտպանությունը հենց իրենցից.....	11
3. Անձանց պաշտպանությունը բնապահպանական և արդյունաբերական աղետներից	13
4. Անձանց պաշտպանությունն առողջապահության ոլորտում	15
ա. Բնակչություն՝ ընդհանուր առմամբ.....	15
բ. Ազատագրված անձինք և պետության հսկողության տակ գտնվող խոցելի անձինք.....	17
5. Անձանց պաշտպանությունը դժբախտ պատահարների դեպքում.....	19
Բ. Ժամանակային սահմանափակումներ	20
6. Կյանք սկիզբ	20
7. Կյանքի ավարտին վերաբերող հարցեր	21
ա. Էվթանազիա	21
բ. Կենսական գործառնությունների ապահովման դադարեցում.....	21
III. Դիտավորյալ կյանքից զրկելու արգելք	22
Ա. Մահապատիժ.....	22
1. Կոնվենցիայի 2-րդ հոդվածի 1-ին մասի մեկնաբանությունը Կոնվենցիայի 6-րդ և 13-րդ արձանագրությունների լույսի ներքո	22
2. 2-րդ հոդվածից բխող պետության պատասխանատվությունն արտահանձնման և հարկադիր վերադարձի հարցերում.....	23
Ա. Պետության գործակալների կողմից մահաբեր ուժի կիրառում	24
1. Ապացույցների տարրերի գնահատում.....	24
ա. Ապացույցների մակարդակ	24
բ. Ապացույցի բեռ.....	25
2. Անձանց պաշտպանությունը պետության գործակալների կողմից մահացու ուժի կիրառումից	26
ա. Իրավական դաշտ	26
բ. Պետության գործակալների պատրաստում և զտում	27
գ. Օրինակներ	27

3. Ուժի գործադրումը թույլատրող բացառություններ	28
ա. Հսկողության չափորոշիչներ	28
բ. Ընդհանուր մոտեցում	29
i. Պետության գործակալների գործողություններ	30
ii. Գործողության նախապատրաստումն ու հսկողությունը	30
iii. Օրինակներ	31
F. Առանձին ոլորտներ	32
1. Մահվան դեպքեր, որոնք առաջացել են ձերբակալման հատուկ միջոցների գործադրման հետևանքով	32
2. Կալանքի տակ մահվան դեպքեր	33
3. Արտադատական մահապատիժներ	33
4. Անվտանգության ապահովման կամ ռազմական բնույթի գործողություն	34
5. Անհետացումներ	35
ա. Մահվան կանխավարկած	35
բ. Ենթադրյալ մահվան դեպքի առնչությամբ ծագող պետության պատասխանատվություն	36
գ. Կյանքի իրավունքը պաշտպանելու պետության պատասխանատվություն ...	37
6. Անհատական կարգավիճակով հանդես եկող պետության գործակալների կողմից կատարված սպանություններ	37

II. Ընթացակարգային պարտավորություններ **38**

Ա. Ընթացակարգային պարտավորությունների շրջանակ	38
Բ. Կապը նյութական և ընթացակարգային հայեցակետերի միջև	39
Գ. Քննության նպատակ	40
Դ. Քննության ձև	40
Ե. Հսկողության բնույթ և աստիճան	41
Զ. Քննության պահանջների չափորոշիչներ	41
1. Անկախություն	41
2. Պատշաճ բնույթ	43
3. Քննության արագություն ու ողջամիտ ջանասիրություն	44
4. Հսկողություն հանրության և տուժողների հարազատների միավորումների կողմից	46
Է. Հետապնդումների և պատժամիջոցների հետ կապված հարցեր	47
Ը. Ընթացակարգային պարտավորության վերականգնում	48
Թ. Ատելության հողի վրա կատարված հանցագործությունների հետաքննություն	49
Ճ. Ընթացակարգային պարտավորություններ անդրսահմանային գործերի շրջանակներում	50
Ի. Ընթացակարգային պարտավորություններ անփութությամբ պատճառված մահվան կամ ծանր վնասվածքների դեպքում	50
5. Ընդհանուր սկզբունքներ	50
6. Օրինակներ	54
ա. Բժշկական անփութության պնդումներ	54
բ. Դժբախտ պատահարներ	54

Մեջբերվող գործերի ցանկ **56**

Նախաբան

Սույն ուղեցույցը պատկանում է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետև՝ «Դատարան», «Եվրոպական դատարան» կամ «Մտրասբուրգի դատարան») կողմից հրապարակված նախադեպային իրավունքի ուղեցույցների շարքին, որը կոչված է տեղեկացնել իրավագիտությանը զբաղվող մասնագետներին վերջինիս կողմից կայացված հիմնարար վճիռների և որոշումների մասին: Տվյալ դեպքում սույն ուղեցույցը վերլուծում և ամփոփում է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի (այսուհետև՝ «Կոնվենցիա» կամ «Եվրոպական կոնվենցիա») 1-ին հոդվածին առնչվող նախադեպային իրավունքը 2017 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ: Ընթերցողն այստեղ կգտնի տվյալ հարցի շուրջ մշակված հիմնական սկզբունքները և համապատասխան նախադեպերը:

Ընտրված նախադեպային իրավունքը ներառում է սկզբունքային վճիռներ և որոշումներ, որոնք կարևոր են կամ վերջերս են կայացվել:*

Դատարանի վճիռներն ու որոշումները անդրադառնում են ոչ միայն իր վարույթում գտնվող գործերին, այլև ավելի լայն իմաստով ծառայում են Կոնվենցիայով սահմանված նորմերի պարզաբանման, երաշխավորման և զարգացման համար՝ դրանով իսկ նպաստելով պետությունների կողմից որպես պայմանավորվող պետությունների ստանձնած պարտավորությունների կատարմանը (*«Բոլանդիան ընդդեմ Միացյալ Թագավորության»*, 18 հունվարի 1978թ., § 154, սերիա Ա, թիվ 25 և վերջերս՝ *«Յերոնովիչս ընդդեմ Լատվիայի»* [ՄՊ], թիվ 44898/10, § 109, ՄԻԵԴ, 2016թ.):

Այսպիսով, Կոնվենցիայի ներքո ստեղծված համակարգը կոչված է հանրային շահերից ելնելով անդրադառնալ հասարակական կարգին վերաբերող հարցերին՝ բարձրացնելով մարդու իրավունքների պաշտպանության չափանիշները և ընդլայնելով տվյալ ոլորտում ձևավորված նախադեպային իրավունքը Կոնվենցիային անդամակցող բոլոր պետություններում (*«Կոնստանտին Մարկինս ընդդեմ Ռուսաստանի»* [ՄՊ], թիվ 30078/06, § 89, ՄԻԵԴ 2012): Եվ իսկապես, Դատարանն ընդգծել է որպես «Եվրոպական հասարակական կարգի սահմանադրական գործիքի» Մարդու իրավունքների ոլորտում Կոնվենցիայի դերակատարումը (*«Բոսֆորի ավիատոհիների գրոսաշրջության և առևտրի գործակալությունն ընդդեմ Բոլանդիայի»* [ՄՊ], թիվ 45036/98, § 156, ՄԻԵԴ, 2005-VI):

Սույն ուղեցույցն ընդգրկում է հղումներ ըստ առանցքային բառերի՝ Կոնվենցիայի և դրա լրացուցիչ արձանագրությունների յուրաքանչյուր հոդվածի մասով: Յուրաքանչյուր գործի շրջանակներում արձարծվող իրավաբանական հարցերն ամփոփված են **առանցքային բառերի ցանկում**, որը (մեծամասամբ) հիմնված է Կոնվենցիայի և դրա արձանագրությունների տեքստից անմիջապես վերցված եզրույթների բառացանկի վրա:

Դատարանի նախադեպային իրավունքի «HUDOC» տվյալների շտեմարանը թույլ է տալիս որոնում կատարել ըստ առանցքային բառերի: Այսպիսով, ըստ առանցքային բառերի որոնումը ձեզ թույլ կտա գտնել մի խումբ փաստաթղթեր, որոնք պարունակում են նմանատիպ իրավագիտական նյութ (Դատարանի պատճառաբանությունը և եզրակացությունները յուրաքանչյուր գործով ամփոփված են ըստ առանցքային բառերի): Յուրաքանչյուր գործի առանցքային բառերը կարելի է գտնել տվյալ փաստաթղթի մանրամասների թերթիկում: Բոլոր անհրաժեշտ պարզաբանումները կարելի է գտնել «HUDOC» համակարգի օգտագործման ձեռնարկում:

* Ուղեցույցի էլեկտրոնային տարբերակում ներկայացված հղումներով մեջբերվում է Դատարանի վճռի կամ որոշման անզլերեն կամ ֆրանսերեն (Դատարանի երկու պաշտոնական լեզուներ) տեքստը կամ Մարդու իրավունքների եվրոպական հանձնաժողովի («Հանձնաժողով») որոշումները կամ եզրակացությունները: Եթե գործի անվանումից հետո այլ նշում չի կատարվում, ապա մեջբերումը վերաբերում է Դատարանի որևէ պալատի կողմից ըստ էության կայացված վճռին: Եթե բերվում է «(որոշ.)» նշումը, ապա դրանով հղում է կատարվում Դատարանի որոշմանը, իսկ «[ՄՊ]» հապավումը նշանակում է, որ գործը քննվել է Մեծ պալատի կողմից:

I. Ընդհանուր նկատառումներ

Կոնվենցիայի 2-րդ հոդված

«1. Յուրաքանչյուրի կյանքի իրավունքը պաշտպանվում է օրենքով: Ոչ մեկին չի կարելի դիտավորությամբ զրկել կյանքից այլ կերպ, քան ի կատարումն դատարանի կայացրած դատավճռի՝ այն հանցագործության համար, որի կապակցությամբ օրենքով նախատեսված է այդ պատիժը:

2. Կյանքից զրկելը չի համարվում սույն հոդվածի խախտում, եթե այն հետևանք է ուժի գործադրման, ինչը բացարձակապես անհրաժեշտ է՝

ա. ցանկացած անձի անօրինական բռնությունից պաշտպանելու համար,

բ. օրինական ձեռքարկում իրականացնելու կամ օրինական հիմքերով կալանավորված անձի փախուստը կանխելու համար,

գ. խռովությունը կամ ապստամբությունը ճնշելու նպատակով օրենքին համապատասխան գործողություն ձեռնարկելու համար »:

«HUDOC» համակարգի առանցքային բառեր

Արտաքսում (2) – Արտահանձնում (2) – Դրական պարտավորություններ (2)

Կյանք (2-1) – Մահապատիժ (2-1), Օրենքով նախատեսված (2-1), Հասանելիություն (2-1), Կանխատեսելիություն (2-1), Չարաշահումներից պաշտպանող երաշխիքներ (2-1), Իրավասու դատարան (2-1) – Արդյունավետ քննություն (2-1)

Ուժի գործադրում (2-2) – Բացարձակապես անհրաժեշտ (2-2), Պաշտպանություն անօրինական բռնությունից (2-2), Իրականացնել օրինական ձեռքարկում (2-2), Փախուստը կանխել (2-2), Ճնշել խռովություն կամ ապստամբություն (2-2)

Ա. 2-րդ հոդվածի մեկնաբանություն

1. Դատարանի մեկնաբանությունը պետք է առաջնորդվի այն հանգամանքով, որ Կոնվենցիայի՝ որպես մարդկանց պաշտպանության գործիքի առարկան և նպատակն է

ընկալել և կիրառել Կոնվենցիայի դրույթները՝ դրա պահանջները հստակ և արդյունավետ դարձնելու նպատակով (*«Մրկ-Քենն և այլք ընդդեմ Միացյալ Թագավորության»*, § 146):

2. 2-րդ հոդվածը պատկանում է Կոնվենցիայի հիմնական հոդվածների թվին և 15-րդ հոդվածի իմաստով խաղաղ ժամանակներում դրանից որևէ շեղում չի թույլատրվում: 3-րդ հոդվածի համադրությամբ՝ այն ամրագրում է Եվրոպայի խորհուրդը կազմող ժողովրդավարական հասարակությունների հիմնարար արժեքներից մեկը (*«Ջուլիանին և Գաջոն ընդդեմ Բուալիայի»* [ՄՊ], § 174): Այս կարգավիճակով նշված հոդվածը պետք է լինի խիստ մեկնաբանության առարկա (*«Մրկ-Քենն և այլք ընդդեմ Միացյալ Թագավորության»*, § 147):

Բ. 2-րդ հոդվածից բխող պարտավորությունները պետության համար

3. 2-րդ հոդվածը իր մեջ ընդգրկում է երկու նյութական պարտավորություն, այն է՝ օրենքի ներքո կյանքի իրավունքը պաշտպանելու ընդհանուր պարտավորությունը և դիտավորյալ մահ պատճառելու արգելքը, որը սահմանափակվում է թվարկված բացառություններով (*«Բոսոն ընդդեմ Բուալիայի»* (որոշ.)): Հաշվի առնելով հոդվածի հիմնարար բնույթը՝ այն իր մեջ ընդգրկում է նաև իր նյութական բաղադրիչի խախտման վերաբերյալ պնդումները արդյունավետ հետաքննելու ընթացակարգային պարտավորություն (*«Արմանի Դա Սիլվան ընդդեմ Միացյալ Թագավորության»* [ՄՊ], § 229):

Գ. 2-րդ հոդվածի կիրառելիությունն այն դեպքերում, երբ դիմումատուն մազապուրծ է եղել մահվանից

4. Դատարանը բազմիցս ընդգծել է, որ Կոնվենցիայի 2-րդ հոդվածը կարող է արժարծվել, նույնիսկ եթե կյանքի իրավունքի նկատմամբ ոտնձգության մասին հայտարարած անձը չի մահացել: Մասնավորապես, Դատարանը նշում է, որ բացառիկ հանգամանքներում կախված կիրառված ուժի աստիճանից և տեսակից, ինչպես նաև վնասվածքների բնույթից, պետությունը ներկայացնող գործակալների կողմից ուժի կիրառումը, որը մահվան պատճառ չի դարձել, կարող է առաջացնել Կոնվենցիայի 2-րդ հոդվածի խախտում, եթե վերջիններիս վարքագիծն իր իսկ բնույթով լուրջ վտանգի տակ է դնում դիմումատուի կյանքը, նույնիսկ եթե վերջինս կենդանի է մնում (*«Մակարացիսն ընդդեմ Հունաստանի»* [ՄՊ], § 55, *«Սոարեն և այլք ընդդեմ Ռուսիայի»*, §§ 108-109 և *«Տրևալեցն ընդդեմ Բելգիայի»*, §§ 55-61): Մնացած բոլոր գործերում, երբ անձինք հարձակման և վատ վերաբերմունքի են ենթարկվել պետության գործակալների կողմից, նրանց բողոքներն ավելի շուտ կքննվեն Կոնվենցիայի 3-րդ հոդվածի հիմքերով (*«Մակարացիսն ընդդեմ Հունաստանի»* [ՄՊ], § 51, *«Իլհանն ընդդեմ Թուրքիայի»* [ՄՊ], § 76): Այն դեպքերում, երբ դիմումատուները վերապրել են պետությունը չներկայացնող դերակատարների պոտենցիալ մահաբեր հարձակում, Դատարանը որդեգրում է նմանատիպ մոտեցում, ինչ պետության գործակալների կողմից ուժի օգտագործման պարագայում (*«Յոտովան ընդդեմ Բուլղարիայի»*, § 69):

5. Դատարանը կարծում է նաև, որ ծանր հիվանդություններ ունեցող անձանց բողոքներն ընդգրկվում են Կոնվենցիայի 2-րդ հոդվածի շրջանակներում, եթե հանգամանքների բերումով դրանք կարող է առաջացնել պետության պատասխանատվությունը (*«Լ.Յ.Բ-ն ընդդեմ Միացյալ Թագավորության»*, §§ 36-41, լեյկեմիայով տառապող դիմումատուի վերաբերյալ, *«Գ.Ն.-ն և այլք ընդդեմ Բուալիայի»*, պոտենցիալ մահաբեր հիվանդություն՝ հեպատիտ ունեցող դիմումատուների վերաբերյալ, *«Հրիստոզովը և այլք ընդդեմ*

Բուլղարիայի», տերմինալ փուլում քաղցկեղի տարբեր ձևեր ունեցող դիմումատուների վերաբերյալ, *«Օյան ընդդեմ Թուրքիայի»* գործը, որի շրջանակներում դիմումատուն վարակվել էր ՄԻԱՎ-ի վիրուսով, վտանգելով իր կյանքը, կամ *հակառակը՝ «Բրինքաթը և այլք ընդդեմ Մայթայի»* գործի § 84, որում Դատարանը գտավ, որ 2-րդ հոդվածը չի կիրառվում դիմումատուների պարագայում, ովքեր նավերի վերանորոգման պետական ձեռնարկության նախկին աշխատակիցներ էին և ենթարկվել էին ասբեստի ազդեցության, քանի որ նրանց առողջական վիճակը չէր հանդիսանում ասբեստի ազդեցությանը ենթարկվելու հետևանքով առաջացած քաղցկեղի հազվադեպ տեսակի ախտորոշման անխուսափելի նախանշան, ոչ էլ վտանգ էր ներկայացնում իրենց կյանքի համար):

6. Դատարանը նաև ըստ էության քննել է 2-րդ հոդվածի հիմքով ներկայացված բողոքներն այն անձանցից, ովքեր պնդում էին, որ իրենց կյանքը գտնվում էր վտանգի տակ, մինչդեռ նման բնույթի ոչ մի վտանգ դեռևս իրեն չէր դրսևորվել այն դեպքերում, երբ Դատարանը համոզված էր, որ դիմումատուների կյանքը լրջորեն վտանգված է եղել(*«Ռ.Ռ.-ն և այլք ընդդեմ Հունգարիայի»* §§ 26-32 գործ, որում դիմումատուները բողոքում էին վկաների պաշտպանության ծրագրից հեռացվելու կապակցությամբ, կամ *հակառակը՝ «Սելահաթին Դեմիրթաշն ընդդեմ Թուրքիայի»*, §§ 30-36 գործ, որում դիմումատուն պնդում էր, որ մամուլի մի հոդված վտանգի տակ էր դրել իր կյանքը):

7. Միննույն ժամանակ, պոտենցիալ մահաբեր դժբախտ պատահարների (*«Ալքինն ընդդեմ Թուրքիայի»*, § 29, *«Չաքմակչին ընդդեմ Թուրքիայի»* (որոշ.), § 32, *«Ֆերգեչն ընդդեմ Խորվաթիայի»*, §§ 21-24, *«Կոտելնիկովն ընդդեմ Ռուսաստանի»*, § 98, *«Չավիտ Թինարլիօղլուն ընդդեմ Թուրքիայի»*, § 67), կամ բնապահպանական աղետների վերաբերյալ գործերում (*«Կոյադենկոն և այլք ընդդեմ Ռուսաստանի»*, § 155), Դատարանը 2-րդ հոդվածի հիմքերով քննել է բարեբախտաբար կենդանի մնացած դիմումատուների բողոքները:

II. Կյանքի պաշտպանություն

<p>Կոնվենցիայի 2-րդ հոդվածի 1-ին մաս</p> <p>« 1. Յուրաքանչյուրի կյանքի իրավունքը պաշտպանվում է օրենքով: (...) »</p>
<p>«HUDOC» համակարգի առանցքային բառեր</p> <p>Դրական պարտավորություններ (2) – Կյանք (2-1)</p>

Ա. Պետության դրական պարտականությունների բնույթը

8. 2-րդ հոդվածի 1-ին մասը պարտադրում է պետություններին ոչ միայն զերծ մնալ կամավոր և անկանոն եղանակով մահ պատճառելուց, այլև անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել իր իրավասության ներքո գտնվող անձանց կյանքը պաշտպանելու համար (*«Վալենտին Կամպենուի անվան իրավաբանական ռեսուրսների կենտրոնն ընդդեմ Ռումինիայի»* [ՄՊ], § 130): Առհասարակ, այս դրական պարտավորությունն ունի երկու հայեցակետ, այն է՝ ա) ստեղծել համապատասխան նորմատիվային դաշտ և բ) կանխարգելիչ կարգով ձեռնարկել գործնական բնույթի միջոցներ:

Բ. Պետության դրական պարտականությունների տիրույթը

9. Դատարանը համարում է, որ 2-րդ հոդվածով պետությունների վրա դրված իրենց իրավասության ներքո գտնվող անձանց կյանքի պաշտպանության համար անհրաժեշտ միջոցներ ձեռնարկելու պարտականությունը կիրառվում է ցանկացած գործունեության շրջանակներում՝ անկախ դրա պետական կամ ոչ պետական լինելու հանգամանքից, որը կարող է կապված լինել կյանքի իրավունքի հետ (*«Վալենտին Կամպենուի անվան իրավաբանական ռեսուրսների կենտրոնն ընդդեմ Ռուսիայի»* [ՄՊ], § 130):

10. Այսպիսով, Դատարանը գտավ, որ 2-րդ հոդվածի ներքո դրական պարտավորություններ են դրվում տարբեր ոլորտներում, օրինակ.

- առողջապահություն (*«Կալվելին և Չիլյոն ընդդեմ Իտալիայի»* [ՄՊ], *«Վոն ընդդեմ Ֆրանսիայի»* [ՄՊ]),
- վտանգավոր գործունեություն, մասնավորապես՝ արդյունաբերական կամ բնապահպանական աղետները (<http://hudoc.echr.coe.int/fre?i=001-67614> [ՄՊ], *«Բուդանան և այլք ընդդեմ Ռուսաստանի»*, *«Կոյադենկոն և այլք ընդդեմ Ռուսաստանի»*, *«Բրինքաթը և այլք ընդդեմ Մալթայի»*, *«Մ. Օզելը և այլք ընդդեմ Թուրքիայի»*),
- միջադեպերը, որոնք տեղի են ունենում նավի վրա (*«Լըրելը և այլք ընդդեմ Ֆրանսիայի»* (որոշ.)), գնացքում (*«Քալենդերն ընդդեմ Թուրքիայի»*), շինհրապարակում (*«Պերեյրա Էնրիկեսն ընդդեմ Լյուքսեմբուրգի»*), խաղահրապարակում (*«Կոչեցկին ընդդեմ նախկին Հարավսլավիայի Մակեդոնիայի Հանրապետության»* (որոշ.), § 26) կամ դպրոցական հաստատությունում (*«Բլբեյի Քեմալօղլուն և Մերիյե Քեմալօղլուն ընդդեմ Թուրքիայի»*),
- ճանապարհային անվտանգությունը (*«Ռաջկովսկան ընդդեմ Լեհաստանի»* (որոշ.), *«Աննա Տոդորովան ընդդեմ Բուլղարիայի»*), արտակարգ իրավիճակներում մատուցվող ծառայությունները (*«Ֆուրդիկն ընդդեմ Սլովակիայի»* (որոշ.)) կամ խորջրյա սուզման աշխատանքները (*«Վիլնեսը և այլք ընդդեմ Նորվեգիայի»*),
- պետական հաստատություններում պահվող խոցելի անձանց մատուցվող բժշկական խնամքի և օգնության ծառայությունները (*«Նենչևան և այլք ընդդեմ Բուլղարիայի»*, *«Վալենտին Կամպենուի անվան իրավաբանական ռեսուրսների կենտրոնն ընդդեմ Ռուսիայի»* [ՄՊ]),
- երբ պետությունը բավարար չափով չի ապահովել զինվորականների կողմից ականապատված գոտու անվտանգությունը (*«Փաշա Ե Էրբան Էրոլն ընդդեմ Թուրքիայի»*, *«Ալբեկովը և այլք ընդդեմ Ռուսաստանի»*) կամ հրաձգության մի գոտու անվտանգությունը, որում եղել է չպայթած զինամթերք (*«Օրուքն ընդդեմ Թուրքիայի»*), կամ երբ պետությունը բավարար արագությամբ չի արձագանքել կյանքի համար վտանգավոր հանգամանքներում անհետացման դեպքին (*«Օսմանօղլուն ընդդեմ Թուրքիայի»*, *«Դոդովն ընդդեմ Բուլղարիայի»*):

11. Մի գործի շրջանակներում, երբ դիմումատուի ամուսինը մահացել էր խնամքի կենտրոնի վրա ընկած ծառի հարվածից, Դատարանը գտել է, որ կյանքի իրավունքը պահպանելու պարտավորության ներքո պետությունը պետք է ողջամիտ միջոցների դիմեր իր հանրային վայրերում գտնվող անհատների անվտանգությունը ապահովելու համար (*«Սյեչոնսկան ընդդեմ Լեհաստանի»*, § 67):

12. Այդուհանդերձ, Դատարանը բազմիցս ընդգծել է, որ Կոնվենցիայի 2-րդ հոդվածը չի կարող մեկնաբանվել որպես ցանկացած անձի համար կյանքի իրավունքի առումով վտանգ ներկայացնող գործունեության բոլոր ոլորտներում անվտանգության բացարձակ մակարդակի երաշխիք, մասնավորապես, երբ խնդրո առարկա անձը որոշ չափով ինքն է պատասխանատու իրեն չարդարացված վտանգի ենթարկած դժբախտ պատահարի համար (*«Մոլին ընդդեմ Ռումինիայի»* (որոշ.), § 44, *«Կոսևան ընդդեմ Բուլղարիայի»* (որոշ.), *«Գյոթդեմիրն ընդդեմ Թուրքիայի»* (որոշ.), § 17, *«Չաքմաքն ընդդեմ Թուրքիայի»* (որոշ.)):

Գ. Կյանքի պաշտպանությունը՝ ըստ համատեքստի

13. Ինչպես նշվել է վերևում, պետության դրական պարտավորությունները բխում են տարբեր համատեքստերից, օրինակ՝ ստորև ներկայացված դեպքերում:

1. Անձանց պաշտպանությունը պետությունը չներկայացնող դերակատարների կողմից մահաբեր ուժի գործադրումից

14. Դատարանը համարել է, որ որոշ հստակ սահմանված հանգամանքներում Կոնվենցիայի 2-րդ հոդվածը իշխանությունների համար ենթադրում է գործնական բնույթի միջոցների կանխարգելիչ կիրառման դրական պարտավորություն այն անհատին պաշտպանելու համար, ում կյանքը վտանգված է այլոց քրեական գործողություններից (*«Օսմանն ընդդեմ Միացյալ Թագավորության»*, § 115, *«Բրանկո Թոմաշիչը և այլք ընդդեմ Խորվաթիայի»*, § 50):

15. Այդուհանդերձ, մտապահելով ժամանակակից հասարակությունում ոստիկանության գործառնությունների կատարման հետ կապված դժվարությունները, ինչպես նաև ունեցած առաջնահերթություններից և միջոցներից բխող օպերատիվ որոշումները՝ հարկավոր է հստակ միջոցներ ձեռնարկելու պարտավորությունը մեկնաբանել այնպես, որ իրավասու մարմինների վրա չդրվի անհաղթահարելի կամ ավելորդ բեռ: Հետևաբար, կյանքի դեմ ուղղված ամեն ենթադրյալ վտանգ իրավասու մարմիններին չի պարտավորեցնում Կոնվենցիայի իմաստով ձեռնարկել այս սպառնալիքի իրականացումը կանխող կոնկրետ միջոցներ (*«Օսմանն ընդդեմ Միացյալ Թագավորության»*, § 116, *«Չորեֆտակիսը և Չորեֆտակին ընդդեմ Հունաստանի»*, § 46):

16. Այս առումով Դատարանը նաև հաշվի է առնում այն հանգամանքն ապահովելու անհրաժեշտությունը, որ ոստիկանությունն իրացնում է հանցավորությունը զսպելու և կանխելու իր լիազորությունները՝ լիարժեք կերպով հարգելով օրինական ընթացակարգերը, ինչպես նաև օրենքի ուժով քրեական հետաքննությունների գործողությունների և արդարադատության առջև հանցագործներին կանգնեցնելու իր գործողությունների տիրույթը սահմանափակող այլ երաշխիքները, այդ թվում՝ Կոնվենցիայի 5-րդ և 8-րդ հոդվածում զետեղված երաշխիքները (*«Օսմանն ընդդեմ Միացյալ Թագավորության»*, § 116):

17. Դրական պարտավորության առաջացման համար պետք է ապացուցվի, որ տվյալ պահին իրավասու մարմիններն իմացել են կամ պետք է իմանային, որ մեկ կամ մի քանի անձանց կյանքն իրական և անմիջական եղանակով վտանգված է եղել երրորդ անձի հանցավոր գործողությունների բերումով և այդ իրավասու մարմիններն իրենց լիազորությունների շրջանակներում չեն ձեռնարկել այնպիսի միջոցներ, որոնք ողջամիտ տեսանկյունից կարող էին անկասկած վերացնել նման վտանգը (*«Մաստրոմատենոն*

ընդդեմ Իտալիայի» [ՄՊ], § 68, *«Փոլ և Օդրի Էդվարդսն ընդդեմ Միացյալ Թագավորության»*, § 55):

18. Դատարանի տեսանկյունից բավարար է, որ դիմումատու կարողանա ապացուցել, որ իրավասու մարմինները չեն արել այն ամենը, ինչ կարելի էր ողջամտորեն ակնկալել վերջիններից կյանքին սպառնացող որոշակի և անմիջական վտանգի նյութականացումը կանխելու համար, որի մասին նրանք իմացել են կամ պետք է իմանային: Այստեղ խոսքը գնում է մի հարցի մասին, որի պատասխանը կախված է տվյալ գործի շրջանակներում առկա բոլոր հանգամանքներից (*«Օսմանն ընդդեմ Միացյալ Թագավորության»*, § 116):

19. Օրինակ, հետևյալ ոլորտներում Դատարանը համարել է, որ պետությունը պարտավորություն է կրել գործնական բնույթի կանխարգելիչ քայլեր ձեռնարկել նախապես որպես մահաբեր գործողության հնարավոր թիրախ հայտնի մեկ կամ մի քանի անձանց պաշտպանելու համար.

- կալանավորի սպանություն (*«Փոլ և Օդրի Էդվարդսն ընդդեմ Միացյալ Թագավորության»*, § 57),
- ընտանեկան բռնություն (*«Բրանկո Թոմաշիչը և այլք ընդդեմ Խորվաթիայի»*, §§ 52-53, *«Օփուզն ընդդեմ Թուրքիայի»*, § 129),
- քրեական դատավարության ընթացքում վկայի սպանություն (*«Վան Քոլլն ընդդեմ Միացյալ Թագավորության»*, § 88),
- սպանություններ հակամարտության գոտում (*«Քիլիչն ընդդեմ Թուրքիայի»*, § 63, *«Մահմուտ Քայան ընդդեմ Թուրքիայի»*, § 88),
- գորակոչիկի սպանություն զինվորական ծառայության ընթացքում (*«Յարանսուն և այլք ընդդեմ Թուրքիայի»*, § 91):

20. Դատարանը նաև կիրառել է վերոնշյալ սկզբունքները, երբ գոյություն է ունեցել որոշ հստակ ոլորտներում բնակչությունը պաշտպանելու ընդհանուր պարտավորություն, օրինակ.

- արձակուրդում գտնվող կամ մասնակի ազատության ռեժիմում պատիժը կրող կալանավորի կողմից կատարված սպանություն (*«Մաստրոմատեոն ընդդեմ Իտալիայի»* [ՄՊ], § 69),
- պայմանական ազատության մեջ գտնվող և սպանության համար մեղավոր ճանաչված անձի կողմից կատարված սպանություն (*«Չորեֆտակիսը և Չորեֆտակին ընդդեմ Հունաստանի»*, §§ 48-49),
- աշխատանքից դուրս ոստիկանի կողմից կատարված սպանություն (*«Գորովենկին և Բուզարան ընդդեմ Ուկրաինայի»*, § 32),
- փաստաբանի սպանությունն իր հաճախորդի հոգեկան խնդիրներ ունեցող ամուսնու կողմից (*«Բլջակաջը և այլք ընդդեմ Խորվաթիայի»*, § 121),
- ահաբեկիչների կողմից մեծ քանակությամբ պատանդների վերցման ընթացքում կատարված սպանություններ (*«Տագանան և այլք ընդդեմ Ռուսաստանի»*, §§ 482-492, *հակառակը՝ «Ֆինոգենովը և այլք ընդդեմ Ռուսաստանի»* (որոշ.), § 173):

2. Անձանց պաշտպանությունը հենց իրենցից

21. Դատարանը համարել է, որ 2-րդ հոդվածը որոշ հստակ սահմանված հանգամանքներում կարող է իրավասու մարմինների վրա պարտավորություն դնել

ձեռնարկել գործնական բնույթի կանխարգելիչ միջոցներ անձին ինքն իրենից պաշտպանելու համար (*«Ռենդոլդեն ընդդեմ Ֆրանսիայի»*, § 81):

22. Մասնավորապես, կալանավորված անձինք գտնվում են խոցելի վիճակում և իրավասու մարմինները կրում են նրանց պաշտպանելու պարտավորություն (*«Քինանն ընդդեմ Միացյալ Թագավորության»*, § 91): Նույն կերպ, քրեակատարողական մարմիններն իրենց պարտականությունները պետք է կատարեն խնդրո առարկա անձի իրավունքների և ազատությունների հետ համատեղելի եղանակով: Կարող են ձեռնարկվել ընդհանուր և նախագոյնական բնույթի միջոցներ, որոնք կոչված կլինեն նվազեցնել ինքնավնասման վտանգները՝ չխախտելով անհատի անկախությունը: Ինչ վերաբերում է այն հարցին, թե արդյոք հարկավոր է որևէ կալանավորի նկատմամբ ձեռնարկել ավելի խիստ միջոցներ, և արդյոք ողջամիտ է դրանք կիրառել, ապա դա կախված է գործի հանգամանքներից (*«Ռենդոլդեն ընդդեմ Ֆրանսիայի»*, § 83):

23. Նույն տրամաբանությամբ, երբ խոսքը գնում է իրենց պարտադիր զինվորական ծառայություն կատարող անձանց մասին, Դատարանն ընդգծել է, որ կալանավորների օրինակով՝ նրանք գտնվում են առանձին իրավասու մարմինների հսկողության ներքո և վերջիններս կրում են նրանց պաշտպանելու պարտավորություն (*«Բեքերն ընդդեմ Թուրքիայի»*, §§ 41-42, *«Մոսենձն ընդդեմ Ուկրաինայի»*, § 92):

24. Հոգեկան հիվանդություններ ունեցող անձինք համարվում են առանձնապես խոցելի վիճակում գտնվող խումբ, որը պետք է պաշտպանվի ինքնավնասումից (*«Ռենդոլդեն ընդդեմ Ֆրանսիայի»*, § 84):

25. Վերջին հաշվով, դրական պարտավորության առաջացման համար, երբ խնդրո առարկա վտանգը բխում է հենց շահագրգիռ անձից, օրինակ՝ ինքնասպանությունը կալանքի տակ, պետք է ապացուցվի, որ իրավասու մարմինները տվյալ պահին իմացել են կամ պետք է իմանային, որ իրենց հայտնի անձի կյանքը գտնվում էր իրական և անմիջական վտանգի տակ և եթե այդպես է, ապա նման մարմինները չեն ձեռնարկել իրենց լիազորությունների շրջանակներում այնպիսի միջոցներ, որոնք ողջամիտ տեսանկյունից կարող էին անկասկած վերացնել նման վտանգը (*«Յանգերն ընդդեմ Միացյալ Թագավորության»* (որոշ.)):

26. Բացի այդ, Դատարանը հիշեցնում է նաև, որ կալանքի տակ գտնվող անձանց առողջությունն ու բարեկեցությունը պաշտպանելու պարտավորությունը ակնհայտորեն ենթադրում է ձերբակալված կամ կալանավորված անձանց կյանքը ցանկացած կանխատեսելի վտանգից պաշտպանելու պարտավորություն (*«Յերեսյաշովան և Պեչովան ընդդեմ Չեխական»* (վերանայված), § 117, *«Կելերն ընդդեմ Ռուսաստանի»*, § 88):

27. Գործնական բնույթի կանխարգելիչ միջոցներ ձեռնարկելու պարտավորությունը հիմնականում բխում է հետևյալ ոլորտներից.

- Բանտարկություն կամ կալանք (*«Տրուբնիկովն ընդդեմ Ռուսաստանի»*, *«Արդողդուն ընդդեմ Թուրքիայի»*, *«Դե Դոնդերը և Դե Քլիպելն ընդդեմ Բելգիայի»*, *«Քեթթերն ընդդեմ Ֆրանսիայի»*, *«Վոլկն ընդդեմ Սլովենիայի»*, *«Միտիչն ընդդեմ Սերբիայի»*, *«Կելերն ընդդեմ Ռուսաստանի»*),
- պարտադիր զինվորական ծառայություն (*«Քիլինչը և այլք ընդդեմ Թուրքիայի»*, *«Աթամանն ընդդեմ Թուրքիայի»*, *«Պերնեդենցն ընդդեմ Ռուսաստանի»*, *«Մալիք Բարայնն ընդդեմ Ադրբեջանի»*),
- կամավոր կամ պարտադիր տեղափոխում հոգեբուժական հաստատություն (*«Ռեյնոլդսն ընդդեմ Միացյալ Թագավորության»*, *«Հիլերն ընդդեմ Ավստրիայի»*):

28. Մի գործում, որում դիմումատուի տիկինն ինքնահրկիզում էր կատարել հարկադիր վտարման դեմ բողոքելու համար, Դատարանը համարեց, որ երբ որևէ անհատ սպառնում է ինքնասպանություն գործել, պետության գործակալների ներկայությամբ և իմացությամբ, և ավելին՝ երբ այդ սպառնալիքն ուղղակիորեն բխում է պետության գործակալների գործողություններից կամ պահանջներից հուզական արձագանքից, վերջիններս պետք է նման սպառնալիքը դիտարկեն ամենայն լրջությամբ՝ այն համարելով տվյալ անձի կյանքին սպառնացող անմիջական վտանգ՝ որքան էլ որ այն անակնկալ լինի: Նման դեպքերում, եթե պետության գործակալները նման վտանգի մասին տեղեկացված են եղել բավարար ժամանակ առաջ, 2-րդ հոդվածի ներքո նրանց վրա դրվում է դրական պարտավորություն կանխել այդ վտանգի իրականացումը՝ գործի դնելով տվյալ հանգամանքներում ցանկացած ողջամիտ և իրատեսական միջոց (*«Միքայիլ Մամադովն ընդդեմ Ադրբեջանի»*, § 115):

3. Անձանց պաշտպանությունը բնապահպանական և արդյունաբերական աղետներից

29. Արդյունաբերական գործունեության ոլորտում, որն իր իսկ բնույթով Դատարանը վտանգավոր է համարում, Դատարանը առանձնապես շեշտադրում է այնպիսի կանոնակարգի գոյությունը, որը հարմարեցված կլինի խնդրո առարկա գործունեության առանձնահատկություններին, մասնավորապես, երբ խոսքը գնում է մարդկանց կյանքի համար նման գործունեությունից բխող վտանգի մասին: Դատարանը համարում է, որ նման կանոնակարգով պետք է կարգավորվի խնդրո առարկա գործունեության լիազորումը, գործարկումը, շահագործումը, անվտանգությունը և վերահսկողությունը, ինչպես նաև պետք է այդ գործունեության հետ կապված ցանկացած անձի վրա դնի պարտավորություն ձեռնարկել գործնական բնույթի միջոցներ, որոնք կոչված կլինեն ապահովել այն անհատների իրական պաշտպանությունը, ում կյանքը կարող է հայտնվել խնդրո առարկա ոլորտին բնորոշ վտանգների ազդեցության տակ:

30. Նման կանխարգելիչ միջոցների շարքում առանձնակի կարևորություն պետք է տրվի իրազեկված լինելու հանրության իրավունքին, որը բխում է Կոնվենցիայի ներքո գործող մարմինների նախադեպային իրավունքից, ընդ որում՝ տվյալ դեպքում գործող օրենսդրական նորմերը պետք է, ի թիվս այլոց, նախատեսեն այնպիսի պատշաճ ընթացակարգեր, որոնցով հաշվի կառնվեն խնդրո առարկա գործունեության տեխնիկական հայեցակետերը և թույլ կտան որոշել դրա թերությունները, ինչպես նաև այն սխալները, որոնք կարող են կատարվել այս առումով տարբեր աստիճանների պատասխանատուների կողմից (*«Օներյիլդիզն ընդդեմ Թուրքիայի»* [ՄՊ], § 90, *«Բուդանան և այլք ընդդեմ Ռուսաստանի»*, § 132, *«Կոլյադենկոն և այլք ընդդեմ Ռուսաստանի»*, § 159):

31. Ինչ վերաբերում է հստակ միջոցների ընտրությանը, ապա Դատարանը շարունակաբար հիշեցնում է, որ այն դեպքերում, երբ Պայմանավորվող պետությունը պարտավոր է ձեռնարկել դրական միջոցներ, դրանց ընտրությունը սկզբունքորեն գտնվում է այդ պետության սեփական հայեցողության լուսանցքի շրջանակներում: Հաշվի առնելով Կոնվենցիայի ներքո պաշտպանված իրավունքների երաշխավորման համար պատշաճ միջոցների բազմազանությունը, այն հանգամանքը, որ խնդրո առարկա պետությունը չի ձեռնարկել իր ներպետական իրավունքով նախատեսված որևէ հստակ միջոց, չի խանգարում, որպեսզի վերջինս կատարի իր դրական պարտավորությունը որևէ այլ եղանակով: Այս առումով չի կարելի իրավասու մարմինների վրա դնել անհատթահարելի և ավելորդ բեռ՝ անտեսելով այն օպերատիվ որոշումները, որոնք նա պետք է կայացնի իր առաջնահերթությունների և միջոցների առումով. նշվածը բխում է

սեփական հայեցողության լայն լուսանցքի իրավունքից, որից օգտվում է պետությունը բարդ սոցիալական և տեխնիկական ոլորտներում, ինչպես արդեն բազմիցս նշվել է Դատարանի կողմից (*«Բուդանան և այլք ընդդեմ Ռուսաստանի»*, §§ 134-135, *«Վիլնեյսը և այլք ընդդեմ Նորվեգիայի»*, § 220, *«Բրինքաթը և այլք ընդդեմ Մալթայի»*, § 101):

32. Դատարանը գնահատում է, թե արդյոք պատասխանող պետությունը կատարել է իր դրական պարտավորությունը՝ հաշվի առնելով տվյալ դեպքում առկա մասնավոր հանգամանքները, ինչպիսիք են՝ իրավասու մարմինների գործողությունների կամ անգործության համապատասխանությունը ներպետական իրավունքին, որոշումների կայացման ազգային գործընթացը, որն ընդգրկում է պատշաճ քննությունների և ուսումնասիրությունների իրականացում, ինչպես նաև հարցի բարդությունը՝ հատկապես, երբ խոսքը գնում է Կոնվենցիայի ներքո պաշտպանված և իրար հակասող շահերի մասին: Մասնավոր հանգամանքների բերումով պետության վրա դրված դրական պարտավորությունների շրջանակը պայմանավորված է սպառնալիքի ծագմամբ, ինչպես նաև այն միջոցով, որի կիրառման դեպքում համապատասխան վտանգները կարող են նվազեցվել (*«Բուդանան և այլք ընդդեմ Ռուսաստանի»*, §§ 136-137, *«Կոլյադենկոն և այլք ընդդեմ Ռուսաստանի»*, § 161):

33. Այն պահից ի վեր, երբ պետությունը ձեռնարկում կամ կազմակերպում է վտանգավոր գործունեություն կամ լիազորում է դրա իրականացումը, այն պետք է բավարար կանոնակարգի և վերահսկողության միջոցով ստուգի, որ տվյալ վտանգը հասցրած է նվազագույն ողջամիտ մակարդակի (*«Մուլխբախիցն ընդդեմ Սերբիայի»*, § 126): Եթե չնայած ամեն ինչին, նման գործունեությունը վնաս է պատճառում, ապա նման վնասը դիտարկվում է որպես պետության դրական պարտավորությունների խախտում, միայն եթե կանոնակարգը կամ վերահսկողությունը բավարար չեն եղել, այլ ոչ թե, երբ պատճառված վնասի հիմքում ընկած է եղել որևէ անհատի անփութությունը կամ դժբախտ իրադարձությունների հաջորդականությունը (*«Ստոյանովին ընդդեմ Բուլղարիայի»*, § 61):

34. Բնապահպանական աղետների ոլորտում, որտեղ պետությունը չունի հսկողություն իրականացնելու հնարավորություն, գործնական բնույթի կանխարգելիչ միջոցներ ձեռնարկելու վերջինիս պարտավորությունը կայանում է նրանում, որ ձեռնարկել այնպիսի միջոցներ, որոնք կուժեղացնեն նման տեսակի ուժգին և անակնկալ բնական երևույթներին հակազդելու իր կարողությունները (*«Ս. Օգելը և այլք ընդդեմ Թուրքիայի»*, § 173):

35. Բնապահպանական կամ արդյունաբերական աղետներից մարդկանց պաշտպանելու պարտավորությունը պատասխանող պետության կողմից չկատարելու դեպքերը Դատարանն իր վերլուծությամբ արձանագրել է հետևյալ հանգամանքներում.

- քաղաքի տնտեսաբանների մոտակայքում գտնվող աղբավայրում պատահական պայթյունից առաջացած մահվան դեպքեր (*«Օնեյիլիդիզն ընդդեմ Թուրքիայի»* [ՄՊ]),
- սողանքի հետևանքով առաջացած մահվան դեպքեր, որոնք կանխատեսելի սխալ էին իրավասու մարմինների կողմից, որոնք իրականացրել էին քաղաքաշինության և օգնության ոլորտում որոշակի քաղաքականություններ (*«Բուդանան և այլք ընդդեմ Ռուսաստանի»*),
- լուրջ վտանգ կյանքի համար, որը առաջացել էր ջրամբարից ջրերի շտապ զանգվածային հեռացման հետևանքով ստեղծված մեծ հանկարծակի ջրհեղեղների հետևանքով (*«Կոլյադենկոն և այլք ընդդեմ Ռուսաստանի»*),

- պետական նավաշինարանում երկար ժամանակ ապրեստի ազդեցության հետևանքով առաջացած մահվան դեպք (*«Բրինձաթը և այլք ընդդեմ Մայթայի»*):

36. Փոխարենը՝ *«Վիլնեսը և այլք ընդդեմ Նորվեգիայի»* գործով, որը վերաբերում էր Նորվեգիայի մայրցամաքային շելֆի վրա հորատման աշխատանքներ իրականացնող նավթահան ընկերությունների կողմից իրականացված սուզման, այդ թվում՝ փորձնական սուզման աշխատանքների արդյունքում հաշմանդամ դարձած անձանց, Դատարանը համարեց, որ ձեռնարկելով միջոցների մի լայն շրջանակ, պատասխանող պետությունը ջանք է գործադրել Հյուսիսային ծովում սուզման աշխատանքներ իրականացնող ջրասուզակների առողջության և անվտանգության պաշտպանությունն ապահովելու համար: Վերոհիշյալի հիման վրա Դատարանը եզրակացրել է, որ Կոնվենցիայի 2-րդ հոդվածի խախտում տեղի չի ունեցել:

4. Անձանց պաշտպանությունն առողջապահության ոլորտում

ա. Բնակչություն՝ ընդհանուր առմամբ

37. Առողջապահության ոլորտում դրական պարտավորությունները պետության վրա դնում են այնպիսի նորմատիվային դաշտ ստեղծելու պարտավորություն, որի ներքո մասնավոր և պետական հիվանդանոցների վրա դրվի հիվանդների կյանքի պաշտպանության ապահովմանն ուղղված միջոցներ ձեռնարկելու պարտավորություն (*«Կավվելին և Չիլոն ընդդեմ Իտալիայի»* [ՄՊ], § 49, *«Վոն ընդդեմ Ֆրանսիայի»* [ՄՊ], § 89, *«Լոպես դե Սուսա Ֆերնանդեսն ընդդեմ Պորտուգալիայի»* [ՄՊ], § 166):

38. Այս առումով, անդամ պետությունների կողմից կանոնակարգման այս պարտավորությունը պետք է ընկալվի լայն իմաստով, այն է՝ ներառելով դրանում նորմատիվային դաշտի լավ աշխատանք ապահովելու պարտավորություն: Հետևաբար, պետությունները նաև պարտավոր են անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել, որպեսզի ապահովեն իրենց կողմից սահմանված կանոնների իրականացումը, մասնավորապես՝ պետք է ձեռնարկվեն վերահսկողության և կիրառման միջոցներ (*«Լոպես դե Սուսա Ֆերնանդեսն ընդդեմ Պորտուգալիայի»* [ՄՊ], § 190):

39. Այդուհանդերձ, այն հարցը, թե արդյոք պետությունը խախտել է կանոնակարգելու իր պարտավորությունը, պահանջում է ենթադրյալ թերությունների հստակ և ոչ վերացական գնահատում: Հետևաբար, այն պարզ հանգամանքը, որ նորմատիվային դաշտը որոշ առումներով կարող է թերի լինել, ինքնին բավարար չէ Կոնվենցիայի 2-րդ հոդվածի տեսանկյունից հարց բարձրացնելու համար: Այդուհանդերձ, հարկավոր է ապացուցել, որ տվյալ թերությունը վնաս է հասցրել հիվանդին (*«Լոպես դե Սուսա Ֆերնանդեսն ընդդեմ Պորտուգալիայի»* [ՄՊ], § 188):

40. Նույնիսկ, երբ հաստատվում է բժշկական անփութության փաստը, Դատարանը սովորաբար եզրակացնում է 2-րդ հոդվածի նյութական հայեցակետի խախտում տեղի ունենալու մասին, միայն եթե կիրառելի օրենսդրական դրույթը պատշաճ կերպով չի պաշտպանում հիվանդի կյանքը (*«Լոպես դե Սուսա Ֆերնանդեսն ընդդեմ Պորտուգալիայի»* [ՄՊ], § 187): Այս առումով Դատարանը համարում է, որ քանի դեռ Պայմանավորվող պետությունն անհրաժեշտ միջոցներ է ձեռնարկել բուժաշխատողների որակավորման բարձր մակարդակն ապահովելու և հիվանդների պաշտպանությունը երաշխավորելու համար, չի կարելի ընդունել, որ այնպիսի հարցերը, ինչպիսիք են՝ բուժաշխատողի կողմից դատողության սխալը կամ հիվանդի բուժման շրջանակներում բուժաշխատողների միջև վատ համակարգումը, ինքնին բավարար են Կոնվենցիայի 2-րդ հոդվածի դրույթներով կյանքի իրավունքը պաշտպանելու դրական պարտավորության

ներքո Պայմանավորվող պետությանը պատասխանատվության ենթարկելու համար *«Փաուլն ընդդեմ Միացյալ Թագավորության»* (որոշ.), *«Դոդոլն ընդդեմ Բուլղարիայի»*, § 82, *«Կուդրան ընդդեմ Խորվաթիայի»*, § 102, *«Լոպես դե Սուսա Ֆերնանդեսն ընդդեմ Պորտուգալիայի»* [ՄՊ], § 187):

41. Այդուհանդերձ, չի բացառվում, որ առողջապահական քաղաքականությունների շրջանակներում իրավասու մարմինների գործողություններն ու անգործությունը կարող են որոշակի հանգամանքներում առաջացնել վերջիններիս պատասխանատվությունը 2-րդ հոդվածի նյութական հայեցակետի տեսանկյունից (*«Փաուլն ընդդեմ Միացյալ Թագավորության»* (որոշ.)), և որ նման հարց կարող է առաջանալ Կոնվենցիայի 2-րդ հոդվածի տեսանկյունից, եթե ապացուցվի, որ Պայմանավորվող պետության իրավասու մարմինները վտանգի են ենթարկել որևէ անձի կյանքը՝ վերջինիս հրաժարվելով մատուցել բժշկական այն օգնությունը, որը պարտավորվել են մատուցել ողջ բնակչությանը (*«Կիպրոսն ընդդեմ Թուրքիայի»* [ՄՊ], § 219, *«Հրիստոզովը և այլք ընդդեմ Բուլղարիայի»*, § 106):

42. Խիստ բացառիկ երկու դեպքերում Դատարանն ընդունել է, որ 2-րդ հոդվածի նյութական հայեցակետի տեսանկյունից պետության պատասխանատվությունն առաջացել է առողջապահական ծառայությունների մատուցողների գործողությունների և անգործության հետևանքով. առաջին՝ երբ հիվանդի կյանքը գիտակցաբար վտանգվել է կենսական նշանակություն ունեցող շտապ բժշկական օգնության հասանելիության մերժմամբ (*«Մեհմեդ Շենթյուրքը և Բեքիր Շենթյուրքն ընդդեմ Թուրքիայի»*) և երկրորդ՝ երբ հիվանդը հնարավորություն չի ունեցել օգտվել կենսական կարևորություն ունեցող շտապ օգնությունից հիվանդանոցային ծառայություններում համակարգային կամ կառուցվածքային խախտման հետևանքով, ընդ որում՝ իրավասու մարմիններն իմացել են կամ պետք է իմացած լինեին այս վտանգի մասին և անհրաժեշտ միջոցների չեն դիմել դրա իրականացումը կանխելու համար՝ դրանով իսկ վտանգելով առհասարակ հիվանդների և, մասնավորապես, խնդրո առարկա հիվանդի կյանքը (*«Այդոդուն ընդդեմ Թուրքիայի»*):

43. Ըստ Դատարանի կենսական կարևորություն ունեցող շտապ բուժօգնության հասանելիության մերժման փաստ արձանագրելու համար պետք է բավարարվեն միասին վերցված հետևյալ պայմանները.

- առաջին՝ անհրաժեշտ է, որ առողջապահական ծառայությունների մատուցողների գործողությունները և անգործությունը գերազանցեն սովորական սխալը կամ բժշկական անփութությունը, ասել է թե՛ նման ծառայություններ մատուցողները չնայած իրենց մասնագիտական պարտավորություններին, հրաժարվել են հիվանդին մատուցել շտապ բժշկական օգնություն՝ ստույգ իմանալով, որ նման մերժումը վտանգում էր հիվանդի կյանքը,
- երկրորդ՝ պետությանը վերագրելի համարվելու համար խնդրո առարկա խախտումը պետք է անկողմնակալ և իրական եղանակով ճանաչելի լինի որպես համակարգային կամ կառուցվածքային խախտում,
- երրորդ՝ պետք է լինի կապ ի հայտ բերված խախտման և հիվանդի կրած վնասի միջև և
- վերջապես, այդ խախտման հիմքում պետք է ընկած լինի պետության կողմից լայն իմաստով նորմատիվային դաշտ ստեղծելու իր պարտավորության չկատարումը (*«Լոպես դե Սուսա Ֆերնանդեսն ընդդեմ Պորտուգալիայի»* [ՄՊ], §§ 191-196):

44. Դատարանի առջև բերվել են նաև որոշ թվով գործեր, որոնք անդրադառնում էին բժշկական անփութության և (կամ) հիվանդանոցային ծառայություններից օգտվելու հնարավորության մերժմանը, օրինակ.

- հաշմանդամ երեխային դեղորայք տալը՝ չնայած իր մոր դեմ լինելուն (*«Գլասն ընդդեմ Միացյալ Թագավորության»* (որոշ.)),
- տարեց կնոջ մահը բրոնխային թոքաբորբի հետևանքներից (*«Սևին Գյունզյորն ընդդեմ Թուրքիայի»* (որոշ.)),
- խոցային վարակիչ կոլիտ ունեցող հղի կնոջ մահը (*«Չ.-ն ընդդեմ Լեհաստանի»*),
- թոքային բարոդացումներից և բուժմանը չհամաձայնվելու հետևանքով հիվանդի մահը հիվանդանոցում (*«Արսկայան ընդդեմ Ուկրաինայի»*),
- հղի կնոջ մահն այն պատճառով, որ բժիշկները հրաժարվել էին շտապ վիրահատել նրան, քանի որ նա չէր կարող հոգալ բժշկական ծախսերը (*«Մեհմեդ Շենթյուրքը և Բեքիր Շենթյուրքն ընդդեմ Թուրքիայի»*),
- շտապ օգնության մեքենայում մի նորածնի մահ, ում հրաժարվել էին ընդունել բազմաթիվ պետական հիվանդանոցներում (*«Ասիյե Գենչն ընդդեմ Թուրքիայի»*),
- մահվան դեպք դեղորայքային միջամտության հետևանքով առաջացած ինֆարկտի բարդացումներից (*«Ալթուղը և այլք ընդդեմ Թուրքիայի»*):

45. Մի շարք դեպքերում Դատարանն ուսումնասիրել է բուժօգնություն ստանալու հնարավորության բացակայությամբ պայմանավորված բողոքները, որոնց հիմքում ընկած է եղել պետության կողմից այս կամ այն ընդունված բուժման ծախսերն ամբողջությամբ հոգալու մերժումը: Տե՛ս օրինակ *«Նիտեցկին ընդդեմ Լեհաստանի»* (որոշ.), *«Պենտյացովան և այլք ընդդեմ Մոլդովայի»* (որոշ.), *«Գեորգեն ընդդեմ Ռումինիայի»* (որոշ.), *«Վյատերն ընդդեմ Լեհաստանի»* (որոշ.):

46. *«Հրիստոզովը և այլք ընդդեմ Բուլղարիայի»* գործի շրջանակներում քաղցկեղի տերմինալ փուլում գտնվող հիվանդները բողոք էին ներկայացնում, որ հնարավորություն չեն ունեցել օգտվել չարտոնագրված փորձարկային դեղորայքից, Դատարանը եզրակացրել է, որ չարտոնագրված դեղորայքի հասանելիությունն ամրագրող նորմատիվային բացեր չկան այն դեպքերում, երբ բուժման ընդունված ձևերն անբավարար են թվում, և համարել է, որ Կոնվենցիայի 2-րդ հոդվածը չի կարող մեկնաբանվել որպես այս կամ այն եղանակով տերմինալ փուլում որևէ հիվանդություն ունեցող հիվանդների համար չարտոնագրված դեղորայքից օգտվելու հնարավորությունը այս կամ այն եղանակով կանոնակարգելու պարտավորություն (§ 108):

բ. Ազատագրված անձինք և պետության հսկողության տակ գտնվող խոցելի անձինք

47. Դատարանը հաստատել է մարդու արժանապատվությանը համապատասխանող կալանավորման պայմաններ ունենալու ցանկացած բանտարկյալի իրավունքը, ըստ որի պետք է ապահովվեն միջոցների կատարման այնպիսի պայմաններ, որոնցով խնդրո առարկա անձը չի ենթարկվի այնպիսի հարկադրանքի կամ այնպիսի ուժգնության փորձության, որը կգերազանցի կալանքին ներհատուկ տառապանքի անխուսափելի մակարդակը. դատարանը հավելել է, որ բացի բանտարկյալի առողջությունից, հարկավոր է պատշաճ կերպով ապահովել նրա բարեկեցությունը՝ հաշվի առնելով բանտարկության գործնական պահանջները (*«Չյեցյակն ընդդեմ Լեհաստանի»*, § 91):

48. Դատարանն ընդունում է, որ քրեակատարողական հիմնարկների հիվանդանոցներում առկա բուժօժանոթությունները չեն կարող միշտ լինել նույն որակի, ինչ բուժհաստատություններում բնակչությանը մատուցվող ծառայությունները: Այդուհանդերձ, պետությունը պետք է բավարար չափով երաշխավորի կալանավորների առողջությունն ու բարեկեցությունը, մասնավորապես՝ նրանց մատուցելով անհրաժեշտ բուժօգնություն: Իրավասու մարմինները նույնպես պետք է ապահովեն, որ խնդրո առարկա անձինք անհապաղ ստանան ճշգրիտ ախտորոշում և հետագա ընթացքի ստուգում, ինչպես նաև, երբ նրանց հիվանդությունը այդ պահանջում է, նրանք պետք է գտնվեն պարբերական և համակարգային հսկողության տակ, որը կապված կլինի ընդհանուր բուժական մոտեցման հետ և կոչված կլինի շտկել նրանց առողջական խնդիրները կամ կանխել դրանց վատթարացումը (*«Պիտային ընդդեմ Ռուսաստանի»*, § 54): Այնուամենայնիվ, Կոնվենցիան չի կարող մեկնաբանվել որպես կալանավորին առողջական պատճառներով ազատ արձակելու ընդհանուր պարտավորություն սահմանող փաստաթուղթ (*«Չեցյակն ընդդեմ Լեհաստանի»*, § 91):

49. Քանի որ պետությունն ուղղակիորեն պատասխանատու է ազատագրված անձանց բարեկեցության համար, ուստի, եթե նման անձանցից որևէ մեկը մահանում է առողջապահական խնդրի հետևանքով, ապա պետությունը պարտավոր է բացատրություններ տալ խնդրո առարկա անձի մահվան պատճառների և մահվան վրա հասնելուց առաջ նրան մատուցված խնամքի վերաբերյալ (*«Սլիմանին ընդդեմ Տրանսիայի»*, § 27, *«Կաթսր և այլք ընդդեմ Ուկրաինայի»*, § 104):

50. Օրինակ, Դատարանը թերի է համարել ազատագրված անձանց բուժօգնության մատուցումը հետևյալ դեպքերում:

- Թեև իրավասու մարմիններին քաջ հայտնի է եղել, որ կալանավորն ունեցել է քրոնիկ հիվանդություն, նրան պատշաճ քննություն և խնամք չի մատուցվել, խնդրո առարկա անձը տեղափոխվել է հիվանդանոց ուշացումով և նրան մատուցված վիրաբուժական խնամքը եղել է թերի: Նրան դուրս են գրել հիվանդանոցից, մինչդեռ բժիշկներն իմացել են, որ նրան անհրաժեշտ էր անմիջապես կրկին վիրահատել հետվիրահատական բարդացումների պատճառով: Նրանք նաև թաքցրել էին նրա վիրահատության և դրանից առաջացած բարդացումների վերաբերյալ կենսական կարևորություն ունեցող մանրամասներ: Բանտի բուժաշխատակազմը կալանավորին վերաբերվել էր ինչպես միջամտություն ստացած սովորական հիվանդի, այլ ոչ թե հրատապ դեպքի, այնպես որ նրան կրկին վիրահատել են չափազանց ուշ: Ավելին, բանտային հիվանդանոցը պատշաճ կերպով հազեցած չի եղել զանգվածային արյունահոսությունը կանխելու համար (*«Տարարիան ընդդեմ Ռուսաստանի»*, §§ 88-89):
- Արձանագրվել է տարբեր պետական մարմինների միջև համագործակցության և համակարգման պակաս. դիմումատուն հնարավորություն չի ստացել տեղափոխվել հիվանդանոց նախատեսված երկու վիրահատությունների ենթարկվելու համար: Առաջին ատյանի դատարանը պատշաճ կերպով և ժամանակին չի ծանուցվել դիմումատուի առողջական վիճակի մասին, նա հնարավորություն չի ունեցել հետազոտվել բժիշկների կողմից իր կյանքի վերջին օրերին և նրա առողջական վիճակը հաշվի չի առնվել, երբ ավտոմատ կերպով որոշում է կայացվել նրան կալանքի տակ պահելու մասին (*«Չեցյակն ընդդեմ Լեհաստանի»*, § 101):

- ՄԻԱՎ դրական ախտորոշում ունեցող մի անձ, ով ուներ մի շարք ծանր հիվանդություններ, չէր ստացել բժշկական հսկողություն, նրա տեղափոխումը բժշկական հաստատություն և շտապ ազատ արձակվելու իր խնդրանքի քննությունը վերջինիս առողջական վիճակի լուրջ վատթարացումից հետո մերժվել էին, այնուհետև տվյալ անձը ուշացումով ազատ էր արձակվել, որից հետո մահացել էր ՄԻԱՎ վարակակիր լինելու հետ կապված հիվանդությունների բարդացումներից (*«Կայծր և այլք ընդդեմ Ուկրաինայի»*, §§ 105-112):
- Բազմառեզիստենտ թոքախտով հիվանդ առաջին դիմումատուին մատուցված օգնությունն անբավարար էր եղել, քանի որ ախտորոշումը և երկրորդ գծի դեղորայքային բուժումն իրականացվել էին ուշացումով, իսկ բժշկական անձնակազմը չի ունեցել տվյալ հիվանդությունը բուժելու համար անհրաժեշտ փորձ և գիտելիքներ (*«Մախարաձեն և Միխարուլիձեն ընդդեմ Վրաստանի»*, §§ 90-93):

51. Դատարանը նմանատիպ մոտեցում է կիրառել պետական մարմինների հսկողության տակ գտնվող խոցելի անձանց մատուցված բժշկական օգնության պարագայում (տե՛ս մասնավորապես՝ *«Վալենտին Կամպենուի անվան իրավաբանական ռեսուրսների կենտրոնն ընդդեմ Ռուսիայի»* [ՄՊ], §§ 131 և 143-144, գործը, որը վերաբերում էր ՄԻԱՎ վիրուսակիր և հոգեկան խանգարում ունեցող մի երիտասարդ գնչուի մահվան դեպքին, որը վրա էր հասել հոգեբուժական հաստատությունում անբավարար, այդ թվում՝ բժշկական օգնության պատճառով):

5. Անձանց պաշտպանությունը դժբախտ պատահարների դեպքում

52. Դատարանի համար երկրորդ հոդվածից բխող դրական պարտավորությունները պետության վրա դնում են հանրային վայրերում մարդկանց անվտանգությունն ապահովող կանոնակարգ ընդունելու և դրա կիրառումը երաշխավորելու պարտավորություն (*«Սյեչոնսկան ընդդեմ Լեհաստանի»*, § 69, *«Բանելն ընդդեմ Լիտվայի»*, § 68):

53. Երբ խոսքը գնում է այնպիսի գործունեության մասին, որն իր ներհատուկ վտանգավոր բնույթի պատճառով կարող է վտանգ ներկայացնել մարդու կյանքի համար, օրինակ՝ շինհրապարակում իրականացվող գործունեությունը, պետությունը պարտավոր է ձեռնարկել ողջամիտ միջոցներ, որոնք անհրաժեշտության դեպքում կերաշխավորեն անհատների անվտանգությունը, այդ թվում՝ սահմանելով վերոհիշյալ գործունեության առանձնահատկություններին համապատասխանող կանոնակարգ (*«Չերիոլուն ընդդեմ Թուրքիայի»*, § 57, այլ մեջբերումներով):

54. Դատարանը եզրակացրել է, որ պատասխանող պետությունը չի կատարել կյանքի իրավունքը պաշտպանելու իր պարտավորությունը հետևյալ գործերում:

- *«Քալենդերն ընդդեմ Թուրքիայի»*, § 49, գործ, որի շրջանակներում երկու անձ մահացել էին երկաթուղային դժբախտ պատահարի ժամանակ:
- *«Բանելն ընդդեմ Լիտվայի»*, § 69, որում դիմումատուների որդին մահացել էր ստացված վնասվածքներից, երբ պատշգամբի մի մաս անջատվել էր շենքից և ընկել նրա վրա, երբ վերջինս դրսում խաղում էր:
- *«Չերիոլուն ընդդեմ Թուրքիայի»*, § 72, որի շրջանակներում դիմումատուի 10 տարեկան որդին խեղդվել էր շինարարական հրապարակում գտնվող չճածկված և ջրով լի անցքում, տե՛ս նաև գործ *«Բիննուր Ուզուն և այլք ընդդեմ Թուրքիայի»*, §

49, որի շրջանակներում դիմումատուների հայրը ընկել էր լքված շենքի վերելակի հորանը:

55. Փոխարենը՝ Դատարանը չի եզրակացրել, որ պատասխանող պետությունը խախտել է կյանքի իրավունքը պաշտպանելու իր պարտավորությունը հետևյալ գործերում:

- *«Մեսիլիա Պերեյրա Էնրիկեսը և այլք ընդդեմ Լյուքսեմբուրգի»* (որոշ.), որի շրջանակներում բանվորը մահացել էր աշխատանքային դժբախտ պատահարից՝ մնալով քանդվող շենքի փլված պատի տակ:
- *«Ֆուրդիկն ընդդեմ Սլովակիայի»* (որոշ.), որը վերաբերում է լեռներում շտապ փրկարար գործողություններին:
- *«Մոլին ընդդեմ Ռումինիայի»* (որոշ.), որը վերաբերում է դպրոցի մարզասրահում տեղի ունեցած մահացու դժբախտ պատահարին:
- *«Չավիտ Թինարլիօղլուն ընդդեմ Թուրքիայի»* § 107, որի շրջանակներում դիմումատուն, ով լողում էր չսահմանանշված լողի գոտում, մահացու վնասվածք էր ստացել շարժիչային նավակի հետ բախվելուց հետո:

Բ. Ժամանակային սահմանափակումներ

6. Կյանք սկիզբ

56. Ի տարբերություն *Մարդու իրավունքների ամերիկյան կոնվենցիայի* 4-րդ հոդվածի, որով ամրագրվում է, որ կյանքի իրավունքը պետք է պաշտպանվի «առհասարակ հղիության պահից», Կոնվենցիայի 2-րդ հոդվածը չի արտահայտվում կյանքի իրավունքի ժամանակային սահմանների մասին և, մասնավորապես, չի սահմանում, թե ով է այն «անձը», ում «կյանքը» պաշտպանված է Կոնվենցիայով (*«Վոն ընդդեմ Ֆրանսիայի»* [ՄՊ], § 75):

57. Դատարանը համարում է, որ կյանքի սկզբի վերաբերյալ գիտական և իրավաբանական սահմանման հարցում Եվրոպայում համաձայնության բացակայության պայմաններում կյանքի մեկնարկային կետը որոշվում է սեփական հայեցողության լուսանցքի շրջանակներում, որը Դատարանը սովորաբար վերապահում է պետություններին այս ոլորտում (*«Վոն ընդդեմ Ֆրանսիայի»* [ՄՊ], § 82):

58. *«Վոն ընդդեմ Ֆրանսիայի»* [ՄՊ] գործով, որում դիմումատուն պետք է թերապևտիկ նկատառումներով ենթարկվեր հղիության արհեստական ընդհատման բժշկական սխալի պատճառով, Դատարանը անօգուտ համարեց քննության առնել այն հարցը, թե արդյոք նրա հղիության կոպիտ ընդհատումը գտնվում էր 2-րդ հոդվածի կիրառման ոլորտում, քանի որ նույնիսկ կիրառելի լինելու դեպքում հանրային առողջության ոլորտում կյանքի պահպանության հետ կապված պահանջները հայտնի էին Պատասխանող պետությանը (§ 85, նմանատիպ մոտեցում տե՛ս նաև *«Մեհմեդ Շենթյուրքը և Բեքիր Շենթյուրքն ընդդեմ Թուրքիայի»*, § 109):

59. *«Էվանս ընդդեմ Միացյալ Թագավորության»* [ՄՊ] գործում, որի շրջանակներում դիմումատուն բողոք էր ներկայացնում առ այն, որ Մեծ Բրիտանիայի օրենսդրությունը թույլ էր տալիս իր նախկին գուգրնկերոջը ետ վերցնել գույզի կողմից ստեղծված սաղմերի պահուստավորման և օգտագործման վերաբերյալ իր համաձայնությունը, Դատարանն արձանագրեց, որ ըստ Մեծ Բրիտանիայի օրենսդրության սաղմը չի հանդիսանում ինքնավար իրավունքի սուբյեկտ և չի թույլատրում անձի միջնորդությամբ հավակնել 2-րդ

հոդվածով երաշխավորված կյանքի իրավունքին, ուստի, սաղմը չէր օգտվում կյանքի իրավունքից 2-րդ հոդվածի իմաստով (§§ 54-56):

7. Կյանքի ավարտին վերաբերող հարցեր

ա. Էվթանազիա

60. Դատարանի գնահատականով անհնար է Կոնվենցիայի 2-րդ հոդվածից դուրս բերել մահանալու իրավունք՝ լինի դա երրորդ անձի ձեռքից, թե հանրային մարմնի աջակցությամբ: Իր առջև բերված բոլոր գործերի շրջանակներում Դատարանը շեշտը դրել է կյանքը պաշտպանելու պետության պարտավորության վրա (*«Փրիթին ընդդեմ Միացյալ Թագավորության»*, § 39):

61. Վերջերս քննված մի գործում, որում խոսքը գնում էր հոգեկան խնդիրներ ունեցող հիվանդի ինքնասպանություն գործելու համար իրավասու մարմինների կողմից դեղորայք չտրամադրելու մասին, Դատարանը հիշեցրեց, որ Կոնվենցիան պետք է ընթերցվի ամբողջությամբ, և հարկ է համարել դիմումը քննության առնել Կոնվենցիայի 8-րդ հոդվածի հիմքերով՝ հղում կատարելով 2-րդ հոդվածին: Դատարանը գտավ, որ այս վերջին դրույթը պարտավորեցնում էր ազգային իրավասու մարմիններին թույլ չտալ անհատին ինքնասպանություն գործել, եթե նրա որոշումը չի կայացվել ազատորեն և պատճառների ամենայն գիտակցմամբ (*«Հասան ընդդեմ Շվեյցարիայի»*, § 54):

բ. Կենսական գործառույթների ապահովման դադարեցում

62. *«Լամբերը և այլք ընդդեմ Ֆրանսիայի»* [ՄՊ] գործի շրջանակներում, որը վերաբերում էր ամբողջությամբ արհեստական սնուցումից և խոնավացումից կախված հիվանդին դրանցից կտրելու իրավասու մարմինների որոշումներին, Դատարանն արձանագրեց, որ Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների միջև գոյություն չունեք փոխհամաձայնություն կենսաապահովման արհեստական համակարգի միջոցով բուժման դադարումը թույլատրելու հարցի վերաբերյալ, նույնիսկ եթե տպավորություն էր ստեղծվում, որ պետությունների մեծ մասը թույլատրում են դա: Այս առումով Դատարանը նշեց, որ թեև բուժման դադարեցումն ամրագրող պայմանները տարբերվում են կախված պետությունից, այնուամենայնիվ, գոյություն ունի որոշումների կայացման հարցում հիվանդի կամքի առանցքային դերակատարման վերաբերյալ փոխհամաձայնություն՝ անկախ կամքի արտահայտման եղանակից: Հետևաբար, Դատարանը համարել է, որ կյանքի ավարտին վերաբերող այս ոլորտում, ինչպես նաև կյանքի սկզբին անդրադարձող ոլորտում հարկ է պետություններին վերապահել սեփական հայեցողության լուսանցք ոչ միայն արհեստական կենսաապահովման միջոցով բուժման դադարեցման թույլատրման կամ չթույլատրման հնարավորության առումով, այլև հիվանդի կյանքի իրավունքի պաշտպանությունը և նրա անձնական կյանքի անձեռնմխելիության իրավունքի պահպանումը հավասարակշռության բերելու առումով: Դատարանն այնուամենայնիվ ընդգծել է, որ սեփական հայեցողության այս լուսանցքն անսահմանափակ չէ, և Դատարանն իրեն իրավունք է վերապահում վերահսկել պետության կողմից 2-րդ հոդվածից բխող պարտավորությունների կատարումը (§§ 147-148):

63. Երբ Դատարանի առջև բերվում է բժշկական օգնության մատուցման կամ մերժման հարցը, Դատարանը հաշվի է առնում հետևյալ տարրերը՝ ներպետական իրավունքում և գործելակերպում 2-րդ հոդվածի պահանջներին համապատասխանող նորմատիվային դաշտի գոյությունը, դիմումատուի և նրա մտերիմների կողմից նախկինում արտահայտված ցանկությունները և բուժանձնակազմի անդամների կարծիքը հաշվի

առնելու հանգամանքը, ինչպես նաև դատական իրավական պաշտպանության միջոցի հնարավորությունը՝ հիվանդի շահերից բխող լավագույն որոշման կայացման վերաբերյալ կասկածների առկայության դեպքում (*«Գարդը և այլք ընդդեմ Միացյալ Թագավորության»* (որոշ.), § 83):

III. Դիտավորյալ կյանքից զրկելու արգելք

Ա. Մահապատիժ

Կոնվենցիայի 2-րդ հոդվածի 1-ին մաս

« 1. Յուրաքանչյուրի կյանքի իրավունքը պաշտպանվում է օրենքով: Ոչ մեկին չի կարելի դիտավորությամբ զրկել կյանքից այլ կերպ, քան ի կատարումն դատարանի կայացրած դատավճռի՝ այն հանցագործության համար, որի կապակցությամբ օրենքով նախատեսված է այդ պատիժը »:

«HUDOC» համակարգի առանցքային բառեր

Արտաքսում (2) – Արտահանձնում (2)

Կյանք (2-1) – Մահապատիժ (2-1), Օրենքով նախատեսված (2-1), Հասանելիություն (2-1), Կանխատեսելիություն (2-1), Չարաշահումներից պաշտպանող երաշխիքներ (2-1), Իրավասու դատարան (2-1)

1. Կոնվենցիայի 2-րդ հոդվածի 1-ին մասի մեկնաբանությունը Կոնվենցիայի 6-րդ և 13-րդ արձանագրությունների լույսի ներքո

64. Կոնվենցիայի պատրաստման ժամանակ մահապատիժը չէր համարվում միջազգային նորմերին հակասող իրողություն: Հետևաբար, այն նախատեսված է եղել որպես կյանքի իրավունքի բացառություն, այնպես, որ 2-րդ հոդվածի 1-ին կետում ասվում է. «ոչ մեկին չի կարելի դիտավորությամբ զրկել կյանքից այլ կերպ, քան ի կատարումն դատարանի կայացրած դատավճռի՝ այն հանցագործության համար, որի կապակցությամբ օրենքով նախատեսված է այդ պատիժը»: Այնուամենայնիվ, հետագայում տեղի է ունեցել Եվրոպայի խորհրդի անդամ երկրներում մահապատիժի փաստացի և իրավական ամբողջական վերացմանն ուղղված զարգացում (*«Ալ-Սաադուն և Մուֆդհին ընդդեմ Միացյալ Թագավորության»*, § 116):

65. Կոնվենցիայի **6-րդ արձանագրությունը**, որով մահապատիժը վերացվում է բացառությամբ «պատերազմական ժամանակներում կամ պատերազմի անմիջական վտանգի պայմաններում կատարված արարքների», բացվել է ստորագրության համար 1993 թվականի ապրիլի 28-ին և ուժի մեջ է մտել 1985 թվականի մարտի 1-ին: Եվրոպայի խորհրդի բոլոր անդամ պետությունները ստորագրել են այն և բոլորն էլ վավերացրել են այն բացառությամբ Ռուսաստանի (*«Ալ-Սաադուն և Մուֆդհին ընդդեմ Միացյալ Թագավորության»*, § 116): **13-րդ արձանագրությունը**, որով մահապատիժը վերացվում է բոլոր հանգամանքներում, ստորագրության համար բացվել էր 2002 թվականի մայիսի 3-ին և ուժի մեջ է մտել 2003 թվականի հուլիսի 1-ին: 2010 թվականին Եվրոպայի խորհրդի բոլոր անդամ պետությունները բացառությամբ երկուսի՝ Ադրբեջանի և Ռուսաստանի,

ստորագրել են այն, և բոլոր այն ստորագրած պետությունները նաև վավերացրել են այն (*Նույն տեղում*, § 117):¹

66. Դատարանի տեսանկյունից՝ այս թվերի համադրումը և մահապատժի մարատորիումը պահպանող պետությունների շարունակական գործելակերպը վկայում են այն մասին, որ 2-րդ հոդվածը փոփոխվել է մահապատիժը բոլոր հանգամանքներում արգելելու եղանակով (*«Ալ-Սաադուն և Մուֆդհին ընդդեմ Միացյալ Թագավորության»*, § 120):

2. 2-րդ հոդվածից բխող պետության պատասխանատվությունն արտահանձնման և հարկադիր վերադարձի հարցերում

67. Կոնվենցիայի 2-րդ հոդվածն արգելում է արտահանձնումը և հարկադիր վերադարձը մեկ այլ պետություն, որտեղ կան լուրջ և հաստատված հիմքեր կարծելու, որ խնդրո առարկա անձն այնտեղ հայտնվելու է մահապատժի ենթարկվելու իրական վտանգի տակ (*«Ալ Նաշիրին ընդդեմ Լեհաստանի»*, § 577, *«Ֆ.Գ.-ն ընդդեմ Շվեդիայի»* [ՄՊ], § 110):

68. *«Ալ Նաշիրին ընդդեմ Լեհաստանի»* գործի շրջանակներում, որում խոսքը գնում էր ենթադրաբար մահապատժի ենթակա սահաբեկիչների «արտակարգ հանձնման» մասին, Դատարանը համարեց, որ Լեհաստանի տարածքից դիմումատուի տեղափոխման պահի դրությամբ գոյություն է ունեցել լուրջ և հաստատված վտանգ, որ նա մահապատժի կդատապարտվի զինվորական հանձնաժողովի կողմից, որի առջև արդարադատության մերժման հավանականությունը, ակնհայտ էր ի խախտումն 6-րդ հոդվածի 1-ին մասի: Հետևաբար, Դատարանը եզրակացրեց, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 2-րդ հոդվածի խախտում՝ թիվ 6 արձանագրության 1-ին հոդվածի համադրությամբ (§§ 578-579):

69. Փոխարենը՝ *«Բարսր Ահմադը և այլք ընդդեմ Միացյալ Թագավորության»* (որոշ.) գործով Դատարանը գնահատեց, որ գոյություն չունեն իրական վտանգ, որ դիմումատուները, ում արտահանձնման պահանջը ներկայացվել էր Միացյալ Նահանգների կողմից սահաբեկիչների առաջնորդ լինելու հիմնավորմամբ, կենթարկվեին մահապատժի հետագա մեղադրական եզրակացությունների կամ զինվորական հանձնաժողովի առջև բերվելու հետևանքով: Հետևաբար, Դատարանը մերժեց դիմումի այս հայեցակետը հիմքերի ակնհայտ բացակայության պատճառով (§ 119):

70. *«Ֆ.Գ.-ն ընդդեմ Շվեդիայի»* [ՄՊ] գործի շրջանակներում Դատարանը համարեց, որ դիմումատուի արտաքսումը Իրան կիսախտեր 2-րդ և 3-րդ հոդվածների դրույթները ոչ թե վերջինիս քաղաքական անցյալի հետ կապված վտանգների պատճառով, այլ ավելի շուտ այն հանգամանքի բերումով, որ նրա արտաքսումը կիրականացվեր դիմումատուի կրոնափոխության հետևանքների ներպետական իրավասու մարմինների գնահատման բացակայության պայմաններում, ինչը հանդիսանում է ռիսկի անհատական գործոն, որը դիմումատուն չէր վկայակոչել ապաստանի իր դիմումում (§§ 143 և 158):

1. Սույն ուղեցույցի պատրաստման դրությամբ 6-րդ և 13-րդ արձանագրությունները ստորագրած և վավերացրած երկրների թիվը մնացել է անփոփոխ: Ինչ վերաբերում է թիվ 13 Արձանագրությունը վավերացրած պետությունների թվին, ապա այն ստորագրած պետություններից միայն մեկն այն դեռևս չի վավերացրել Հայաստանը:

Ա. Պետության գործակալների կողմից մահաբեր ուժի կիրառում

Կոնվենցիայի 2-րդ հոդված

- « 1. Յուրաքանչյուրի կյանքի իրավունքը պաշտպանվում է օրենքով: (...)
- 2. Կյանքից զրկելը չի համարվում սույն հոդվածի խախտում, եթե այն հետևանք է ուժի գործադրման, ինչը բացարձակապես անհրաժեշտ է
- ա. ցանկացած անձի անօրինական բռնությունից պաշտպանելու համար,
- բ. օրինական ձեռքարկում իրականացնելու կամ օրինական հիմքերով կալանավորված անձի փախուստը կանխելու համար,
- գ. խոտվությունը կամ ապստամբությունը ճնշելու նպատակով օրենքին համապատասխան գործողություն ձեռնարկելու համար: »

«HUDOC» համակարգի առանցքային բառեր

Կյանք (2-1) – Ուժի գործադրում (2-2) Բացարձակապես անհրաժեշտ (2-2), Պաշտպանություն անօրինական բռնությունից (2-2), Իրականացնել օրինական ձեռքարկում (2-2), Փախուստը կանխել (2-2), Ճնշել խոտվություն կամ ապստամբություն (2-2)

1. Ապացույցների տարրերի գնահատում

71. Դատարանը չի կարող առանց հիմնավոր պատճառների ստանձնել առաջին աստիճանի դատավորի դերակատարումը բացառությամբ, երբ դա անխուսափելի չէ իր առջև բերված գործի հանգամանքներից ելնելով («Մրկ-Քերն ընդդեմ Միացյալ Թագավորության» (որոշ.)): Սկզբունքորեն, ներպետական ընթացակարգերի իրականացման դեպքում՝ Դատարանը չպետք է փաստերի իր սեփական գնահատմամբ փոխարինի ազգային աստիճանների գնահատումը, որոնց էլ սկզբունքորեն վերապահված է գործի տարրերի հիմքում ընկած փաստերի հաստատումը (ի թիվս բազմաթիվ այլ նախադեպերի՝ տե՛ս «Էդվարդսն ընդդեմ Միացյալ Թագավորության», § 34, «Կլասսն ընդդեմ Գերմանիայի», § 29): Թեև երկրի դատավորների կողմից արձանագրված փաստերը չեն պարտադրում Դատարանին, որն ազատ է իր տրամադրության տակ եղած բոլոր տարրերի համադրության լույսի ներքո իրականացնել իր սեփական գնահատումը, սակայն Դատարանը սովորաբար չի շեղվում երկրի դատարանների կողմից արձանագրված փաստերից՝ այս առումով իր տրամադրության տակ համոզիչ տվյալներ ունենալու դեպքում («Ավշարն ընդդեմ Թուրքիայի», § 283, «Բարբու Անգելեսկուն ընդդեմ Ռումինիայի», § 52):

ա. Ապացույցների մակարդակ

72. Դատարանը հռչակել է մի շարք սկզբունքներ, որոնք կիրառելի են այն բողոքների նկատմամբ, որոնց շրջանակներում Դատարանը կոչված է հաստատել կողմերի տարաձայնության առարկա փաստերի իսկությունը, այն է՝ փաստերի արձանագրումը պետք է հիմնված լինի «ցանկացած ողջամիտ կասկածից զերծ» ապացուցական չափորոշիչների վրա և նման ապացույցը կարող է բխել մի շարք հատկանիշներից կամ չհերքված ենթադրություններից, որոնք բավարար չափով լուրջ են, ճշգրիտ և համահունչ: Այս առումով, կարող է հաշվի առնվել ապացույցների որոնման շրջանակներում կողմերի

դրսևորած վարքագիծը (*«Թանհիշը և այլը ընդդեմ Թուրքիայի»*, § 160, *«Տազանան և այլը ընդդեմ Ռուսաստանի»*):

բ. Ապացույցի բեռ

73. Որևէ առանձին եզրակացության գալու համար անհրաժեշտ վստահության մակարդակը և այս առումով ապացույցի բեռի բաշխումն իրենց էությամբ կապված են փաստերի, ձևակերպված պնդման բնույթի և տվյալ պարագայում ընդունված իրավական նորմի առանձնահատկությունների հետ (*«Տազանան և այլը ընդդեմ Ռուսաստանի»*, § 586):

74. Երբ խնդրո առարկա իրադարձությունները՝ ամբողջությամբ կամ մեծամասամբ, հայտնի են բացառապես իրավասու մարմիններին, ինչպես, օրինակ, կալանքի տակ գտնվող իրենց հսկողությանը հանձնված անձանց պարագայում, ապա նման կալանքի ժամանակահատվածում վրա հասած վնասվածքը կամ մահը հիմնավոր փաստական ենթադրությունների տեղիք է տալիս: Ապացույցի բեռն այս դեպքում դրված է իրավասու մարմինների վրա, որոնք պետք է ներկայացնեն բավարար և համոզիչ բացատրություն (*Սալմանն ընդդեմ Թուրքիայի* [ՄՊ], § 100):

75. Այս սկզբունքը վերաբերում է նաև այն դեպքերին, երբ թեև չի ապացուցվել, որ անձը առնվել է կալանքի տակ իրավասու մարմինների կողմից, սակայն հնարավոր է հաստատել այն, որ վերջինս պաշտոնապես կանչվել է ռազմական մարմինների կամ ոստիկանության կողմից, մտել է վերջիններիս վերահսկողության տակ գտնվող տարածք, և այդ պահից ի վեր նրան այլևս չեն տեսել: Նման իրավիճակում կառավարության վրա դրված է նշված տարածքում պատահածի վերաբերյալ համոզիչ և բավարար բացատրություն տալու և այն հանգամանքը ապացուցելու պարտավորություն, որ խնդրո առարկա անձն իրավասու մարմինների կողմից կալանքի չի ենթարկվել, այլ լքել է տվյալ տարածքն առանց հետագա ազատագրկման (*Թանհիշը և այլը ընդդեմ Թուրքիայի*, § 160):

76. Նույն կերպ, զինված հակամարտություններին վերաբերող գործերում Դատարանը տարածել է այս սկզբունքն այն իրավիճակների վրա, որոնցում անձանց գտել են վիրավոր կամ մահացած վիճակում, կամ ուլքեր անհետացել են պետության կամ որոշակի այնպիսի տարրերի բացառիկ հսկողության ներքո գտնվող գոտում, որոնք տեղիք են տալիս ենթադրելու պետության հնարավոր ներգրավումը (*«Աքունը և այլը ընդդեմ Թուրքիայի»*, § 211, *«Ասլախանովան և այլը ընդդեմ Ռուսաստանի»*, § 97 և մեջբերվող հղումները):

77. Ընդ որում՝ Դատարանն ընդգծել է, որ բոլոր այն դեպքերում, երբ պետության իրավասու մարմիններին օբյեկտիվորեն վերագրելի պատճառներով անհնար է որոշել տվյալ գործի ճշգրիտ հանգամանքները, պատասխանող կառավարության վրա դրված է բավարար և համոզիչ եղանակով իրադարձությունների ժամանակագրությունը բացատրելու, ինչպես նաև դիմումատուի պնդումները հերքելու հնարավորություն տվող հիմնավոր ապացույցներ բերելու պարտավորություն (*«Մանսուրօղուն ընդդեմ Թուրքիայի»*, § 80): Դատարանն արձանագրել է նաև դիմումատուների պնդումները հիմնավորող անհրաժեշտ ապացույցների ձեռքբերման հարցում նրանց առջև ծառայած դժվարությունները, երբ պատասխանող կառավարությունն իր տրամադրության տակ ունի գործին վերաբերող տարրերը և դրանք չի տրամադրում: Եթե կառավարությունը չի բացահայտում վճռական նշանակություն ունեցող այնպիսի փաստաթղթեր, որոնք կարող են թույլ տալ դատարանին հաստատել փաստերի իսկությունը, կամ եթե պետությունը բավարար և համոզիչ բացատրություն չի ներկայացնում, ապա նրա մոտեցումից կարելի է անել հիմնավոր եզրակացություններ (*«Վառնավան և այլը ընդդեմ Թուրքիայի»* [ՄՊ], § 184): Ազգային մակարդակով իրականացրած հետաքննության ընթացքում հավաքված տարրերը և ազգային դատավորի առջև դատավարության ընթացքում հաստատված

փաստերը հաշվի առնելու հանգամանքը մեծապես պայմանավորված են ներպետական քննության գործընթացի որակով, դրա խորացված բնույթով և հետևողականությամբ (*«Տագանան և այլք ընդդեմ Ռուսաստանի»*, § 586):

78. Եվ վերջապես, երբ 2-րդ հոդվածի խախտման վերաբերյալ հայտարարությունները ներպետական ատյաններում քրեական հետապնդման տեղիք են տալիս, պետք չէ անտեսել այն հանգամանքը, որ քրեական պատասխանատվությունը տարբերվում է Կոնվենցիայի ներքո պետության կրած պատասխանատվությունից: Դատարանի լիազորությունները սահմանափակվում են այս երկրորդ պատասխանատվության որոշմամբ: Կոնվենցիայի ներքո պատասխանատվությունը բխում է դրա դրույթներից, որոնք պետք է մեկնաբանվեն Կոնվենցիայի առարկայի և նպատակի լույսի ներքո՝ հաշվի առնելով միջազգային իրավունքի ցանկացած գործին վերաբերող կանոն կամ սկզբունք: Պետք չէ շփոթել իր մարմինների, գործակալների կամ աշխատակիցների գործողություններից բխող պետության պատասխանատվությունը և ներպետական իրավունքի հարցերը, որոնք վերաբերում են անհատական քրեական պատասխանատվությանը, որի քննությունը վերապահված է ներպետական ատյաններին: Դատարանի լիազորությունների մեջ չի մտնում քրեական իրավունքի իմաստով մեղավորության կամ անմեղության մասին վճիռներ կայացնելը (*«Թանլին ընդդեմ Թուրքիայի»*, § 111, *«Ջուլիանին և Գաջոն ընդդեմ Իտալիայի»* [ՄՊ], § 182):

2. Անձանց պաշտպանությունը պետության գործակալների կողմից մահացու ուժի կիրառումից

ա. Իրավական դաշտ

79. Երբ խոսքը գնում է պետության գործակալների կողմից ուժի կիրառման մասին, կյանքի իրավունքն ապահովելու հիմնական պարտավորությունը ենթադրում է, մասնավորապես, պետության համար այնպիսի իրավական և վարչական դաշտ ստեղծելու պարտականություն, որի ներքո համապատասխանաբար կամրագրվեն այն սահմանափակ հանգամանքները, որոնց դեպքում օրինապահ մարմինների ներկայացուցիչները կարող են ուժ կիրառել և հրազեն օգտագործել՝ հաշվի առնելով տվյալ հարցում եղած միջազգային նորմերը (*«Ջուլիանին և Գաջոն ընդդեմ Իտալիայի»* [ՄՊ], § 209, *«Մակարացիսն ընդդեմ Հունաստանի»* [ՄՊ], §§ 57-59):

80. 2-րդ հոդվածին բնորոշ խիստ համամասնության սկզբունքի համաձայն՝ ազգային իրավական դաշտի ներքո, հրազենի օգտագործումը պետք է ենթարկվի իրավիճակի (*«Ջուլիանին և Գաջոն ընդդեմ Իտալիայի»* [ՄՊ], § 209) և հատկապես խնդրո առարկա անձի կողմից կատարված հանցագործության բնույթի և նրա ներկայացրած վտանգի մանրակրկիտ գնահատման (*«Նաչովան և այլք ընդդեմ Բուլղարիայի»* [ՄՊ], § 96): Ավելին, ոստիկանության աշխատանքը կանոնակարգող ազգային իրավունքը պետք է առաջարկի կամայականությունից, ուժի չարաշահումից և նույնիսկ խուսափելի դժբախտ պատահարներից պաշտպանության բավարար և արդյունավետ երաշխիքների համակարգ (*«Ջուլիանին և Գաջոն ընդդեմ Իտալիայի»* [ՄՊ], § 209, *«Մակարացիսն ընդդեմ Հունաստանի»* [ՄՊ], § 58):

81. Տեսնելով տարբերությունը ոստիկանության սովորական աշխատանքի և ահաբեկչության դեմ պայքարի կարևոր օպերացիաների իրավիճակների միջև, Դատարանը համարում է, որ վերջին պարագայում, երբ լուրջ ճգնաժամային իրավիճակներում հաճախ պահանջվում են «անհատականացված» միջամտություններ, պետությունը պետք է իր համապատասխան լուծումները հարմարեցնի ստեղծված

հանգամանքներին: Այդուհանդերձ, Դատարանը նաև համարում է, որ երրորդ անձանց կողմից ապօրինի բռնության սպառնալիքի ներքո գտնվող անձանց կյանքի պաշտպանությանն ուղղված օրինական անվտանգության գործողության շրջանակներում, մահացու ուժի գործադրումը շարունակում է կարգավորվել «բացարձակ անհրաժեշտության» խիստ կանոններով՝ Կոնվենցիայի 2-րդ հոդվածի իմաստով: Հետևաբար, առաջնահերթ է, որ ներպետական կանոնները ոգեշնչվեն այս նույն սկզբունքից և նախատեսեն այս առումով պարզ ցուցումներ, մասնավորապես՝ անհարկի վնասի վտանգը նվազեցնելու և զենքի ու զինամթերքի անցանկալի հետևանքներ ունեցող գործադրումը բացառելու պարտավորություն (*«Տագանան և այլք ընդդեմ Ռուսաստանի»*, § 595):

բ. Պետության գործակալների պատրաստում և զտում

82. Ինչպես ընդգծել է Դատարանը, օրենքի ներկայացուցիչները պետք է պատրաստված լինեն, որպեսզի ի վիճակի լինեն գնահատել, թե արդյոք հրազենի գործադրումը բացարձակապես անհրաժեշտ է՝ ոչ միայն հետևելով համապատասխան կանոնների տառին, այլև պատշաճ կերպով հաշվի առնելով մարդկային կյանքի՝ որպես հիմնարար արժեքի նկատմամբ հարգանքի գերակայությունը (*«Նաչովան և այլք ընդդեմ Բուլղարիայի»* [ՄՊ], § 97, *«Կակուլին ընդդեմ Թուրքիայի»*, § 110):

83. Օրինակ, այն գործերում, որոնք կապված են անկարգությունները կամ ապստամբությունը ճնշելու համար ուժի գործադրման հետ, Դատարանը իր հսկողության շրջանակներում, մասնավորապես, ստուգում է, թե արդյոք անվտանգության ուժերը ճիշտ են սպառազինված եղել (*«Գյուլեչն ընդդեմ Թուրքիայի»*, § 71, *«Շիմշեկը և այլք ընդդեմ Թուրքիայի»*, § 117), արդյոք նրանք ստացել են համապատասխան պատրաստում, որն ուղղված է եղել մարդու իրավունքների և ոստիկանական գործառույթների իրականացման ոլորտում միջազգային կանոնների ապահովմանը, արդյոք նրանք ստացել են պարզ և հստակ հրահանգներ, թե ինչպիսի եղանակով և ինչպիսի հանգամանքներում նրանք կարող էին հրազեն գործադրել (*նույն տեղում*, § 109): Մասնավորապես, Դատարանը գտնում է, որ հնարավորություն դեպքում կրակ բացելուց առաջ հարկավոր է արձակել նախազգուշական կրակոցներ (*«Ջուլիանին և Գաջոն ընդդեմ Բուլղարիայի»* [ՄՊ], § 177):

84. Ավելին, պետությունները պետք է ապահովեն իրավապահ ուժերի աշխատակիցների կոմպետենտության բարձր մակարդակը՝ համոզվելով, որ վերջիններս բավարարում են սահմանված չափորոշիչները: Մասնավորապես, իրավապահ ուժերի աշխատակիցները, ում վստահվում է հրազեն կրել, պետք է ոչ միայն տեխնիկական նախապատրաստում անցնեն, այլև ընտրվեն ամենայն մանրակրկտությամբ (*«Մաշո Գորգինն ընդդեմ նախկին Հարավսլավիայի Մակեդոնիայի Հանրապետության»*, § 51):

գ. Օրինակներ

85. Կիրառելով այս սկզբունքները՝ Դատարանը, օրինակ, թերի է համարել Բուլղարիայում ընդունված իրավական դաշտը, որի ներքո ոստիկանությանը թույլատրվում էր կրակ բացել զինված ուժերից փախուստի դիմած ցանկացած անձի վրա, ով չի հանձնվում զգուշացումից և նախազգուշական կրակոցից անմիջապես հետո: Գոյություն չունեղ որևէ պարզ երաշխիք, որը կոչված կլիներ կանխել մահվան կամայական պատճառումը (*«Նաչովան և այլք ընդդեմ Բուլղարիայի»* [ՄՊ], §§ 99-102):

86. Նույն կերպ, Դատարանը նաև արձանագրել է թերություններ Թուրքիայի իրավական դաշտում, որտեղ սկսած 1934 թվականից եղել են բազմաթիվ դեպքեր, երբ ոստիկան

իրավունք է ունեցել հրազեն օգտագործել չենթարկվելով պատասխանատվության դրա հետևանքների համար (*«Էրդողանը և այլք ընդդեմ Թուրքիայի»*, §§ 77-79): Փոխարենը՝ մեկ այլ գործում Դատարանը որպես Կոնվենցիային համապատասխանող համարեց մի կանոնակարգ, որում սահմանափակ կերպով թվարկվում էին այն իրավիճակները, որոնցում ոստիկանները կարող էին հրազեն գործադրել, ինչպես նաև նշվում էր, որ նման գործադրման հնարավորությունը պետք է դիտարկվի միայն ծայրահեղ դեպքում, և կրակ բացելուց առաջ պետք է արձակվեն նախազգուշական կրակոցները ոտքերի մակարդակով (*«Բականն ընդդեմ Թուրքիայի»*, § 51):

87. *«Մակարացիսն ընդդեմ Հունաստանի»* [ՄՊ] գործում, որը վերաբերում էր ոստիկանության կողմից քառասային հետապնդման մի դեպքի, որի ժամանակ դիմումատուն, ով անցել էր կարմիր լուսի տակ, ծանր վիրավորվել էր կրակոցից, Դատարանը գտավ, որ Հունաստանի ներպետական իրավունքն իրավապահ մարմինների աշխատակիցներին չի տրամադրել հստակ հանձնարարականներ և չափորոշիչներ խաղաղ պայմաններում ուժի գործադրման վերաբերյալ: Դատարանը հավելել է, որ անխուսափելիորեն դիմումատունն հետապնդած և վերջապես ձերբակալած ոստիկանները կարող էին գործել մեծ ինքնուրույնությամբ և դիմել անխոհեմ նախաձեռնությունների, ինչը հավանաբար տեղի չէր ունենա, եթե նրանք ստացած լինեին պատշաճ վերապատրաստում և հրահանգներ (§ 70):

88. Դատարանը նշել է, որ իրավասու մարմինները բավարար տեղեկություններ չեն ստացել ոստիկանի մասին նրան հրազեն վստահելուց առաջ (*«Գորովենկին և Բուզարան ընդդեմ Ուկրաինայի»*, § 39 գործ, որում մի ոստիկան, ով այդ պահին չէր կատարում իր ծառայողական պարտականությունները և մասնակցել էր մի վիճաբանության, իր ծառայողական հրազենից կրակ էր բացել՝ սպանելով դիմումատուների մտերիմներին, տե՛ս նաև *«Մաշո Գորգինն ընդդեմ նախկին Հարավսլավիայի Մակեդոնիայի Հանրապետության»*, § 52):

3. Ուժի գործադրումը թույլատրող բացառություններ

89. 2-րդ մասում սահմանված բացառությունները ցույց են տալիս, որ 2-րդ հոդվածն ակնհայտորեն անդրադառնում է այն դեպքերին, երբ մահը պատճառված է դիտավորյալ, սակայն դա այդ հոդվածի միակ առարկան չէ: 2-րդ հոդվածի տեքստը՝ ամբողջական դիտարկմամբ, վկայում է, որ 2-րդ մասով նախ և առաջ չեն սահմանվում այն իրավիճակները, որոնցում թույլատրվում է դիտավորյալ մահ պատճառել, այլ ամրագրված են այն իրավիճակները, որոնցում հնարավոր է «ուժ գործադրել», ինչը կարող է ակամայից մահվան հանգեցնել: Այդուհանդերձ, ուժի գործադրումը պետք է լինի «բացարձակապես անհրաժեշտ», որպեսզի բավարարի ա), բ) և գ) ենթակետերում հիշատակված նպատակներից մեկը (*«ՄրկՔենն և այլք ընդդեմ Միացյալ Թագավորության»*, § 148, *«Յուքսել Էրդողանը և այլք ընդդեմ Թուրքիայի»*, § 86, *«Ռամսահայր և այլք ընդդեմ Նիդեռլանդների»* [ՄՊ], § 286, *«Ջուլիանին և Գաջոն ընդդեմ Բտայիայի»* [ՄՊ], § 17)):

ա. Հսկողության չափորոշիչներ

90. Սկզբունքորեն, «բացարձակապես անհրաժեշտ» արտահայտության գործածումը 2-րդ հոդվածի 2-րդ մասում վկայում է այն մասին, որ հարկավոր է կիրառել անհրաժեշտության ավելի խիստ և հրամայական չափորոշիչ, քան սովորաբար օգտագործվում է այն հարցը որոշելու համար, թե արդյոք պետության միջամտությունը «անհրաժեշտ է եղել ժողովրդավարական հասարակությունում» Կոնվենցիայի 8-ից 11-րդ հոդվածների 2-րդ

մասի իմաստով: Մասնավորապես, գործադրված ուժը պետք է խստորեն համաչափ լինի 2-րդ հոդվածի 2-րդ մասի ա), բ) և գ) ենթակետերում հիշատակված նպատակներին (*«ՄրկՔենն և այլք ընդդեմ Միացյալ Թագավորության»*, § 149):

91. Դրանով հանդերձ՝ Դատարանը հիշեցնում է, որ նա ամբողջապես գիտակցում է ահաբեկչության դեմ պայքարում ժամանակակից պետությունների առջև ծառայած դժվարությունները և հետադարձ վերլուծության վտանգները: Այս առումով, Դատարանն ընդգծում է, որ անհրաժեշտ է տարբերակել ահաբեկչության դեմ պայքարի շրջանակներում կատարված քաղաքական որոշումները, որոնք իրենց բնույթով չեն ենթարկվում Դատարանի վերահսկողությանը և պետական մարմինների գործողությունների այլ հստակ տարրերը, որոնք կարող են ուղղակիորեն անդրադառնալ պաշտպանված իրավունքների վրա: Հետևաբար, 2-րդ հոդվածով հռչակված բացարձակ անհրաժեշտության չափորոշիչը պետք է կիրառվի՝ պահպանելով վերահսկողության տարբեր աստիճաններ և ելնելով այն հարցը պարզելու անհրաժեշտությունից, թե արդյոք և ինչպիսի չափով իրավասու մարմինները վերահսկել են իրավիճակը, ինչպես նաև հաշվի առնելով այս նրբանկատ ոլորտում կոնկրետ որոշումների կայացման հետ կապված համապատասխան այլ սահմանափակումները (*«Տագանան և այլք ընդդեմ Ռուսաստանի»*, § 481):

92. Հստակ անդրադառնալով պատանդների փրկության գործողություններին՝ Դատարանը գնահատել է, որ սկզբունքորեն նման գործողությունների պատրաստումն ու իրականացումը կարող են մանրակրկիտ վերահսկողության առարկա դառնալ: Այս առումով Դատարանը մտապահում է հետևյալ գործոնները. I) արդյո՞ք տվյալ գործողությունը եղել է ինքնաբուխ, թե իրավասու մարմինները հնարավորություն են ունեցել խորհել տվյալ իրավիճակի վերաբերյալ և ձեռնարկել հստակ նախապատրաստական միջոցներ, ii) արդյո՞ք իրավասու մարմինները ի վիճակի են եղել հիմնվել արդեն պատրաստված ընդհանուր բնույթի շտապ ծրագրի վրա, որ կապված չի եղել այն ճգնաժամի հետ, որի մասին գնում էր խոսքը, iii) իրավիճակի վերահսկողության աստիճանն ավելի բարձր է այն շենքից դուրս, որտեղ իրականացվում են փրկարար միջոցառումների մեծ մասը, և iv) որքան ավելի կանխատեսելի է վտանգը, այնքան ավելի մեծ է դրանից նախապես պաշտպանվելու պարտավորությունը (*«Տագանան և այլք ընդդեմ Ռուսաստանի»*, § 563):

բ. Ընդհանուր մոտեցում

93. Հաշվի առնելով այս դրույթի կարևորությունը ժողովրդավարական հասարակությունում՝ Դատարանը պետք է կարծիք կազմի ամենայն ուշադրությամբ ուսումնասիրելով մահ պատճառելու դեպքերը, մասնավորապես, երբ խոսքը գնում է մահացու ուժի դիտավորյալ գործադրման մասին, և պետք է հաշվի առնի ոչ միայն այդ ուժը գործադրած պետական գործակալների գործողությունները, այլև գործի բոլոր հանգամանքները, մասնավորապես՝ խնդրո առարկա գործողությունների նախապատրաստումն ու հսկողությունը (*«ՄրկՔենն և այլք ընդդեմ Միացյալ Թագավորության»*, § 150, *«Էրզին ընդդեմ Թուրքիայի»*, § 79):

94. Ինքնըստինքյան հասկանալի է, որ նպատակի և դրա հետապնդման համար օգտագործված միջոցների միջև պետք է լինի հավասարակշռություն (*«Գյուլեչն ընդդեմ Թուրքիայի»*, § 71):

95. Օրինակ, Դատարանը համարում է, որ սովորական ձերբակալություն իրականացնելու օրինական նպատակով մարդկանց կյանքը վտանգելը կարող է արդարացվել միայն բացարձակ անհրաժեշտության դեպքում: Այսպիսով, սկզբունքորեն նման

անհրաժեշտություն չի կարող առաջանալ, երբ հայտնի է, որ ձերբակալման ենթակա անձը որևէ մեկի կյանքի կամ ֆիզիկական անձեռնմխելիության համար որևէ վտանգ չի ներկայացնում և չի կասկածվում բռնի հանցագործություն կատարելու մեջ, նույնիսկ եթե դրանից կարող է բխել փախուստի դիմած անձին ձերբակալելու անհնարությունը (*«Նաչովան և այլք ընդդեմ Բուլղարիայի»* [ՄՊ], § 95, *«Կակուլին ընդդեմ Թուրքիայի»*, § 108):

i. Պետության գործակալների գործողություններ

96. Պետության գործակալների կողմից ուժի գործադրումը 2-րդ հոդվածի 2-րդ մասում հռչակված նպատակներից մեկին հասնելու համար կարող է արդարացվել այս դրույթի իմաստով, երբ դրա հիմքում ընկած է ազնիվ կշռադատված համոզմունք, որը իրադարձությունների պահին հիմնավոր պատճառներով համարվում վավերական է, սակայն հետագայում կարող է պարզվել դրա սխալ լինելը: Հակառակը պնդելու դեպքում՝ պետության և օրենքների կիրառման համար պատասխանատու վերջինիս գործակալների վրա կորվեր ոչ իրատեսական մի բեռ, որը կարող էր իրացվել նման գործակալների կամ երրորդ անձանց կյանքի հաշվին (*«Սըկֆենն և այլք ընդդեմ Միացյալ Թագավորության»*, § 200, *«Անդրոնիկուն և Գոնատանտինուն ընդդեմ Կիպրոսի»*, § 192, *«Բաբինսն ընդդեմ Միացյալ Թագավորության»*, § 138, *«Հուռիվանայենն ընդդեմ Ֆինլանդիայի»*, § 96):

97. Բացի այդ, Դատարանը համարում է, որ գործը հանգիստ պայմաններում դիտարկելու պարագայում՝ այն չի կարող իրավիճակի սեփական գնահատմամբ փոխարինել գործակալի գնահատումը, ով ստիպված է եղել արձագանքել գործողության ողջ թեժության պայմաններում մի իրողության, որը նա անկեղծ դիտարկել է որպես վտանգ սեփական կամ երրորդ անձի կյանքը փրկելու համար (*«Բաբինսն ընդդեմ Միացյալ Թագավորության»*, § 139, *«Հուռիվանայենն ընդդեմ Ֆինլանդիայի»*, § 97):

98. Երբ Դատարանը քննության է առնում պետության գործակալների գործողությունները, հիմնական հարցադրումը կայանում է նրանում, որպեսզի պարզել, թե արդյոք տվյալ անձն ազնվորեն և անկեղծորեն անհրաժեշտ է համարել ուժի գործադրումը: Այս հարցադրմանը պատասխանելու համար Դատարանը պետք է ստուգի նշված համոզմունքի սուբյեկտիվորեն ողջամիտ բնույթը՝ ամբողջապես հաշվի առնելով այն հանգամանքները, որոնց ներքո տեղի են ունեցել համապատասխան փաստերը: Եթե Դատարանը եզրակացնում է, որ նման համոզմունքը չի եղել սուբյեկտիվորեն ողջամիտ (այսինքն՝ այն հիմնված չի եղել սուբյեկտիվորեն վավերական պատճառների վրա), հավանական է, որ Դատարանը կդժվարանա ընդունել նման համոզմունքի ազնիվ և անկեղծ բնույթը (*«Արմանի Դա Միլվան ընդդեմ Միացյալ Թագավորության»* [ՄՊ], § 248, թեպետև ընթացակարգային պարտավորությունների հիմքերով):

ii. Գործողության նախապատրաստումն ու հսկողությունը

99. Ուժի գործադրման համապատասխանությունը 2-րդ հոդվածին որոշելու համար կարող է օգտակար լինել իմանալ, թե արդյոք իրավապահ մարմինների գործողությունները նախապատրաստվել և հսկվել են այնպես, որ հնարավորինս նվազագույնի հասցնեն մահացու ուժի գործադրումը կամ պատահական մահվան դեպքերը (*«Բաբինսն ընդդեմ Միացյալ Թագավորության»*, § 136, *«Հուռիվանայենն ընդդեմ Ֆինլանդիայի»*, § 94):

100. Դատարանը վերլուծում է գործողության նախապատրաստման և ղեկավարության փուլը 2-րդ հոդվածի տեսանկյունից՝ հաշվի առնելով, մասնավորապես, այն համատեքստը, որում տեղի է ունեցել միջադեպը, ինչպես նաև իրադրության զարգացման

եղանակը (*«Անդրոնիկուն և Կոնստանտինուն ընդդեմ Կիպրոսի»*, § 182, *«Յուրսել Էրդողանը և այլք ընդդեմ Թուրքիայի»*, § 86):

101. Դատարանի միակ մտահոգությունը պետք է լինի այն հարցի պարզումը, թե արդյոք ստեղծված հանգամանքներում իրավապահ գործողության նախապատրաստումն ու դեկլարումը վկայում է այն մասին, որ իրավասու մարմինները դրսևորել են ցանկալի զգոնություն կյանքի վտանգումը նվազագույնի հասցնելու համար, և որ վերջիններս անփութություն չեն դրսևորել ձեռնարկված միջոցների ընտրության հարցում (*«Բաբինսն ընդդեմ Միացյալ Թագավորության»*, § 141):

iii. Օրինակներ

102. Հետևյալ դեպքերում Դատարանը համարել է, որ ուժի գործադրումը խիստ իմաստով համաչափ կամ բացարձակապես անհրաժեշտ չի եղել Կոնվենցիայի 2-րդ հոդվածի 2-րդ կետում հռչակված նպատակներից մեկի իրականացման համար:

- *«Գյուլեչն ընդդեմ Թուրքիայի»* (§ 71), որի շրջանակներում դիմումատուի որդին սպանվել էր մի ցույցի ժամանակ, որին անվտանգության ուժերը՝ բախվելով բռնի գործողությունների և իրենց տրամադրության տակ չունենալով մահակներ, վահաններ, ջրցաններ, ռետինե գնդակներ կամ արցունքաբեր գազ, օգտագործել էին գնդացիներ: Տե՛ս նաև *«Էվրիմ Օքտեմն ընդդեմ Թուրքիայի»*, որի շրջանակներում մի անչափահաս ծանր վիրավորվել էր ցույցը ցրելու գործողության ընթացքում ոստիկանի զենքից արձակված պատահական գնդակից:
- *«Կակուլին ընդդեմ Թուրքիայի»* (§ 121), որում մի անգեն կիպրոսցի, ով ներթափանցել էր Կիպրոսի հյուսիսային և հարավային հատվածները բաժանող բուֆերային գոտի, սպանվել էր թուրք զինվորների կողմից:
- *«Վասիլևսկան և Կալուցկան ընդդեմ Լեհաստանի»* (§ 57), որում մի կասկածյալ սպանվել էր ոստիկանական գործողության ընթացքում:
- *«Տրևալեցն ընդդեմ Բելգիայի»* (§ 87), որում ոստիկանության հատուկ գործողությունների ստորաբաժանումը կրակոցներ էր արձակել լրագրողի վրա տեղեկացված չլինելով, որ տվյալ անձի ներկայությունն այդ գործողությանը եղել է թույլատրված:
- *«Նաչովան և այլք ընդդեմ Բուլղարիայի»* [ՄՊ], (§ 109), որում անգեն և փախուստի դիմած երկու զնչու սպանվել էր ռազմական ոստիկանների կողմից, ովքեր փորձում էին նրանց ձերբակալել:
- *«Տագանան և այլք ընդդեմ Ռուսաստանի»* (§ 611), որում պատանդներ էին սպանվել Հյուսիսային Օսիայի Բեալան քաղաքի դպրոցում ահաբեկիչների կողմից մեծ թվով պատանդների վերցման կապակցությամբ իրականացված փրկարար գործողության ընթացքում: Համեմատության համար տե՛ս գործ *«Ֆինոզենովը և այլք ընդդեմ Ռուսաստանի»* (§§ 226 և 236), որում բազմաթիվ պատանդներ սպանվել են մոսկովյան թատրոնում ահաբեկիչների կողմից պատանդներ վերցնելու կապակցությամբ իրականացրած փրկարար գործողության ընթացքում:

103. Փոխարենը՝ հետևյալ գործերում Դատարանը համարել է, որ ուժի կիրառումը խիստ համաչափ է եղել Կոնվենցիայի 2-րդ հոդվածի 2-րդ մասում հռչակված նպատակներից մեկին:

- «*Բարինան ընդդեմ Միացյալ Թագավորության*» (§ 141), որում դիմումատուի եղբայրը սպանվել էր ոստիկանների կողմից իր բնակարանի երկու ժամ տևած պաշարումից հետո: Տե՛ս նաև գործ «*Հուռիվանայենն ընդդեմ Ֆինլանդիայի*» (§ 107):
- «*Ջուլիանին և Գաջոն ընդդեմ Իտալիայի*» [ՄՊ], (§ 194), որում ԳՑ գազաթնամոզողի ընթացքում մի ցուցարար սպանվել էր անվտանգության ուժերի աշխատակցի կողմից:
- «*Փերքն և այլք ընդդեմ Թուրքիայի*» (§ 73), որում դիմումատուի մտերիմները սպանվել էին ոստիկանական գործողության ընթացքում, որն ուղղված էր արմատական զինված շարժման դեմ (տե՛ս նաև գործ «*Յուքսել Էրդողանը և այլք ընդդեմ Թուրքիայի*», (§ 100), որում դիմումատուների մտերիմները սպանվել էին, երբ որոշ զինված անձինք հարձակվել էին ոստիկանների վրա):

Բ. Առանձին ոլորտներ

Կոնվենցիայի 2-րդ հոդված

- « 1. Յուրաքանչյուրի կյանքի իրավունքը պաշտպանվում է օրենքով: (...)
- 2. Կյանքից զրկելը չի համարվում սույն հոդվածի խախտում, եթե այն հետևանք է ուժի գործադրման, ինչը բացարձակապես անհրաժեշտ է՝
 - ա. ցանկացած անձի անօրինական բռնությունից պաշտպանելու համար,
 - բ. օրինական ձեռքարկում իրականացնելու կամ օրինական հիմքերով կալանավորված անձի փախուստը կանխելու համար,
 - գ. խռովությունը կամ ապստամբությունը ճնշելու նպատակով օրենքին համապատասխան գործողություն ձեռնարկելու համար »:

«HUDOC» համակարգի առանցքային բառեր

- Դրական պարտավորություններ (2) – Կյանք (2-1)
- Ուժի գործադրում (2-2), Բացարձակապես անհրաժեշտ (2-2), Պաշտպանություն անօրինական բռնությունից (2-2), Իրականացնել օրինական ձեռքարկում (2-2), Փախուստը կանխել (2-2), Ճնշել խռովություն կամ ապստամբություն (2-2)

1. Մահվան դեպքեր, որոնք առաջացել են ձեռքարկման հատուկ միջոցների գործադրման հետևանքով

104. Մի շարք գործերում, որոնցում մահվան դեպքը առաջացել է որպես այդպիսիք ոչ մահաբեր ձեռքարկության հատուկ միջոցների օգտագործման հետևանքով, Դատարանը ուսումնասիրել է այն հարցը, թե արդյոք գոյություն է ունեցել պատճառահետևանքային կապ գործադրված ուժի և խնդրո առարկա անձի մահվան միջև, և արդյոք պետության գործակալները պահպանել են կյանքի իրավունքը՝ մատուցելով անհրաժեշտ բժշկական օգնություն («*Սկավուձո-Հագերն ընդդեմ Շվեյցարիայի*» (§ 55) գործ, որում ոստիկանները ձեռքարկվել էին առանձնապես զրգոված վիճակում գտնվող մի թունամոլի, ով հետագայում մահացել էր, «*Մաուդն ընդդեմ Ֆրանսիայի*» գործ, որը վերաբերում էր ավելի քան երեսուն րոպեների ընթացքում ոստիկանների կողմից ձեռնաշղթաներով գետնին

փորի վրա պատկեցրած երիտասարդի դիրքային շնչահեղձության մահվան դեպքին, *«Բուրբուրուն և այլք ընդդեմ Տրանսիայի»* գործ, որում դիմումատուների ընտանիքի անդամը, ով ուներ հոգեկան խանգարում, մահացել էր ոստիկանական գործողության ընթացքում առաջացած ինֆարկտից):

2. Կալանքի տակ մահվան դեպքեր

105. Կալանավորված անձինք գտնվում են խոցելի վիճակում և իրավասու մարմինները նրանց պաշտպանելու պարտավորություն են կրում: Հետևաբար, երբ անձը զրկվում է ազատությունից առողջ վիճակում և արձանագրվում է նրա վնասվածքն ազատման պահին, ապա պետության վրա դրվում է պարտավորություն համոզիչ բացատրություն ներկայացնել այդ վնասվածքների առաջացման վերաբերյալ: Ազատագրված անձի նկատմամբ ցուցաբերած վերաբերմունքը հիմնավորելու պարտավորությունը, որը դրված է իշխանությունների վրա, առաջանում է, հատկապես, երբ այդ անհատը մահանում է (*«Սալմանն ընդդեմ Թուրքիայի»*, [ՄՊ], § 99, *«Թանլին ընդդեմ Թուրքիայի»*, § 141, *«Թեքին և Արսլանն ընդդեմ Բելգիայի»*, § 83):

106. Հաջորդիվ բերված գործերում Դատարանը համոզիչ չի գտել պատասխանող պետության բացատրությունները դիմումատուների մահվան հետ կապված հանգամանքների վերաբերյալ:

- *«Անգելովան ընդդեմ Բուլղարիայի»* (§ 121), որում դիմումատուի որդին մահացել էր կալանքի տակ առնվելուց երկու ժամ անց գանգի շրջանում ստացած վնասվածքից:
- *«Քիշմիրն ընդդեմ Թուրքիայի»* (§ 105), որում դիմումատուի որդին մահացել էր Դիարբեքրի ոստիկանության բաժանմունքում թոքերի այտուցմամբ պայմանավորված շնչառական անբավարարությունից:
- *«Աքտաշն ընդդեմ Թուրքիայի»* (§ 294), որում դիմումատուների մտերիմը մահացել էր մեխանիկական շնչահեղձությունից կալանքի տակ գտնվելու ընթացքում:
- *«Մոյզինն ընդդեմ Լեհաստանի»* (§ 65), որում դիմումատուի որդին մահացել էր սթափարանում:
- *«Խայրուլինան ընդդեմ Ռուսաստանի»* (§§ 84-85), որում դիմումատուի ամուսինը մահացել էր ապօրինի կալանքի տակ գտնվելու ընթացքում ստացած վնասվածքներից:

3. Արտադատական մահապատիժներ

107. Դատարանը նաև քննության է առել գործեր, որոնցում չի վիճարկվել այն հանգամանքը, որ դիմումատուների մտերիմները մահացել են այնպիսի հանգամանքներում, որոնք ընդգրկված չեն 2-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված որևէ բացառության շրջանակում: Նման տեսակի գործերում, եթե Դատարանը, ելնելով գործի հանգամանքներից, հաստատված է համարում, որ դիմումատուների մտերիմները սպանվել են պետության գործակալների կողմից կամ վերջիններիս զանցաթողությամբ կամ լուռ համաձայնությամբ, ապա Դատարանը պատասխանող պետությանն այդ անձանց մահվան համար պատասխանատու է համարում (*«Ավշարն ընդդեմ Թուրքիայի»*, §§ 413-416, *«Խաշինը և Ականան ընդդեմ Ռուսաստանի»*, § 147, *«Էստամիրովն և այլք ընդդեմ Ռուսաստանի»*, § 114, *Մուսանան և այլք ընդդեմ Ռուսաստանի*, § 155, *«Ամուսան և այլք ընդդեմ Ռուսաստանի»*, §§ 83-84 և *հակառակը` «Դենիզչին և այլք ընդդեմ Կիպրոսի»*,

§ 373, «Բուլղանն ընդդեմ Թուրքիայի», § 81, «Նուրայ Շենն ընդդեմ Թուրքիայի» (թիվ 2), § 173, «Սեյհանն ընդդեմ Թուրքիայի», § 82):

108. Այնուամենայնիվ, նույնիսկ երբ Դատարանը ի վիճակի չէ ամեն ողջամիտ կասկածից վեր հաստատել այն հանգամանքը, որ պետության գործակալը ներգրավված է եղել խնդրո առարկա մահվան դեպքում, Դատարանը, այնուամենայնիվ, կարող է պատասխանող պետությանը համարել պատասխանատու, եթե գտնում է, որ համապատասխան իրավասու մարմինները չեն ձեռնարկել այն միջոցները, որոնք կարող էին ողջամտորեն ձեռնարկել մահացածի կյանքի իրավունքը պաշտպանելու համար («Մահմուտ Քայան ընդդեմ Թուրքիայի», §§ 87 և 101, «Քիլիչն ընդդեմ Թուրքիայի», §§ 64 և 77, «Գոնգաձենն ընդդեմ Ուկրաինայի», §§ 170-171 և հակառակը՝ «Դենիզչին և այլք ընդդեմ Կիպրոսի», §§ 374 և 377):

4. Անվտանգության ապահովման կամ ռազմական բնույթի գործողություն

109. Անվտանգության ապահովման գործողությունների առանձին ոլորտում Դատարանը գտնում է, որ պետության պատասխանատվությունը չի առաջանում միայն այն դեպքերում, երբ կարևոր տարրերով ապացուցվում է այն հանգամանքը, որ պետության գործակալների կողմից սխալ ուղղությամբ արձակված կրակոցներն առաջացրել են քաղաքացիական անձի մահ. նման պատասխանատվություն կարող է առաջանալ նաև այն դեպքերում, երբ նշված գործակալները, ընտրելով ընդդիմադիրների խմբի դեմ անվտանգության ապահովման գործողության իրականացման միջոցներն ու մեթոդները, չեն ձեռնարկել իրենց տրամադրության տակ եղած բոլոր նախազգուշական միջոցները՝ քաղաքացիական անձանց մահը պատահաբար առաջացնելու հնարավորությունից խուսափելու կամ նման վտանգն առնվազն նվազեցնելու նպատակով («Ահմեդ Օզկանը և այլք ընդդեմ Թուրքիայի», § 297):

110. Օրինակ, այս ոլորտում Դատարանը եզրակացրել է հետևյալը:

- Ձինվորականները չեն դիմել բավարար նախազգուշական միջոցների քաղաքացիական անձանց կյանքը պաշտպանելու համար («Էրզին ընդդեմ Թուրքիայի» (§ 81), որում դիմումատուի քույրը սպանվել էր «Քուրդիստնի բանվորական կուսակցության» դեմ անվտանգության ուժերի կողմից կազմակերպված դարանակալման ընթացքում):
- Եթե անվտանգության ուժերի կողմից կրակ բացելու որոշումը՝ ի պատասխան գյուղից իրենց ուղղությամբ արձակված կրակոցների, եղել է բացարձակապես անհրաժեշտ կյանքի պաշտպանության նպատակով, ապա Թուրքիան չի կատարել կյանքը պաշտպանելու իր պարտավորությունը, որը բխում է 2-րդ հոդվածի դրույթներից, քանի որ անվտանգության ուժերն այնուհետև չեն ստուգել, թե արդյոք քաղաքացիական անձանց շրջանում եղել էին զոհեր («Ահմեդ Օզկանը և այլք ընդդեմ Թուրքիայի» (§§ 306-308), որում ահաբեկիչներին ձերբակալելու համար զինվորականների ներխուժումը մի գյուղ երկու երեխաների մահվան պատճառ էր դարձել):
- Ձինվորական գործողությունը չի նախապատրաստվել և իրականացվել քաղաքացիական բնակչության կյանքը խնայելու համար բոլոր նախազգուշական միջոցների գործադրմամբ («Բասանն և այլք ընդդեմ Ռուսաստանի» (§ 199), որում խոսքը գնում էր Չեչնիայի պատերազմի ժամանակ ռուս մարտական օդուժի կողմից շարասյան մահաբեր ուրակոծման մասին, տե՛ս նաև գործ «Աբուևան և

այլք ընդդեմ Ռուսաստանի», (§ 203) և գործ *«Բենզերը և այլք ընդդեմ Թուրքիայի»* (§ 184), որոնցում Դատարանը հիշեցրել է, որ քաղաքացիական բնակչության և նրանց գյուղերի զանգվածային ուժեղացումն օդուծի կողմից անընդունելի է ժողովրդավարական հասարակությունում և անհամատեղելի է Կոնվենցիայի 2-րդ հոդվածի 2-րդ մասում ուժի օգտագործման վերաբերյալ ամրագրված նպատակներից որևէ մեկի հետ, ինչպես նաև այն, որ ռազմական հակամարտություններում ուժի օգտագործումը կարգավորվում է միջազգային մարդասիրական իրավունքի սովորութական կանոններով և միջազգային համաձայնագրերով:

- *«Շիրին Յիլմազն ընդդեմ Թուրքիայի»* գործով, որի շրջանակներում դիմումատուի ամուսինը սպանվել էր հրետանային կրակով, Դատարանը չի կարողացել եզրակացնել ամեն ողջամիտ կասկածից վեր, որ անվտանգության ուժերը նրան սպանել են դիտավորյալ կամ անփութությամբ (§ 76, տե՛ս նաև *«Զենզինն ընդդեմ Թուրքիայի»*, § 44):

111. 2-րդ հոդվածը պետք է հնարավորինս մեկնաբանվի միջազգային իրավունքի, մասնավորապես, մարդասիրական միջազգային իրավունքի այն կանոնների լույսի ներքո, որոնք էական դերակատարում ունեն և վայելում են համընդհանուր ճանաչում զինված հակամարտությունների ժամանակ դաժանության և անմարդկային վերաբերմունքի մեղմացման առումով: Միջազգային հակամարտության գոտում պայմանավորվող պետությունները պետք է պաշտպանեն այն անձանց կյանքը, ով չի մասնակցում կամ այլևս չի մասնակցում ռազմական գործողություններին, ինչը, մասնավորապես, պահանջում է բժշկական օգնության մատուցում վիրավորներին: Ինչ վերաբերում է մարտերում կամ իրենց վնասվածքներից մահացած անձանց, ապա հաշվետվողականության պարտավորությունը ենթադրում է, որ նրանց մարմինները պետք է պատեհ եղականով հողին հանձնվեն, և համապատասխան մարմինները պետք է հավաքեն և հաղորդեն տեղեկություններ խնդրո առարկա անձանց ինքնության և ճակատագրի վերաբերյալ կամ լիազորեն զբաղվել դրանով Կարմիր խաչի միջազգային կոմիտեի պես մարմիններին (*«Վառնավան և այլք ընդդեմ Թուրքիայի»* [ՄՊ], § 185): Այսպիսով, նույնիսկ միջազգային զինված հակամարտության դեպքում Կոնվենցիայի շրջանակներում ամրագրված երաշխիքները շարունակում են կիրառվել, թեպետև մեկնաբանվում են միջազգային մարդասիրական իրավունքի կանոնների չափորոշիչներով (*«Հասանն ընդդեմ Միացյալ Թագավորության»* [ՄՊ], § 104):

5. Անհետացումներ

ա. Մահվան կանխավարկած

112. Երբ անձը գրկվում է ազատությունից առողջ վիճակում, և արձանագրվում է նրա վնասվածքն ազատման պահին, ապա պետության վրա դրվում է պարտավորություն համոզիչ բացատրություն ներկայացնել այդ վնասվածքների առաջացման վերաբերյալ, հակառակ դեպքում՝ կարող է կիրառելի համարվել Կոնվենցիայի 3-րդ հոդվածը: Նույն տրամաբանությամբ՝ 5-րդ հոդվածը պետության վրա դնում է կալանքի տակ գտնվող ցանկացած անձի գտնվելու վայրը և իրավասու մարմինների հսկողության տակ գտնվելու հանգամանքը հայտնելու պարտավորություն: Հարկավոր է պարզել, թե արդյոք իրավասու մարմինների կողմից ճշմարտանման բացատրության բացակայությունը կալանավորի ճակատագրի վերաբերյալ՝ վերջինիս մարմնի բացակայությամբ, կարող է նաև հարցեր հարուցել Կոնվենցիայի 2-րդ հոդվածի առումով, կախված է գործի բոլոր հանգամանքներից, մասնավորապես՝ պայմանավորված է նյութական տարրերի վրա

հիմնված այնպիսի բավարար առարկայական ապացույցների առկայությամբ, որոնց հիման վրա կարելի է եզրակացնել ապացույցի բավարար մակարդակով, որ կալանավորը կարող է մահացած համարվել կալանքի ընթացքում (*«Թիմուրթաշն ընդդեմ Թուրքիայի»*, § 82):

113. Այս առումով, խնդրո առարկա անձի կալանավորման պահից անցած ժամանակահատվածը թեպետև ինքնին որոշիչ չէ, սակայն պետք է հաշվի առնվի որպես գործոն: Հարկ է ընդունել, որ որքան երկար ժամանակ է անցնում առանց կալանավորված անձի վերաբերյալ նորություններ ստանալու, այնքան ավելի հավանական է, որ նա մահացել է: Այսպիսով, ժամանակ անցնելու հանգամանքը կարող է որոշակի ազդեցություն ունենալ առարկայական ապացույցների այլ տարրերին տրվող կարևորության վրա նախքան հնարավոր լինի եզրակացնել, որ խնդրո առարկա անձը պետք է մահացած համարվի: Ըստ Դատարանի նման իրավիճակը հարուցում է այնպիսի հարցադրումներ, որոնք դուրս են գալիս 5-րդ հոդվածի խախտում ենթադրող սովորական անկանոն կալանքի շրջանակներից: Նման մեկնաբանությունը համապատասխանում է 2-րդ հոդվածով երաշխավորված կյանքի իրավունքի իրական պաշտպանությանը, որը Կոնվենցիայի էական դրույթներից մեկն է (*«Թանիշը և այլք ընդդեմ Թուրքիայի»*, § 201):

114. Այնուամենայնիվ, մահվան այս կանխավարկածը չի կարող ավտոմատ կերպով առաջ քաշվել, այն բերվում է միայն գործի հանգամանքների քննությունից հետո, ընդ որում էական տարր է համարվում այս առումով տվյալ անձին վերջին անգամ տեսնելու կամ լսելու պահը (*«Վառնավան և այլք ընդդեմ Թուրքիայի»* [ՄՊ], § 143, *«Ասլախանովան և այլք ընդդեմ Ռուսաստանի»*, § 100):

115. Ավելին, որևէ անձի անհետացման հարցում պետության ներգրավման ապացուցումը անհրաժեշտ պայման չէ (*sine qua non*) ապացուցելու համար, որ տվյալ անձը կարող է մահացած համարվել. որոշ հանգամանքներում ինքնին անհետացման հանգամանքը կարող է դիտվել որպես հնարավոր մահաբեր իրողություն (*«Մեդովան ընդդեմ Ռուսաստանի»*, § 90):

116. Օրինակ, Չեչնիայի հակամարտության առնչությամբ Դատարանը եզրակացրել է, որ երբ անձը գտնվում է չպարզված ինքնությամբ զինվորականների հսկողության տակ, և հետագայում նման կալանքի հանգամանքը չի ընդունվում, ապա այդ իրավիճակը կարող է դիտարկվել որպես կյանքի սպառնալիք (*«Բայսանան ընդդեմ Ռուսաստանի»*, § 119, *«Բեկտուլտանովան ընդդեմ Ռուսաստանի»*, § 83):

117. Նույն կերպ, Դատարանը համարել է, որ Թուրքիայի հարավ-արևելքում 1992-1996թթ. ընկած ժամանակահատվածում անձի անհետացումը կարող էր դիտարկվել որպես կյանքի համար վտանգ ներկայացնող իրավիճակ (*«Օսմանօղլուն ընդդեմ Թուրքիայի»*, §§ 57-58, *«Մերյեմ Չելիքը և այլք ընդդեմ Թուրքիայի»*, § 58), մասնավորապես, եթե իշխանությունները նրան կասկածել են «Քուրդիստանի աշխատավոր կուսակցության» հետ կապված լինելու մեջ (*«Էնզիլ Օզդեմիրն ընդդեմ Թուրքիայի»*, § 45):

բ. Ենթադրյալ մահվան դեպքի առնչությամբ ծագող պետության պատասխանատվություն

118. Երբ Դատարանը ամեն ողջամիտ կասկածից վեր հաստատված է համարում, որ անհետացած անձը պետք է ենթադրաբար մահացած համարվի, պետության գործակալների կողմից չընդունված կալանքի հետևանքով, ծագում է վերջինիս պատասխանատվությունը: Քանի որ նման հանգամանքը չի կարող որևէ պարագայում դիտարկվել Կոնվենցիայի 2-րդ հոդվածի 2-րդ մասում թվարկված որևէ պատճառների

հիմնավորմամբ, ուստի Դատարանը պատասխանող պետությանը անհետացած անձի ենթադրյալ մահվան համար պատասխանատու է համարում (*«Աքդենիզը և այլք ընդդեմ Թուրքիայի»*, § 101, *«Օրհանն ընդդեմ Թուրքիայի»*, § 331, *«Իփեքն ընդդեմ Թուրքիայի»*, § 168, *«Բազորկինան ընդդեմ Ռուսաստանի»*, § 111, *«Մագոմադովն ընդդեմ Ռուսաստանի»*, § 99, *«Մերյեմ Չելիքը և այլք ընդդեմ Թուրքիայի»*, § 60, *«Միկիևան և այլք ընդդեմ Ռուսաստանի»*, § 160, *«Կուշտովան և այլք ընդդեմ Ռուսաստանի»*, § 83 և հակառակը՝ *«Թահսին Աքարն ընդդեմ Թուրքիայի»* [ՄՊ], §§ 217-219, *«Նեսիբե Հարան ընդդեմ Թուրքիայի»*, § 68, *«Շաֆիևան ընդդեմ Ռուսաստանի»*, § 79, *«Կագիրովն ընդդեմ Ռուսաստանի»*, § 97):

գ. Կյանքի իրավունքը պաշտպանելու պետության պատասխանատվություն

119. Անձի անհետացումը հնարավոր մահաբեր հանգամանքներում պետության վրա դնում է անհետացած անձի կյանքի իրավունքը պաշտպանելու ուղղությամբ կոնկրետ միջոցներ ձեռնարկելու պարտավորություն Կոնվենցիայի 2-րդ հոդվածից բխող դրական պարտավորության լույսի ներքո (*«Քոքուն ընդդեմ Թուրքիայի»*, § 132, *«Օսմանոլուն ընդդեմ Թուրքիայի»*, § 75):

120. Այս առումով, հետաքննություն կամ հսկողություն իրականացնող իրավասու մարմինների կողմից ցանկացած անվտանգության դրսևորում, երբ խոսքը գնում է պետության գործակալների մասին, ովքեր գործելով իրենց պաշտոնական գործառույթների շրջանակներից դուրս՝ իրական և անխուսափելի եղանակով սպառնում են ինքնությունը հաստատված անձին, կարող է առաջացնել կյանքը պաշտպանելու դրական պարտավորություն (*«Գոնգաձեն ընդդեմ Ուկրաինայի»*, § 170, *«Տուրլունան ընդդեմ Ռուսաստանի»*, §§ 100-101):

6. Անհատական կարգավիճակով հանդես եկող պետության գործակալների կողմից կատարված սպանություններ

121. Պայմանավորվող պետության գործակալի ցանկացած գործողություն, որը վերջինիս գործառույթների իրականացման շրջանակներում դառնում է մարդու իրավունքների խախտման պատճառ, առաջացնում է Կոնվենցիայի հիմքով տվյալ պետության պատասխանատվությունը (*«Կրաստանովն ընդդեմ Բուլղարիայի»*, § 53): Պետական գործակալի կարգավիճակը Կոնվենցիայի իմաստով որոշվում է մի շարք տարբեր չափանիշների հիման վրա, որոնցից մեկը գործառնական չափորոշիչն է (*«Ֆերգեչն ընդդեմ Խորվաթիայի»*, § 36): Ավելին, երբ պետության գործակալը գործում է ապօրինաբար, վերջինիս գործողությունների վերագրելիությունը պետությանը պահանջում է բոլոր հանգամանքների, ինչպես նաև խնդրո առարկա վարքագծի բնույթի և հանգամանքների ողջ համակազմի քննություն (*«Մաշո Գորգինն ընդդեմ նախկին Հարավսլավիայի Մակեդոնիայի Հանրապետության»*, §§ 47-48):

122. Մասնավորապես, Դատարանը համարում է, որ անհատական կարգավիճակով հանդես եկող պետական գործակալների կողմից անձի կյանքի կամ ֆիզիկական անձեռնմխելիության նկատմամբ կատարված ցանկացած ոտնձգություն ուղղակիորեն չի առաջացնում պետության պատասխանատվությունը, բացառությամբ այն դեպքերի, երբ նման անձինք կատարում են իրենց պաշտոնական պարտականությունները, երբ թույլ են տալիս խնդրո առարկա խախտումն առնվազն իրավասու մարմինների հանցավոր կամ լուր համաձայնությամբ՝ անկախ այն հանգամանքից, թե արդյոք տվյալ փաստերի տեղի ունենալու պահին նրանք կատարելիս են եղել իրենց պաշտոնական

պարտականությունները, թե ոչ (*«Էնուկիձեն և Գիրզվիլիանին ընդդեմ Վրաստանի»*, § 290, *«Կոտելնիկովն ընդդեմ Ռուսաստանի»*, § 93, *Ֆերգեչն ընդդեմ Խորվաթիայի*, § 36):

123. Այնուամենայնիվ, նման դեպքերում պահպանվում է իր իրավասության ներքո գտնվող անձանց կյանքը պահպանելու համար ամեն միջոց ձեռնարկելու պետության վրա դրված պարտավորությունը (տե՛ս, օրինակ, *«Գորովենկին և Բուզարան ընդդեմ Ուկրաինայի»* (§§ 31-40) վճռում ընդունված տրամաբանությունը):

II. Ընթացակարգային պարտավորություններ

Կոնվենցիայի 2-րդ հոդվածի 1-ին մաս

« 1. Յուրաքանչյուրի կյանքի իրավունքը պաշտպանվում է օրենքով: (...) »

«HUDOC» համակարգի առանցքային բառեր

Արդյունավետ քննություն (2-1)

Ա. Ընթացակարգային պարտավորությունների շրջանակ

124. Պետության վրա դրված ընթացակարգային պարտավորությունները նախ և առաջ ամրագրվում են այն դեպքերում, երբ խոսքը գնում է պետության գործակալների կողմից մահացու ուժի օգտագործման մասին: Որպեսզի պետական գործակալներին հասցեագրված կամայական սպանությունների ընդհանուր արգելքը գործնականում արդյունավետ լինի, հարկավոր է, որ գոյություն ունենա այնպիսի ընթացակարգ, որը թույլ կտա վերահսկել պետական մարմինների կողմից մահացու ուժի գործադրման օրինականությունը: Այս դրույթով սահմանվող կյանքի իրավունքը պաշտպանելու պարտավորությունը՝ Կոնվենցիայի 1-ին հոդվածի ուժով պետության վրա դրված ընդհանուր պարտականության համադրությամբ, կայանում է նրանում, որ ապահովել «այն իրավունքներն ու ազատությունները, որոնք սահմանված են սույն Կոնվենցիայում», ինչը ենթադրում և պահանջում է արդյունավետ քննության իրականացում, երբ ուժի գործադրումը, մասնավորապես, պետության գործակալների կողմից առաջացրել է մարդու մահ (*«ՄրկեՔենն և այլք ընդդեմ Միացյալ Թագավորության»*, § 161):

125. Ելնելով այս դրույթից՝ Դատարանը գնահատում է, որ նշված պարտավորությունն ի հայտ է գալիս է տարբեր իրավիճակներում, որոնցում անհատը ստացել է հնարավոր մահաբեր վնասվածքներ, մահացել է կամ անհետացել բռնի կամ կասկածելի հանգամանքներում՝ անկախ այն բանից, թե արդյոք ենթադրաբար պատասխանատու անձինք հանդիսանում են պետության գործակալներ, թե մասնավոր անձինք, ինչպես նաև անկախ այն բանից, թե արդյոք վերջիններիս ինքնությունը հայտնի է, թե ոչ, կամ այն բանից, թե արդյոք տուժողն ինքն է իրեն պատճառել այդ վնասվածքները, թե ոչ (օրինակ, կալանավորների միջև ծագող բռնության առնչությամբ՝ *«Փոլ և Օդրի Էդվարդսն ընդդեմ Միացյալ Թագավորության»* (§ 69), վաղաժամ ազատված կամ սոցիալական վերաինտեգրման ծրագրում ընդգրկված կալանավորների կողմից կատարված սպանություններ՝ *«Մայորանոն և այլք ընդդեմ Բուլղարիայի»* (§§ 123-26), հայտնի կամ բարձրաստիճան անձանց սպանություններ՝ *«Կոլեվին ընդդեմ Բուլղարիայի»* (§§ 191-215),

ընտանեկան բռնության դեպքեր՝ «Օփուզն ընդդեմ Թուրքիայի» (§§ 150-150), կասկածելի մահվան դեպքեր կամ անհետացումներ՝ «Լորգան ընդդեմ Մոլդովայի» (§ 26), «Թահսին Աքարն ընդդեմ Թուրքիայի» [ՄՊ], (§ 226), ինքնասպանություն՝ «Տրուբնիկովն ընդդեմ Ռուսաստանի», «Մոսենձն ընդդեմ Ուկրաինայի» (§ 92):

Այս դրույթը բխում է 2-րդ հոդվածից, որով պետության վրա դրվում է կյանքի իրավունքն ապահովելու պարտավորություն այնպիսի հստակ քրեական օրենսդրության սահմանմամբ, որով կգսպվի անձի դեմ ուղղված ոտնձգությունների կատարումը, և որը հիմնված կլինի խախտումների կանխարգելման, զսպման և պատժման նպատակով ստեղծված կիրառման մեխանիզմի վրա: Նշված պարտավորությունն իր ենթատեքստով պահանջում է արդյունավետ պաշտոնական քննության իրականացում այն դեպքերում, երբ հիմքեր կան կարծելու, որ անհատը հնարավոր մահացու վնասվածքներ է ստացել կասկածելի հանգամանքներում՝ չնայած խնդրո առարկա անձի կյանքի նկատմամբ ոտնձգություն կատարած ենթադրյալ անձի պետության գործակալ լինելու կարգավիճակի բացակայությանը («Մուստաֆա Թունչը և Ֆեչիր Թունչն ընդդեմ Թուրքիայի» [ՄՊ], § 171):

126. Դատարանն ընդլայնել է այս պարտավորությունը՝ տարածելով այն անփութության հիմքով պետության պատասխանատվությունն առաջացնող հանգամանքներում հնարավոր մահացու վնասվածքների կամ մահվան դեպքերի վրա (տե՛ս, օրինակ, առողջապահության ոլորտում՝ գործ «Լոպես դե Սուսա Ֆերնանդեսն ընդդեմ Պորտուգալիայի» [ՄՊ], (§ 214) և ճանապարհատրանսպորտային պատահարներ՝ գործ «Աննա Տոդորովան ընդդեմ Բուլղարիայի», (§ 72)): Նման դեպքերում Կոնվենցիայի 2-րդ հոդվածը պետության վրա դնում է նաև պարտավորություն համոզվելու, որ այն ունի արդյունավետ և անկախ դատական համակարգ, որն այնպիսի իրավական ճանապարհներ է առաջարկում, որոնք թույլ են տալիս հաստատել փաստերը, պատասխանատվության ենթարկել մեղավորներին և պատշաճ փոխհատուցում տրամադրել տուժողներին («Սինիմն ընդդեմ Թուրքիայի», § 59, «Սյեչոնսկան ընդդեմ Լեհաստանի», § 66): Դատարանն աստիճանաբար և որոշակի շտկումներով այս տեսակի գործերի շրջանակ է տեղափոխել հետաքննություն անցկացնելու պարտավորության ընդհանուր սկզբունքները, մասնավորապես՝ դրանց պարտադիր նվազագույն նորմերը (տե՛ս մաս «Ի» ստորև):

Բ. Կապը նյութական և ընթացակարգային հայեցակետերի միջև

127. Դատարանի նախադեպային իրավունքի շրջանակներում քննություն անցկացնելու պետության պարտավորությունը դիտարկվում է որպես 2-րդ հոդվածին ներհատուկ պարտավորություն, որը, մասնավորապես, պահանջում է, որ կյանքի իրավունքը «պաշտպանված լինի օրենքով»: Թեև այս պարտավորությունը չկատարելը կարող է հետևանքներ ունենալ 13-րդ հոդվածով պաշտպանված իրավունքի համար, սակայն 2-րդ հոդվածի ընթացակարգային պարտավորությունն իրենից ներկայացնում է առանձին պարտավորություն («Բլիանն ընդդեմ Թուրքիայի» [ՄՊ], §§ 91-92, «Շիլինն ընդդեմ Սլովենիայի» [ՄՊ], §§ 153-154): Այն կարող է առանձին և անկախ «միջամտության» արձանագրման տեղիք տալ: Նման եզրակացությունը բխում է այն հանգամանքից, որ ընթացակարգային պարտավորությունների հարցը Դատարանը միշտ քննել է նյութական պարտավորության կատարման հարցից առանձին (իսկ անհրաժեշտության դեպքում՝ եզրակացրել է, որ տեղի է ունեցել 2-րդ հոդվածի ընթացակարգային հայեցակետից տարբերվող խախտում), ընդ որում տարբեր առիթներով ընթացակարգային

պարտավորության խախտման մասին պնդումը բերվել է այս դրույթի նյութական հայեցակետի առնչությամբ բողոքի բացակայության պայմաններում (*«Արմանի Դա Սիլվան ընդդեմ Միացյալ Թագավորության»* [ՄՊ], § 231):

Գ. Քննության նպատակ

128. 2-րդ հոդվածից բխող քննության էական նպատակն է ապահովել կյանքի իրավունքը պաշտպանող ներպետական իրավունքի դրույթների արդյունավետ կիրառումն այն դեպքերում, երբ պետությունը ներկայացնող գործակալների կամ մարմինների վարքագիծը կարող է հարցականի տակ առնվել, ինչպես նաև, ապահովել որ վերջիններս պատասխանատվության ենթարկվեն իրենց պատասխանատվության ներքո վրա հասած մահվան դեպքերի համար (*«Հյու Ջորդանն ընդդեմ Միացյալ Թագավորության»*, § 105, *«Նաչովան և այլք ընդդեմ Բուլղարիայի»* [ՄՊ], § 110, *«Ալ-Սկեյինին և այլք ընդդեմ Միացյալ Թագավորության»* [ՄՊ], § 163):

Դ. Քննության ձև

129. 2-րդ հոդվածով հետապնդվող նպատակների իրականացումն իր բնույթով հնարավոր դարձնելու համար քննության ձևի որոշումը կարող է տարբերվել ըստ հանգամանքների: Անկախ քննության պայմաններից՝ իրավասու մարմինները համապատասխան հաղորդություն ստանալուց հետո պետք է գործեն ի պաշտոնե սեփական նախաձեռնությամբ: Նշված մարմինները չպետք է թողնեն պաշտոնական բողոք ներկայացնելու նախաձեռնությունը կամ քննության ընթացակարգ ներգրավելու պատասխանատվությունը մահացածի հարազատների վրա (*«Ալ-Սկեյինին և այլք ընդդեմ Միացյալ Թագավորության»* [ՄՊ], § 165):

130. Ինչ վերաբերում է այն սպանություններին, որոնց վերաբերյալ պնդում կա, որ դրանք կատարվել են պետության գործակալների կողմից կամ վերջիններիս հետ հանցավոր համաձայնությամբ, ապա տուժողի հարազատների, այլ ոչ թե իրավասու մարմինների նախաձեռնությամբ քաղաքացիական ատյաններում քննվող գործը, որի շրջանակներում հանցագործության ենթադրյալ կատարողը չի պարզվում և չի պատժվում, չի կարող հաշվի առնվել պետության կողմից Կոնվենցիայի 2-րդ հոդվածից բխող (*«Հյու Ջորդանն ընդդեմ Միացյալ Թագավորության»*, § 141) իր ընթացակարգային պարտավորությունների կատարման հարցի վերլուծությունում, քանզի նման դեպքում նշված պարտավորությունները չեն կարող բավարարվել ընդհամենը կրած վնասի փոխհատուցմամբ (*«Սրեյֆերն ընդդեմ Միացյալ Թագավորության»* (որոշ.), § 121, *«Բագորկինան ընդդեմ Ռուսաստանի»*, § 117, *«Ալ-Սկեյինին և այլք ընդդեմ Միացյալ Թագավորության»* [ՄՊ], § 165):

131. Դատարանի տեսանկյունից դրա պատճառն այն է, որ պաշտոնական քննություն անցկացնելու պարտավորություն նախատեսող 2-րդ հոդվածի մեկնաբանությունը հիմնավորվում է ոչ միայն այն հանգամանքով, որ նման տեսակի խախտման մասին ցանկացած պնդում սովորաբար ենթադրում է քրեական պատասխանատվության առաջացում, այլև այն հանգամանքի բերումով, որ հաճախ գործնականում, երբ խոսքը գնում է պետության գործակալների կողմից կամ վերջիններիս հետ հանցավոր համաձայնությամբ ենթադրաբար կատարված սպանությունների մասին, պետության խնդրո առարկա գործակալները կամ մարմինները գրեթե միակն են, որ գիտեն կամ կարող են իմանալ մահվան իրական հանգամանքները, այնպես որ պատշաճ ներպետական ընթացակարգերի մեկնարկը՝ քրեական հետապնդման, կարգապահական

գործողությունների, ինչպես նաև տուժողներին և նրանց ընտանիքներին տրամադրվող իրավական պաշտպանության միջոցների իրացումը թույլատրող ընթացակարգերի տեսքով, կախված է պատշաճ պաշտոնական քննության իրականացումից (*«Մակարացիան ընդդեմ Հունաստանի»* [ՄՊ], § 73, *«Խաշինը և Ականան ընդդեմ Ռուսաստանի»*, §§ 120-121):

Ե. Հսկողության բնույթ և աստիճան

132. Քննության արդյունավետության նվազագույն չափորոշիչը բավարարող հսկողության բնույթն ու աստիճանը կախված է տվյալ դեպքում առկա մասնավոր հանգամանքներից և պետք է գնահատվի բոլոր փաստերի լույսի ներքո՝ հաշվի առնելով քննչական աշխատանքի գործնական իրողությունները (*«Վալենտին Կամպենուի անվան իրավաբանական ռեսուրսների կենտրոնն ընդդեմ Ռումինիայի»* [ՄՊ], § 147): Չի կարելի հնարավոր իրավիճակների ողջ բազմազանությունը վերածել քննչական գործողությունների մի հասարակ ցուցակի կամ պարզեցված այլ չափորոշիչների (*«Վելիկովան ընդդեմ Բուլղարիայի»*, § 80):

133. Երբ անձը զրկվել է կյանքից պետության գործակալի կողմից կասկածելի հանգամանքներում, իրավասու ներպետական մարմինները պետք է այս փաստերի առնչությամբ անցկացվող քննությունը ենթարկեն առանձնապես խիստ հսկողության (*«Էնուկիձեն և Գիրգվիլիանին ընդդեմ Վրաստանի»*, § 277, *«Արմանի Դա Միլվան ընդդեմ Միացյալ Թագավորության»* [ՄՊ], § 234):

134. Անհետացումներն իրենցից ներկայացնում են մի առանձին երևույթ, որը բնորոշվում է այնպիսի իրավիճակով, երբ մտերիմները շարունակաբար առերեսվում են անորոշության և պատահածի վերաբերյալ բացատրությունների և տեղեկությունների բացակայության հետ, ընդ որում այս առումով նշանակալի տարբերը երբեմն կարող են նույնիսկ դիտավորյալ թաքցվել կամ քողարկվել: Այս իրավիճակը հաճախ երկար է տևում՝ դրանով իսկ երկարացնելով տուժողի հարազատների տանջանքը: Անհետացած անձի և նրա գտնվելու վայրի վերաբերյալ հետագա բացատրությունների բացակայությունը կազմում է լրացուցիչ հատկանշական տարր, որը ստեղծում է շարունակական իրավիճակ: Հետևաբար, նման դեպքերում ընթացակարգային հնարավոր պարտավորությունը պահպանվում է այնքան ժամանակ մինչև խնդրո առարկա անձի ճակատագիրը չպարզվի. անհրաժեշտ քննության շարունակական բացակայությունը դիտվելու է որպես շարունակական խախտում առաջացնող իրողություն: Այդպես է պատահում, նույնիսկ երբ հնարավոր է վերջնականապես համարել, որ տուժողը մահացած է (*«Վառնավան և այլք ընդդեմ Թուրքիայի»* [ՄՊ], § 148):

Զ. Քննության պահանջների չափորոշիչներ

1. Անկախություն

135. Ընդհանուր առմամբ, կարելի է համարել, որ պետության գործակալների կողմից կատարված ապօրինի սպանության վերաբերյալ հաղորդության հիման վրա քննությունն արդյունավետ է, եթե դրանով զբաղվող անձինք անկախ են ներգրավված անձանցից: Սա ենթադրում է ոչ միայն ստորակարգային կամ ինստիտուցիոնալ կապի բացակայություն, այլև հստակ անկախություն: Նույնը վերաբերում է ուժի օգտագործման հարցում պետության մենաշնորհի վերաբերյալ հասարակական կարծիքին հետևելուն (*«Արմանի Դա Միլվան ընդդեմ Միացյալ Թագավորության»* [ՄՊ], § 232):

136. 2-րդ հոդվածի պահանջները պարտադրում են քննության ողջ համակազմի վերաբերյալ հստակ ուսումնասիրություն, այլ ոչ թե վերացական գնահատում (*«Մուստաֆա Թունչը և Ֆեչիրե Թունչն ընդդեմ Թուրքիայի»* [ՄՊ], § 222):

137. Ավելին, 2-րդ հոդվածը պահանջում է ոչ թե այն, որ քննությամբ զբաղվող անձինք և մարմիններն ունենան բացարձակ անկախություն, այլ որ դրանք բավարար չափով անկախ լինեն այն անձանցից և կառույցներից, ում պատասխանատվությունը կարող է առաջանալ: Անկախության աստիճանի բավարար բնույթը գնահատվում է յուրաքանչյուր դեպքի անհրաժեշտաբար մասնավոր հանգամանքների ողջ համակազմի դիտարկմամբ (*նույն տեղում*, § 223):

138. Այնուամենայնիվ, կանոնակարգային կամ ինստիտուցիոնալ անկախության հարցականի տակ առնվելու դեպքում՝ այս իրավիճակը, նույնիսկ եթե այն անհրաժեշտաբար որոշիչ չէ, պետք է հանգեցնի նրան, որ Դատարանն անցնի այն հարցի ավելի խիստ ուսումնասիրությանը, թե արդյոք քննությունն անցկացվել է անկախ եղանակով: Երբ ի հայտ է գալիս քննության անկախության և անկողմնակալության հարցը, հարկավոր է փորձել պարզել, թե արդյոք և ինչպիսի չափով վիճահարույց հանգամանքը խախտել է քննության արդյունավետությունը, ինչպես նաև պարզել մահվան հանգամանքների վրա լույս սփռելու և հնարավոր մեղավորներին պատժելու դրա կարողությունը (*նույն տեղում*, § 224):

139. Այս առումով Դատարանն ընդգծել է, որ տեղեկատվություն և աջակցություն ստանալու հարցում դատախազներն անխուսափելիորեն հիմնվում են ոստիկանության վրա, և այս իրողությունը ինքնին բավարար չէ եզրակացնելու, որ նրանք օժտված չեն ոստիկանությունից բավարար անկախությամբ: Այդուհանդերձ, խնդիրներ կարող են առաջանալ, եթե որևէ դատախազ սերտ աշխատանքային հարաբերություններ ունի որևէ առանձին ոստիկանության ստորաբաժանման հետ (*«Ռամսահայր և այլք ընդդեմ Նիդերլանդների»* [ՄՊ], § 344):

140. Դատարանը քննության անկախության պակաս է արձանագրել, օրինակ, այն դեպքերում, երբ դրանով զբաղվող անձինք՝

- եղել են հնարավոր կասկածյալներ (*«Բեկթաշը և Յոզալֆին ընդդեմ Թուրքիայի»*, § 66, *«Օրհանն ընդդեմ Թուրքիայի»*, § 342),
- եղել են կամ կարող էին լինել քննությամբ թիրախավորված անձի անմիջական գործընկերներ (*«Ռամսահայր և այլք ընդդեմ Նիդերլանդների»* [ՄՊ], §§ 335-341, *«Էմարսն ընդդեմ Լատվիայի»*, §§ 85 և 95),
- ստորադասական կապ են ունեցել հնարավոր կասկածյալների հետ (*«Շանդրուն և այլք ընդդեմ Ռումինիայի»*, § 74, *«Էնուկիձեն և Գիրգվիլիանին ընդդեմ Վրաստանի»*, §§ 247 և հաջորդող կետերը):

141. Որոշ դեպքերում Դատարանը քննության մարմինների կողմից ձեռնարկված հատուկ միջոցների մեջ տեսել է անկախության բացակայության հատկանիշներ, օրինակ.

- որոշակի միջոցներ չձեռնարկելը, որոնք կարող էին լուս սփռել գործի հանգամանքների վրա (*«Մերգեյ Շնչենկոն ընդդեմ Ուկրաինայի»*, §§ 72-73),
- կասկածյալների հայտարարություններին ավելորդ կշիռ հաղորդելը (*«Քայան ընդդեմ Թուրքիայի»*, § 89),
- որոշակի թերևս անհրաժեշտ հետքերն ուսումնասիրելուց հրաժարվելը (*«Օյյուրն ընդդեմ Թուրքիայի»* [ՄՊ], §§ 90-91),
- անգործունեությունը (*«Ռուպան ընդդեմ Ռումինիայի» (թիվ 1)*, §§ 123-124):

142. Քննության անկախության առումով Դատարանը խնդիր չի արձանագրել հետևյալ գործերում.

- ընդամենը այն հանգամանքը, որ քննիչները և քննությամբ թիրախավորված անձինք բնակվում էին նույն գորանոցում մի մասնավոր դեպքի շրջանակներում, երբ զինվորական գործողություններն իրականացվում էին արտերկրում (*«Ջալուդն ընդդեմ Նիդեռլանդների»* [ՄՊ], § 189),
- քննությամբ զբաղվող ռազմական դատարանն ամբողջապես անկախ չէր օրենքի մակարդակով, սակայն, արձանագրվել էր ստորադասական ինստիտուցիոնալ կամ այլ բնույթի ուղղակի կապերի բացակայություն դատարանի և հիմնական հնարավոր կասկածյալի միջև, իսկ մյուս կողմից՝ դատարանի հստակ վարքագիծը չէր վկայում գործի քննության ընթացքում անկախության և անկողմնակալության բացակայության մասին (*«Մուստաֆա Թունչը և Ֆեչիր Թունչն ընդդեմ Թուրքիայի»* [ՄՊ], § 254):

2. Պատշաճ բնույթ

143. Կոնվենցիայի 2-րդ հոդվածի հիմքերով այս արտահայտության ընկալման ենթակա իմաստով «արդյունավետ» համարվելու նպատակով՝ նշված դրույթի ներքո պայմանավորվող պետության պատասխանատվությունն առաջացնող մահվան դեպքի վերաբերյալ քննությունը, նախ և առաջ, պետք է լինի բավարար (*«Ռամսահայր և այլք ընդդեմ Նիդեռլանդների»* [ՄՊ], § 324): «Բավարար» լինելու համար քննությունը պետք է հնարավորություն տա պարզելու, թե արդյոք ուժի օգտագործումն արդարացված է եղել, թե ոչ ստեղծված հանգամանքներում, ինչպես նաև գտնել պատասխանատուներին, իսկ անհրաժեշտության դեպքում՝ պատժել նրանց (*«Արմանի Դա Սիլվան ընդդեմ Միացյալ Թագավորության»* [ՄՊ], § 233): Այստեղ խոսքը գնում է ոչ թե արդյունքի, այլ միջոցների մասով պարտավորության մասին (*«Թահսին Աքարն ընդդեմ Թուրքիայի»* [ՄՊ], § 223, *Ջալուդն ընդդեմ Նիդեռլանդների* [ՄՊ], § 186):

144. Իրավասու մարմինները պետք է դիմած լինեն իրենց տրամադրության տակ եղած ողջամիտ միջոցներին, որպեսզի ապացույցներ ձեռք բերեն խնդրո առարկա փաստերի վերաբերյալ, այդ թվում՝ ձեռք բերեն ականատեսների ցուցմունքները փորձագիտական եզրակացությունները, իսկ անհրաժեշտության դեպքում՝ դիախերձման եզրակացությունը, որի օգնությամբ հնարավոր կլինի ստանալ վնասվածքների ամբողջական և ճշգրիտ հաշվետվությունը, ինչպես նաև կլինիկական եզրակացությունների, մասնավորապես՝ մահվան պատճառի անկողմնակալ վերլուծությունը: Ավելին, երբ պետության գործակալներն ուժ են գործադրում, քննությունը պետք է արդյունավետ լինի նաև այն առումով, որ հնարավորություն տա որոշելու, թե արդյոք ուժի գործադրումը հիմնավորված է եղել, թե ոչ (*«Արմանի Դա Սիլվան ընդդեմ Միացյալ Թագավորության»* [ՄՊ], § 233): Քննության ցանկացած թերացում, որը կթուլացնի մահվան պատճառը պարզելու և դրա համար պատասխանատուներին որոշելու կարողությունը, կարող է չբավարարել այս չափանիշը (*«Ալ-Սլեյխին և այլք ընդդեմ Միացյալ Թագավորության»* [ՄՊ], § 166):

145. Մասնավորապես, քննության եզրակացությունները պետք է հիմնված լինեն գործին վերաբերող բոլոր տարրերի մանրակրկիտ, անկողմնակալ և անաչառ վերլուծության վրա: Ակնհայտորեն քննության առիթ սովոր հետքերն ուսումնասիրելուց հրաժարվելը վճռական առումով հարցականի տակ է առնում գործի հանգամանքները և պատասխանատու անձանց ինքնությունը պարզելու քննության կարողությունը (*«Մուստաֆա Թունչը և Ֆեչիր Թունչն ընդդեմ Թուրքիայի»* [ՄՊ], § 175):

146. Օրինակ, Դատարանը արձանագրել էր քննության անբավարար բնույթը հետևյալ դեպքերում.

- ձերբակալության փորձի ընթացքում ոստիկանության կողմից արձակված մահացու կրակոցների վերաբերյալ քննությունը վարկաբեկվել էր այնպիսի բացթողումներով, ինչպիսիք են՝ խնդրո առարկա գործակալի ձեռքերի վրա վառոդային հետքերի հայտնաբերման նպատակով դրանց զննման բացակայությունը, միջադեպի վերակառուցման բացակայությունը, գործակալների զենքի և զինամթերքի ուսումնասիրության բացակայությունը, մահաբեր գնդակի կողմից տուժողի մարմնին հասցրած վնասը պատշաճ կերպով նկարագրող գծանկարի բացակայությունը, ինչպես նաև խնդրո առարկա գործակալներին հարցաքննությունից առաջ չառանձնացնելը (*«Ռամսսահայր և այլք ընդդեմ Նիդերլանդների»* [ՄՊ], §§ 326-332),
- դատաբժշկական փորձաքննությունը եղել է թերի (*«Թանյին ընդդեմ Թուրքիայի»*, § 153),
- իրավասու մարմինները որպես հիմք են ընդունել հարցականի տակ առնված գործակալների կողմից ներկայացված փաստերի տարբերակը՝ առանց որևէ այլ վկայի լսելու (*«Օզալփը և այլք ընդդեմ Թուրքիայի»*, § 45) կամ գերակշռող կարևորություն են հաղորդել նրանց կազմված զեկույցին (*«Իկինչիտյոն ընդդեմ Թուրքիայի»*, § 78),
- չի իրականացվել օդանավամատյանների որևէ ուսումնասիրություն, ինչը, այդուհանդերձ, էական տարր էր ռազմական օդանավերից քաղաքացիական գյուղերը ռմբակոծելու համար պատասխանատուներին որոշելու և նրանց մեղադրանք ներկայացնելու համար (*«Բենզեթըր և այլք ընդդեմ Թուրքիայի»*, § 196):

147. Փոխարենը՝ հաշվի առնելով ներպետական մարմինների կողմից ձեռնարկված տարբեր միջոցները, Դատարանը չի արձանագրել քննության անբավարար բնույթը հետևյալ դեպքերում:

- *«Մուստաֆա Թունչը և Ֆեչիր Թունչն ընդդեմ Թուրքիայի»* [ՄՊ], (§ 209), որում խոսքը գնում էր զինվորական ծառայության ընթացքում դիմումատուների որդու և եղբոր մահվան դեպքի կապակցությամբ անցկացրած հետաքննության մասին:
- *«Արմանի Դա Սիլվան ընդդեմ Միացյալ Թագավորության»* [ՄՊ], (§ 286), որի շրջանակներում խոսքը գնում էր սխալմամբ որպես ենթադրյալ ահաբեկիչ նույնականացված անձի վրա արձակած և նրա մահը պատճառած կրակոցների վերաբերյալ անցկացրած քննության մասին:
- *«Ջուլիանին և Գաջոն ընդդեմ Իտալիայի»* [ՄՊ], (§ 309), որի շրջանակներում խոսքը գնում էր «G8» գագաթնաժողովի ընթացքում անվտանգության ուժերի կողմից սպանված ցուցարարի վերաբերյալ անցկացրած քննության մասին:
- *«Պալիչն ընդդեմ Բոսնիա և Հերցեգովինայի»* (§§ 64-66), որի շրջանակներում խոսքը գնում էր Բոսնիա և Հերցեգովինայում պատերազմի ընթացքում դիմումատուի ամուսնու անհետացման վերաբերյալ անցկացրած հետաքննության մասին:

3. Քննության արագություն ու ողջամիտ ջանասիրություն

148. 2-րդ հոդվածը պահանջում է, որ քննություններն անցկացվեն առանց հապաղումների (*«Արմանի Դա Սիլվան ընդդեմ Միացյալ Թագավորության»* [ՄՊ], § 237) և ողջամիտ ջանասիրությամբ (*«Ջուլիանին և Գաջոն ընդդեմ Իտալիայի»* [ՄՊ], § 305):

149. Դատարանն ընդունում է, որ կարող են գոյություն ունենալ առանձին իրավիճակում քննության ընթացքը խոչընդոտող արգելքներ կամ դժվարություններ, այդուհանդերձ, իրավասու մարմինների արագ արձագանքը, երբ խոսքը գնում է մահաբեր ուժի ցանկացած գործադրման մասին, կարող է ընդհանուր առմամբ էական համարվել օրինականության սկզբունքի նկատմամբ հանրության վստահությունը պահպանելու և ապօրինի գործողությունների նկատմամբ հանցակցության կամ հանդուրժողականության ցանկացած տպավորությունից խուսափելու համար (*«Ալ-Սկեյինին և այլք ընդդեմ Միացյալ Թագավորության»* [ՄՊ], § 166, *«Թահսին Աքարն ընդդեմ Թուրքիայի»* [ՄՊ], § 224, *«Արմանի Դա Միլվան ընդդեմ Միացյալ Թագավորության»* [ՄՊ], § 237):

150. Ժամանակ անցնելու իրողությունն իր բնույթով կարող է ոչ միայն վնասել քննության ընթացքին, այլև վերջնականապես խախտել արդյունքների հասնելու հավանականությունը (*«Մոկանուն և այլք ընդդեմ Ռումինիայի»* [ՄՊ], § 337):

151. Մասնավորապես, Դատարանը հետևյալ դեպքերում համարել է, որ ներպետական մարմինները քննությունը չեն անցկացրել բավարար արագությամբ և ջանասիրությամբ:

- *«Քելլին և այլք ընդդեմ Միացյալ Թագավորության»* (§ 136), որում անվտանգության ուժերի կողմից իրականացված գործողության ընթացքում դիմումատուների հարազատների մահվան վերաբերյալ դատական քննության ընթացակարգը մեկնարկել էր այդ իրադարձություններից ութ տարի անց:
- *«Նաֆիյե Չեթինը և այլք ընդդեմ Թուրքիայի»* (§ 42), որում կալանքի տակ դիմումատուների հարազատների մահվան հանգամանքների վրա լույս սփռելու և դրա համար պատասխանատու անձանց հայտնաբերելու և պատժելու նպատակով բացված քրեական գործը վարություն գտնվել է մոտավորապես 15 տարի:
- *«Մոկանուն և այլք ընդդեմ Ռումինիայի»* [ՄՊ], (§ 348), որում 1990 թվականի Ռումինիայի վարչակարգի դեմ ուղղված ցույցերի ընթացքում պարոն Մ. Մականուի մահվան վերաբերյալ քննությունը մեծ հաշվով դեռևս ընթանում է ավելի քան քսաներեք տարի անց:
- *«Հենսվորթն ընդդեմ Միացյալ Թագավորության»* (§ 74), որում դատական քննության ընթացակարգը մեկնարկել էր այն բանից հետո 13 տարի անց, երբ ըստ դիմումատուների իրենց հարազատը սպանվել էր անվտանգության ուժերի կողմից Հյուսիսային Իռլանդիայում:
- *«Ջելիչն ընդդեմ Խորվաթիայի»* (§ 91), որում 1991 թվականին դիմումատուի ամուսնու առևանգման և սպանության վերաբերյալ քննությունը վարկաբեկված է եղել անբացատրելի հապաղումներով:

152. Այնուամենայնիվ, Դատարանը համարել է, որ քննության և (կամ) դրան հաջորդած քրեական դատավարության տևողությունը չափազանց երկար չի եղել, երբ խոսքը գնացել է Հեզբոլլահին վերագրվող սպանությունների մասին: Հաշվի առնելով խախտումների (սպանություն անհայտ անձանց կողմից) բնույթը և քրեական կազմակերպության վերացման համար անհրաժեշտ քայլերը՝ Դատարանը համարել է, որ թեև այս գործերով անցկացրած քննությունները երկար են տևել, սակայն պակաս արդյունավետ չեն եղել, ընդ որում չէր կարելի պնդել, որ իրավասու մարմինները որևէ միջոցառում չեն ձեռնարկել դիմումատուների հարազատների մահվան դեպքերի առնչությամբ (*«Բայրաքը և այլք ընդդեմ Թուրքիայի»*, §§ 54-55, *«Ադիյանանն ընդդեմ Թուրքիայի»* (որոշ.)): Տե՛ս նաև *«Պալիչն ընդդեմ Բոսնիա և Հերցեգովինայի»* (§ 70), *«Ջելարը և այլք ընդդեմ Խորվաթիայի»*

(§§ 91-94) գործերը, որոնցում խոսքը գնում է զինված հակամարտության ընթացքում մահվան դեպքերի և անհետացումների մասին:

4. Հսկողություն հանրության և տուժողների հարազատների միավորումների կողմից

153. Հանրությունը պետք է իրավունք ունենա բավարար չափով ծանոթանալ քննության ընթացքին և դրա եզրակացություններին, որպեսզի ինչպես գործնական, այնպես էլ տեսական առումով հնարավորություն ունենա կասկածի տակ առնել պատասխանատվության հարցը: Այնուամենայնիվ, այս սկզբունքը չի տարածվում այն աստիճան, որ դրանով պահանջվի բռնի մահվան դեպքերի կապակցությամբ անցկացրած քննություններին հաջորդած բոլոր ընթացակարգերին հանրային բնույթ հաղորդելը: Օրինակ, ոստիկանական հաղորդումների և քննությունների վերաբերյալ որոշ տարրերի բացահայտումը կամ հրապարակումը կարող է զգայուն հարցեր և վնասակար հետևանքներ առաջացնել մասնավոր անձանց կամ այլ քննությունների համար, հետևաբար, այն չի կարող համարվել որպես ինքնաբերաբար 2-րդ հոդվածից բխող պահանջ: Հանրային հսկողության աստիճանը կարող է տարբերվել կախված իրավիճակից (*«Ռամսահայր և այլք ընդդեմ Նիդեռլանդների»* [ՄՊ], § 353, *«Ջուլիանին և Գաջոն ընդդեմ Բուալիայի»* [ՄՊ], § 304):

154. Այնուամենայնիվ, բոլոր դեպքերում տուժողի հարազատները պետք է ընդգրկվեն ընթացակարգում իրենց օրինական շահերի պաշտպանության համար անհրաժեշտ չափով (*«Ալ-Սկեյխին և այլք ընդդեմ Միացյալ Թագավորության»* [ՄՊ], § 167): Չնայած դրան՝ քննություն իրականացնող մարմինները պարտավորություն չեն կրում բավարարել քննության ընթացքում տուժողի հարազատի կողմից քննչական միջոց հայցող ամեն պահանջ (*«Ռամսահայր և այլք ընդդեմ Նիդեռլանդների»* [ՄՊ], § 348, *«Ջուլիանին և Գաջոն ընդդեմ Բուալիայի»* [ՄՊ], § 304): Ավելին, ոստիկանական քննության նկատմամբ հանրության հսկողության բացակայությունը կարող է փոխհատուցվել նրանով, որ հանրությանը կամ տուժողի հարազատներին հնարավորություն տրվի ըստ անհրաժեշտության ծանոթանալ վարույթի այլ փուլերին (*«Հյու Ջորդանն ընդդեմ Միացյալ Թագավորության»*, § 121):

155. Հետևյալ գործերում Դատարանը համարել է, որ քննությունը հասանելի չի եղել տուժողի հարազատներին, կամ որ դրանով չի թույլատրվել իրականացնել պատշաճ հանրային հսկողություն:

- Տուժողի ընտանիքը հնարավորություն չի ունեցել ծանոթանալու գործի վարույթին կամ դատական փաստաթղթերին (*«Օդյուրն ընդդեմ Թուրքիայի»* [ՄՊ], § 92) կամ չի տեղեկացվել քննության կարևոր զարգացումների մասին (*«Բետանը և Բետանան ընդդեմ Ռուսաստանի»*, § 88):
- Տուժողի կինը որևէ տեղեկատվություն չէր ստացել քննության ընթացքի մասին, նա հնարավորություն չի ունեցել ուսումնասիրել գործը, և նրան որևէ փաստաթուղթ չի տրամադրվել վկաների ցուցմունքների կամ վարույթի շրջանակներում իրականացված այլ միջոցառումների վերաբերյալ (*«Մեֆիանն ընդդեմ Ռուսաստանի»*, § 75):
- Հայրը չի տեղեկացվել, որ գործը փակվել է (*«Գյուլեչն ընդդեմ Թուրքիայի»*, § 82):
- Քննության ընթացակարգին մասնակցելու համար տուժողի հարազատները ստիպված է եղել բողոք ներկայացնել քաղաքացիական հայցով հանդերձ (*«Սլիմանին ընդդեմ Ֆրանսիայի»*, § 47):

- Դատախազությունը փորձել է թույլ չտալ դիմումատուներին ստանալ նախաքննության նյութերը (*«Բենզերը և այլք ընդդեմ Թուրքիայի»*, § 193):

156. Հետևյալ գործերում Դատարանը չի արձանագրել որևէ խնդիր տուժողի հարազատների կամ հանրության համար քննության նյութերի հասանելիության առումով:

- *«Ջուլիանին և Գաջոն ընդդեմ Իտալիայի»* [ՄՊ], (§ 315), որի շրջանակներում խոսքը գնում էր «G8» գագաթնաժողովի ընթացքում անվտանգության ուժերի կողմից սպանված ցուցարարի վերաբերյալ անցկացրած քննության մասին:
- *«Բարինսն ընդդեմ Միացյալ Թագավորության»* (§ 161), որում դիմումատու եղբայրը սպանվել էր ոստիկանների կողմից իր բնակարանի երկու ժամ տևած պաշարումից հետո:
- *«Պալիչն ընդդեմ Բոսնիա և Հերցեգովինայի»* (§ 69), որը կապված էր Բոսնիա և Հերցեգովինայում պատերազմի ընթացքում դիմումատուի ամուսնու անհետացման վերաբերյալ անցկացրած հետաքննության հետ:

Է. Հետապնդումների և պատժամիջոցների հետ կապված հարցեր

157. Գոյություն չունի որևէ մեղադրանք ներկայացնելու կամ դատավճիռ կայացնելու, ոչ էլ այս կամ այն պատիժ նշանակելու որևէ իրավունք, և այն հանգամանքը, որ դատաքննությունը չի հանգեցրել որևէ արդյունքների կամ հանգեցրել է միայն սահմանափակ արդյունքների, ինքնին չի վկայում արդարադատության ձախողման մասին (*«Ջուլիանին և Գաջոն ընդդեմ Իտալիայի»* [ՄՊ], § 306):

158. Այդուհանդերձ, 2-րդ հոդվածի ընթացակարգային հայեցակետից բխող պահանջները տարածվում են պաշտոնական նախաքննության և դատալսման փուլին հաջորդող փուլերի վրա: Այսպիսով, եթե նախնական քննությունը հանգեցրել է ազգային ատյաններում հետապնդման բացման գործընթացին, ապա օրենքով կյանքի պաշտպանության դրական պարտավորության հրամայականներին պետք է համապատասխանի ողջ ընթացակարգը, այդ թվում՝ դատավճռի կայացման փուլը (*«Օներյիլդիզն ընդդեմ Թուրքիայի»* [ՄՊ], § 95, *Ալի և Այշե Դուրանն ընդդեմ Թուրքիայի*, § 61):

159. Համապատասխանաբար, որպես կանոն վիճահարույց քրեական ընթացակարգը, որը գտնվում է անկախ և անկողմնակալ դատավորի վարույթում, պետք է համարվի որպես հանգամանքների և քրեական պատասխանատվության որոշման արդյունավետության ամուր երաշխիքներ ապահովող ընթացակարգ (*«Մըկթերն ընդդեմ Միացյալ Թագավորության»* (որոշ.), § 134): Այդուհանդերձ, չի կարելի բացառել, որ, օրինակ, քննության շրջանակներում տեղի ունեցած բացթողումները կարող են վնաս հասցնել մահվան դեպքի համար պատասխանատուներին ի հայտ բերելու Դատարանի կարողությանը (*«Ադդաշն ընդդեմ Թուրքիայի»*, § 102):

160. Դատարանը ճանաչում է վատ վերաբերմունքի և սպանության համար պետության գործակալներին նշանակվող պատժամիջոցների ընտրության հարցում ազգային ատյանների դերակատարումը: Այնուամենայնիվ, Դատարանը պետք է պահպանի հսկողության և միջամտության իր գործառույթն այն դեպքերում, երբ առկա է ակնհայտ անհամաչափություն կատարված հանցանքի և նշանակված պատժի միջև (*«Արմանի Դա Միլվան ընդդեմ Միացյալ Թագավորության»* [ՄՊ], § 285):

161. Օրինակ, Դատարանն ընդգծել է, որ Կոնվենցիայի 2-րդ հոդվածից բխող ընթացակարգային պարտավորությունները չեն կարող կատարված համարվել, երբ քննությունն ավարտվում է իրավասու մարմինների անգործությամբ պայմանավորված քրեական պատասխանատվության վաղեմության ժամկետը լրանալու կապակցությամբ (*«1989թ. դեկտեմբերի 21» ասոցիացիան և այլք ընդդեմ Ռուսիայի»*, § 144):

162. Նույն կերպ, քանի որ խոսքը գնում է պետության գործակալների կողմից պատճառված վատ վերաբերմունքի արդյունքում վրա հասած մահվան մասին, Դատարանը համարել է, որ ազատագրված դատապարտված ոստիկաններին նշանակված պատիժը կրելու տարկետումը համեմատելի է մասնակի համաներման հետ, և որ նման միջոցները չեն կարող համարել Դատարանի նախադեպային իրավունքին համապատասխանող միջոցներ, քանի որ նշված գործակալները դրանցով ստացել էին փաստացի անպատժելիություն՝ չնայած իրենց նկատմամբ կայացրած դատավճիռներին (*«Այլ և Այշե Դուրանն ընդդեմ Թուրքիայի»*, § 69):

163. Ավելին, Դատարանի կողմից իրականացվող հսկողությունը չի սահմանափակվում ներպետական ատյանների կողմից ի սկզբանե նշանակված պատիժների լրջության հսկողությամբ, այլ ընդգրկում է նաև հետագայում դրանց իրականացման եղանակը (*«Էնուկիձեն և Գիրգվիլիանին ընդդեմ Վրաստանի»* (§§ 269 և 275) գործ, որի շրջանակներում Դատարանն արձանագրել է 2-րդ հոդվածի ընթացակարգային հայեցակետի խախտում, մասնավորապես՝ այն հանգամանքի բերումով, որ վաղաժամկետ ազատման շնորհմամբ դատապարտյալների նկատմամբ դրսևորվել է անողջամիտ գործություն, գործ *«Կիտանովսկա Ստանոյկովիչը և այլք ընդդեմ նախկին Հարավսլավիայի Մակեդոնիայի Հանրապետության»* (§ 33) գործ, որի շրջանակներում Դատարանն արձանագրել է 2-րդ հոդվածի ընթացակարգային հայեցակետի խախտում ազատագրված տեսքով պատժի իրականացման հարցում տեղի ունեցած ոչ հիմնավոր հապաղումների պատճառով): Մասնավորապես, քաղաքացիական անձանց սպանության կամ նրանց նկատմամբ վատ վերաբերմունքի համար պատասխանատու անձանց համաներում շնորհելը չի համապատասխանում Կոնվենցիայի 2-րդ հոդվածից պետությունների համար բխող պարտավորություններին, եթե այդ միջոցը խոչընդոտել է նման արարքների վերաբերյալ քննությունները և անխուսափելիորեն բերել է նրան, որ մեղավորներին անպատժելիություն է շնորհվել (*«Մարգուշն ընդդեմ Խորվաթիայի»* [ՄՊ], § 127):

Ը. Ընթացակարգային պարտավորության վերականգնում

164. Ընթացակարգային պարտավորությունը դրվում է պետության վրա ամբողջ այն ժամանակահատվածի ընթացքում, որում կարելի է ողջամտորեն ակնկալել իրավասու մարմիններից, որ վերջիններս միջոցներ կձեռնարկեն մահվան հանգամանքները պարզելու և հնարավոր մեղավորներին գտնելու համար (*«Շիլինն ընդդեմ Սլովենիայի»* [ՄՊ], § 157): Այդուհանդերձ, որոշ դեպքերում հետագայում կարող են ի հայտ գալ նոր տարրեր, որոնք կոչված կլինեն նորովի լույս սփռել նման մահվան դեպքերի հանգամանքների վրա: Ուստի, հարցը կայանում է նրանում, որ որոշել, թե արդյոք և ինչպիսի ձևով կրկին ի հայտ է գալիս քննություն անցկացնելու ընթացակարգային պարտավորություն: Այս առումով, այն բանից հետո, երբ ի հայտ է գալիս պնդում, ապացույցի միջոց, կամ ճշմարտանման և հուսալի տեղեկատվության տարր, որը կարող է թույլ տալ գտնել և վերջին հաշվով մեղադրանք ներկայացնել կամ պատժել պատասխանատուներին, իրավասու մարմինները պարտավոր են ձեռնարկել քննչական նոր միջոցառումներ (*«Բրեքնելն ընդդեմ Միացյալ Թագավորության»*, § 71):

165. Ընթացակարգային պարտավորության շրջանակներում պահանջվող ցանկացած հետագա քննության բնույթն ու տարածման տիրույթն անխուսափելիորեն կախված են յուրաքանչյուր մասնավոր գործի հանգամանքներից և կարող են միանգամայն տարբերվել մահվան վրա հասնելուց անմիջապես հետո ակնկալվող հանգամանքներից (*«Հարիսոնը և այլք ընդդեմ Միացյալ Թագավորության»* (որոշ.), § 51): Որոշ ժամանակ անցնելու հանգամանքն անխուսափելիորեն խոչընդոտ կդառնա, օրինակ, վկաների հայտնաբերման և իրադարձությունները վերհիշելու վերջիններիս կարողության վրա: Այս տեսակի որոնումները երբեմն կարող են ողջամիտ կերպով սահմանափակվել աղբյուրի կամ ապացուցական նոր միջոցի հուսալիությունը ստուգելու միջոցով (*«Մերֆին ընդդեմ Թուրքիայի»*, § 65): Ավելին, որոշ դեպքերում արագության պահանջը շատ տարբերվում է վերջերս տեղի ունեցած միջադեպերի պարագայում կիրառվող պահանջից, երբ հաճախ անհրաժեշտ է արագ գործել տեղում ապացուցական էական տարրերը պահպանելու կամ վկաներին այն պահին հարցաքննելու համար, երբ վերջիններս դեռ լավ են հիշում բոլոր մանրամասները (*«Գուրթեքինը և այլք ընդդեմ Կիպրոսի»* (որոշ.), § 21 և մեջբերվող հղումները):

166. Նկատի ունենալով ցանկացած քննչական միջոցառման վերսկսման առաջնային նպատակը իրավասու մարմիններն իրավունք ունեն հաշվի առնել հետապնդումների հաջողության հեռանկարները (*«Բրեքնելն ընդդեմ Միացյալ Թագավորության»*, § 71):

167. Այդուհանդերձ, ամենին էլ հարկ չկա ավելորդ անգամ նախատեսել ապօրինի սպանությունների վերաբերյալ քննություն անցկացնելու պարտավորությունը իրադարձություններից շատ տարիներ անց, քանի դեռ քրեական հանցագործություններ կատարած անձանց մեղադրանք ներկայացնելու և դատապարտելու հանրային շահը հետևողականորեն ճանաչվում է, երբ, մասնավորապես, խոսքը գնում է պատերազմական և մարդկության դեմ հանցագործությունների մասին (*«Ջելիչն ընդդեմ Խորվաթիայի»*, § 52):

Թ. Ատելության հողի վրա կատարված հանցագործությունների հետաքննություն

168. Երբ առկա են ռասիստական մղումներով բռնության մասին հայտարարություններ, առանձնապես կարևոր է, որ քննությունն անցկացվի եռանդով և անկողմնակալությամբ՝ հաշվի առնելով հասարակության կողմից ռասիզմը դատապարտելու հանգամանքը շարունակաբար վերահաստատելու և ռասիստական մղումներով բռնության վտանգից պաշտպանելու իրավասու մարմինների կարողության նկատմամբ փոքրամասնությունների վստահությունը պահպանելու անհրաժեշտությունը (*«Մենսոն ընդդեմ Միացյալ Թագավորության»* (որոշ.), *«Գյիկոնդին և այլք ընդդեմ Հունաստանի»*, § 118):

169. Եթե ռասիստական մղումներով բռնության և դաժանության դեպքերն արժանանան նույն վերաբերմունքին, ինչ առանց ռասիստական ենթատեքստի գործերը, ապա դա հավասարազոր կլինի հիմնարար իրավունքների համար առանձնապես կործանարար արարքների հատուկ բնույթի վրա այչ փակելուն: Ըստ էության, տարբեր իրավիճակների տարբերակման միջոցների բացակայությունը կարող է համարվել չհիմնավորված վերաբերմունք, որը անհամատեղելի է Կոնվենցիայի 14-րդ հոդվածի հետ՝ 2-րդ հոդվածի համադրությամբ (*«Նաչովան և այլք ընդդեմ Բուլղարիայի»* [ՄՊ], § 160):

Ժ. Ընթացակարգային պարտավորություններ անդրսահմանային գործերի շրջանակներում

170. Դատարանը հիշեցնում է, որ 2-րդ հոդվածից բխող սկզբունքային ընթացակարգային պարտավորությունը դրվում է այն պատասխանող պետության վրա, որի իրավասության ներքո գտնվել է տուժողը իր մահվան պահին (*«Էմին և այլք ընդդեմ Կիպրոսի»* (որոշ.)), բացառությամբ այն դեպքերի, երբ որոշակի մասնավոր հանգամանքներ պահանջում են շեղում այս ընդհանուր կանոնից (*«Ռանցեն ընդդեմ Կիպրոսի և Ռուսաստանի»*, §§ 241-242):

171. Ավելին, 2-րդ հոդվածը պետություններից չի պահանջում համընդհանուր իրավասություն սահմանել, երբ մահանում է արտերկրում բնակվող իրենց քաղաքացիներից որևէ մեկը (*«Ռանցեն ընդդեմ Կիպրոսի և Ռուսաստանի»*, § 244):

172. Այնուամենայնիվ, նույնիսկ մասնավոր հանգամանքների բացակայության դեպքում Դատարանը գտնում է, որ քննությամբ զբաղվող պետության մեկ այլ վայրում ապացույցներ ձեռք բերելու պարտավորությունը հանգեցնում է նրան, որ առաջանում է փոխադարձ օգնության սովորական խնդրանքի միջոցով հայցվող աջակցելու պարտավորություն այն պետության համար, որի տարածքում գտնվում են նման ապացույցները՝ վերջինիս լիազորությունների և միջոցների սահմաններում (*«Ռանցեն ընդդեմ Կիպրոսի և Ռուսաստանի»*, § 245):

173. Մասնավորապես, երբ մահ առաջացրած ապօրինի բռնության դեպքն ունի անդրսահմանային տարր, այն պետության իրավասու մարմինները, որից փախուստի են դիմել մեղավորները, և որի տարածքում կարող են գտնվել հանցագործության ապացույցները, 2-րդ հոդվածի ուժով կարող են կրել այս առումով արդյունավետ, իսկ անհրաժեշտության դեպքում՝ սեփական նախաձեռնությամբ միջոցներ ձեռնարկելու պարտավորություն: Հակառակ դեպքում՝ անդրսահմանային բնույթի ոտնձգություններ կատարած անձինք կարող են գործել ամենայն անպատժելիությամբ, իսկ նման ոտնձգություններից տուժած պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները խոչընդոտների կբախվեն իրենց քաղաքացիների հիմնարար իրավունքների պաշտպանությանն ուղղված գործողություններում (*«Քամինգը և այլք ընդդեմ Միացյալ Թագավորության»* (որոշ.)), *«Օ՛Նուզինը և այլք ընդդեմ Միացյալ Թագավորության»* (որոշ.)):

Ի. Ընթացակարգային պարտավորություններ անփութությամբ պատճառված մահվան կամ ծանր վնասվածքների դեպքում

174. Ինչպես արդեն նշվել է վերևում, Դատարանը տարածել է 2-րդ հոդվածից բխող ընթացակարգային պարտավորություններն անփութությամբ պատճառված հնարավոր մահացու վնասվածքների կամ մահվան դեպքերի վրա: Այս քայլով Դատարանը տեղափոխել է ընդհանուր սկզբունքները, մասնավորապես, վերոնշյալ քննություն անցկացնելու պարտավորության չափորոշիչները՝ հարմարեցնելով դրանք նման գործերի հանգամանքներին:

5. Ընդհանուր սկզբունքներ

175. 2-րդ հոդվածի հիմքով պետության պարտավորության հարցը կարող է առաջանալ, երբ ներպետական իրավական ատյաններն ի վիճակի չեն որոշել պատասխանատուներին

մահ պատճառելու վտանգ ներկայացնող կամ մահ առաջացրած անփութության դեպքերում (*«Բանելն ընդդեմ Լիտվայի»*, § 70):

176. Այսպիսով, եթե տուժողի մահվան կամ ծանր վնասվածքների հիմքում ընկած է որևէ անձի անփութությունը, ապա իր իրավասության ներքո գտնվող անձանց կյանքի պաշտպանության համար բոլոր անհրաժեշտ միջոցների ձեռնարկման պարտավորությունը պետությունից պահանջում է ստեղծել արդյունավետ և անկախ դատական համակարգ, որն իրավական ուղիներ կառաջարկի կարճ ժամկետներում փաստերը պարզելու, մեղավորներին պատասխանատվության կանչելու և տուժողներին պատշաճ փոխհատուցում տրամադրելու համար (*«Ֆերգեչն ընդդեմ Խորվաթիայի»*) (§ 32) գործ, որում խոսքը գնում էր պիցցերիայում նոնակի պայթյունի հետևանքով բացված ընթացակարգի արդյունավետ բնույթի մասին, գործ *«Սյեչոնսկան ընդդեմ Լեհաստանի»* (§ 66), որում խոսքը գնում էր խնամքի կենտրոնում ընկած ծառի հետևանքներից դիմումատուի ամուսնու մահվան հետ կապված ընթացակարգի մասին, գործ *«Աննա Տոդորովան ընդդեմ Բուլղարիայի»* (§ 72), որի շրջանակներում խոսքը գնում էր ճանապարհատրանսպորտային պատահարում դիմումատուի որդու մահվան հետ կապված ընթացակարգի մասին, գործ *«Իլբեյի Քեմալօղլուն և Մերիյե Քեմալօղլուն ընդդեմ Թուրքիայի»* (§ 38), որի շրջանակներում խոսքը գնում էր ձնաքթի ժամանակ տուն վերադառնալու ճանապարհին ցրտից մահացած դիմումատուների յոթ տարեկան որդու մահվան մասին, գործ *«Կոտելնիկովն ընդդեմ Ռուսաստանի»* (§§ 99-101), որի շրջանակներում խոսքը գնում էր ճանապարհատրանսպորտային պատահարի ժամանակ ծանր վնասվածք ստացած դիմումատուի մասին):

177. Առողջապահության ոլորտում Դատարանը 2-րդ հոդվածից բխող ընթացակարգային պարտավորությունը մեկնաբանել է այն իմաստով, որ դրանով պետությունների վրա դրվում է արդյունավետ և անկախ գործուն դատական համակարգ ստեղծելու պարտավորություն ինչպես պետական, այնպես էլ մասնավոր հատվածում առողջապահության ոլորտի մասնագետների պատասխանատվության ներքո գտնվող անձի մահվան դեպքում՝ դրա պատճառը պարզելու և հնարավոր պատասխանատուներին իրենց արարքների համար պատասխանատվության կանչելու նպատակով (*«Շիլինն ընդդեմ Սլովենիայի»* [ՄՊ], § 192, *«Լոպես դե Սուսա Ֆերնանդեսն ընդդեմ Պորտուգալիայի»* [ՄՊ], § 214):

178. Այս առումով Դատարանը համարել է, որ եթե կյանքի կամ ֆիզիկական անձեռնմխելիության իրավունքի նկատմամբ ոսնձգությունը դիտավորյալ չէ, ապա արդյունավետ դատական համակարգ ստեղծելու դրական պարտավորությունն անհրաժեշտաբար չի պահանջում, որ բոլոր դեպքերում լինի քրեական բնույթի իրավական պաշտպանության միջոց, և կարող է այդ պարտավորությունը բավարարված համարել քաղաքացիական ատյաններում իրավական պաշտպանության միջոցի առկայության դեպքում՝ առանձին կամ քրեական ատյանների առջև իրավական պաշտպանության միջոցի համադրությամբ, ինչը թույլ կտա որոշել բոլոր պատասխանատուներին և ձեռնարկել քաղաքացիական բնույթի փոխհատուցման ցանկացած միջոց: Դատարանը նաև ընդունել է, որ կարող են նախատեսվել կարգապահական բնույթի միջոցներ (*«Կավվելին և Չիլոն ընդդեմ Իտալիայի»* [ՄՊ], § 51, *«Մաստրոմատեոն ընդդեմ Իտալիայի»* [ՄՊ], § 90, *«Վոն ընդդեմ Ֆրանսիայի»* [ՄՊ], § 90, *«Աննա Տոդորովան ընդդեմ Բուլղարիայի»*, § 73, *«Չեվրիօղլուն ընդդեմ Թուրքիայի»*, § 54, *«Լոպես դե Սուսա Ֆերնանդեսն ընդդեմ Պորտուգալիայի»* [ՄՊ], §§ 137 և 215):

179. Այս մասով Դատարանը նաև ընդգծեց, որ 2-րդ հոդվածից բխող պարտավորությունների կատարումն ապահովող միջոցների ընտրությունն սկզբունքորեն

վերապահված է պայմանավորվող պետությունների սեփական հայեցողության լուսանցքին: Հաշվի առնելով Կոնվենցիայով պաշտպանված իրավունքների երաշխավորման միջոցների բազմազանությունը՝ այն հանգամանքը, որ խնդրո առարկա պետությունը չի կիրառել ներպետական իրավունքով նախատեսված որևէ հստակ միջոց, չի խանգարում նրան կատարել իր դրական պարտավորությունը մեկ այլ եղանակով: Այդուհանդերձ, այս պարտավորության կատարման համար հարկավոր է, որ ներպետական իրավունքով նախատեսված պաշտպանական մեխանիզմները ոչ միայն գոյություն ունենան տեսականորեն, այլև արդյունավետ աշխատեն գործնականում (*«Չեկրիտիոն ընդդեմ Թուրքիայի»*, §§ 53 և 55, *«Լուպես դե Սուսա Ֆերնանդեսն ընդդեմ Պորտուգալիայի»* [ՄՊ], § 216):

180. Այսպիսով, Դատարանը կոչված է ուսումնասիրել, թե արդյոք օրենքով և գործնականում առկա իրավական պաշտպանության միջոցներն իրենց ամբողջականությամբ կարող են համարվել այնպիսի իրավական ուղիներ, որոնք թույլ են տալիս պարզել հանգամանքները, սահմանել մեղավորների պատասխանատվությունը և տուժողներին առաջարկել փոխհատուցում: Այլ կերպ ասած, իրավակարգը վերացականորեն գնահատելու փոխարեն՝ Դատարանը պետք է քննի այն հարցը, թե արդյոք նշված իրավակարգն ամբողջականությամբ թույլ է տալիս ճիշտ որոշում կայացնել վեճի առարկայի վերաբերյալ (*«Վալերի Ֆուլլենն ընդդեմ Ուկրաինայի»*, § 67):

181. Այնուամենայնիվ, նույնիսկ կյանքի իրավունքի նկատմամբ ոչ դիտավորյալ ոտնձգությունների դեպքում՝ կարող են լինել բացառիկ հանգամանքներ, որոնցում Կոնվենցիայի 2-րդ հոդվածի պահանջները բավարարելու համար հարկավոր է անցկացնել արդյունավետ քրեական քննություն (*«Չեկրիտիոն ընդդեմ Թուրքիայի»*, § 54, *«Լուպես դե Սուսա Ֆերնանդեսն ընդդեմ Պորտուգալիայի»* [ՄՊ], § 215): Օրինակ, հետևյալ գործերում Դատարանը համարել է, որ նման հանգամանքներն առկա են եղել, երբ կյանքի իրավունքի նկատմամբ ոտնձգության հիմքում ընկած անփութությունը, մասնավորապես, գերազանցել է հասարակ դատողության սխալի կամ անզգուշության սահմանները.

- վտանգավոր արդյունաբերական գործունեության առնչությամբ (*«Օներյիլդիզն ընդդեմ Թուրքիայի»* [ՄՊ], § 71),
- օգնություն չմատուցելու առնչությամբ (*«Ասիյե Գենչն ընդդեմ Թուրքիայի»*, § 73),
- ռազմական գործողությունների առնչությամբ (*«Օրուքն ընդդեմ Թուրքիայի»*, §§ 50 և 65),
- վտանգավոր ապրանքատեսակների փոխադրման առնչությամբ (*«Օրուքն ընդդեմ Թուրքիայի»*, §§ 62-64):

182. Նույն կերպ, Դատարանն ընդունում է, որ այն դեպքերում, երբ միանգամից և միանշանակ չի պարզվում, որ մահն առաջացել է դժբախտ պատահարի կամ մեկ այլ ոչ դիտավորյալ արարքի արդյունքում, և երբ սպանության վարկածը հանգամանքների բերումով առնվազն հիմնավոր է, Կոնվենցիան պահանջում է, որ անցկացվի արդյունավետության նվազագույն չափորոշիչներին համապատասխանող քննություն՝ մահվան հանգամանքները պարզելու նպատակով: Այն հանգամանքը, որ քննությունը վերջին հաշվով չի հրաժարվում դժբախտ պատահարի վարկածից, ոչ մի ազդեցություն չունի այս հարցի վրա, քանի որ հետաքննություն անցկացնելու պարտավորությունն ինքնին կոչված է հերքել կամ հիմնավորել առկա վարկածները (*«Մուստաֆա Թունչը և Ֆեչիր Թունչն ընդդեմ Թուրքիայի»* [ՄՊ], § 133):

183. Առողջապահության ոլորտում Դատարանը նշել է, որ ենթադրվում է, որ առողջության ոլորտի մասնագետների պատասխանատվության ներքո գտնվող անձանց մահվան

պատճառների որոշման նպատակով ազգային մակարդակով ստեղծված համակարգը պետք է լինի անկախ: Մա ենթադրում է ոչ միայն ստորակարգային կամ ինստիտուցիոնալ կապի բացակայություն, այլև տվյալ իրադարձություններում ներգրավված անձանց նկատմամբ ինչպես պաշտոնական, այնպես էլ կոնկրետ անկախություն բոլոր այն կողմերի պարագայում, որոնք կոչված են գնահատել փաստերը՝ մահվան պատճառը որոշելու համար իրականացվող ընթացակարգի շրջանակներում (*«Բաջիջն ընդդեմ Խորվաթիայի»*, § 90): Այս պահանջը առանձնապես կարևոր է, երբ խոսքը գնում է բժշկական եզրակացությունների ստացման մասին (*«Կարպիսիչն ընդդեմ Լեհաստանի»* (որոշ.)), քանի որ հավանական է, որ բժշկական փորձագետների զեկույցները որոշիչ կշիռ կունենան բժշկական անփութության խիստ բարդ հարցերի Դատարանի կողմից գնահատման շրջանակներում, ինչը վերջիններիս վերապահում է ընթացակարգում առանձնապես կարևոր դերակատարում (*«Բաջիջն ընդդեմ Խորվաթիայի»*, § 95, *«Լոպես դե Սուսա Ֆերնանդեսն ընդդեմ Պորտուգալիայի»* [ՄՊ], § 217):

184. Երբ տեղի է ունեցել անփութություն, համապատասխան ընթացակարգը պետք է ավարտվի ողջամիտ ժամկետներում (*«Շիլիին ընդդեմ Սլովենիայի»* [ՄՊ], § 196, *«Չավիտ Թինարլիոզուն ընդդեմ Թուրքիայի»*, § 115, *«Ֆերգեչն ընդդեմ Խորվաթիայի»*, § 38):

185. Դատարանը նշել է, որ 2-րդ հոդվածի կիրառման տեղիք տվող գործերում, որոնք, մասնավորապես, վերաբերում են մահվան հանգամանքները որոշելու նպատակով ձեռնարկվող ընթացակարգերին, ընթացակարգի դանդաղությունը հանդես է գալիս որպես Կոնվենցիայի ներքո պատասխանող պետության կողմից իր դրական պարտավորությունների խախտման մասին վկայող կազմորոշիչ թերության առկայության հուսալի հասկանիչ, եթե պետությունը չի ներկայացրել նշված հապաղումը բացատրող շատ համոզիչ և ճշմարտանման հիմնավորումներ (*«Բիբիջան և Բլաժնիչն ընդդեմ Խորվաթիայի»*, § 107, *«Լոպես դե Սուսա Ֆերնանդեսն ընդդեմ Պորտուգալիայի»* [ՄՊ], § 219):

186. Առողջության ոլորտում Դատարանն ընդգծել է, որ այս կամ այն դեպքում 2-րդ հոդվածից բխող իրավունքների իրացման հարցից բացի, հիվանդանոցային միջավայրում բժշկական անփութության գործերի արագ քննությունը պայմանավորված է նաև այլ՝ ավելի ընդհանուր նկատառումներով: Բժշկական օգնության մատուցման ոլորտում թույլ տված հնարավոր սխալների և փաստերի իմացությունն էական նշանակություն ունի, քանի որ թույլ է տալիս հաստատություններին և բժշկական անձնակազմին շտկել հնարավոր թերությունները և կանխել նմանատիպ սխալները: Ուստի նման գործերի արագ քննությունը կարևոր է առողջապահական ծառայությունների ողջ համակարգում սպառողների անվտանգության համար (*«Օյալն ընդդեմ Թուրքիայի»*, § 76):

187. Թեև պետության գործակալների կողմից մահաբեր ուժի գործադրման վերաբերյալ գործերում իրավասու մարմինները պետք է սեփական նախաձեռնությամբ քննություն սկսեն, սակայն բժշկական անփութության վերաբերյալ գործերում, որոնցում մահը պատճառվել է ոչ դիտավորյալ եղանակով, պետության ընթացակարգային պարտավորությունը կարող է գործարկվել մահացածի հարազատների կողմից համապատասխան ընթացակարգի մեկնարկը տալուց հետո (*«Շիլիին ընդդեմ Սլովենիայի»* [ՄՊ], § 156, *«Լոպես դե Սուսա Ֆերնանդեսն ընդդեմ Պորտուգալիայի»* [ՄՊ], § 220):

188. Այս ոլորտում նույնպես, Դատարանը համարում է, որ խոսքը գնում է ոչ թե արդյունքի, այլ միայն միջոցների մասով պարտավորության մասին (*«Բանելն ընդդեմ Լիտվայի»*, § 66, *«Լոպես դե Սուսա Ֆերնանդեսն ընդդեմ Պորտուգալիայի»* [ՄՊ], § 221): Հետևաբար, միայն այն փաստը, որ ներպետական ընթացակարգի արդյունքը նպաստավոր չի եղել

շահագրգիռ կողմի համար, չի նշանակում, որ պատասխանող պետությունը չի կատարել Կոնվենցիայի 2-րդ հոդվածից բխող իր դրական պարտավորությունը (*նույն տեղում*, § 221, «Ե.Մ.-ն և այլք ընդդեմ Ռուսիայի» (որոշ.), § 50):

6. Օրինակներ

ա. Բժշկական անփութության պնդումներ

189. Դատարանը, մասնավորապես, համարել է, որ հետևյալ դեպքերում իրավակարգը չի նախատեսել արագ և բավարար լուծում՝ 2-րդ հոդվածի ներքո պետության վրա դրված ընթացակարգային պարտավորություններին համապատասխան:

- Ներպետական ընթացակարգը չափից ավելի երկար է տևել (*«Բիրժկովսկին ընդդեմ Լեհաստանի»*, §§ 114-116, *«Շիլին ընդդեմ Սլովենիայի»* [ՄՊ], §§ 202-210, *«Չաֆեր Օզթուրքն ընդդեմ Թուրքիայի»*, §§ 56-57, *«Բիրիջան և Բլաժնիչն ընդդեմ Խորվաթիայի»*, §§ 105-107):
- Բժշկական փորձագետների և մեղադրյալի միջև մասնագիտական կապը եղել է այնպիսին, որ վերջիններս չէին կարող համարվել օբյեկտիվորեն անկողմնակալ (*«Բաջիջն ընդդեմ Խորվաթիայի»*, §§ 98-102 և հակառակը՝ *«Կարպիսնիչն ընդդեմ Լեհաստանի»* (որոշ.)):
- Դատական փորձագետների և քննչական մարմինների միջև համագործակցություն չի եղել, իսկ փորձագետների եզրակացությունները հիմնավորված չեն եղել (*«Եվգենյա Լազարն ընդդեմ Ռուսիայի»*, §§ 81-85):

190. Փոխարենը՝ հետևյալ գործերում Դատարանը չի արձանագրել քրեական, կարգապահական կամ քաղաքացիական պատասխանատվությունը սահմանող մեխանիզմի բացակայություն.

- *«Վոն ընդդեմ Ֆրանսիայի»* [ՄՊ], § 95 (հղիության ընդհատում կամքին հակառակ),
- *«Ուրսուն ընդդեմ Ռուսիայի»* (որոշ.) (մահ ինֆարկտի հետևանքներից),
- *«Մարուսեան ընդդեմ Ռուսաստանի»* (որոշ.) (երեխայի մահ սրտի վիրահատության ընթացքում),
- *«Սևին Գյունգյորն ընդդեմ Թուրքիայի»* (որոշ.) (տարեց հիվանդի մահը հիվանդանոցում բրոնխիտի թոքերի բորբոքման հետևանքներից),
- *«Բեսեն ընդդեմ Թուրքիայի»* (որոշ.) (ղիմումատուի մոր մահը վիրահատության հետևանքներից),
- *«Վակրիլովն ընդդեմ Բուլղարիայի»* (որոշ.), § 41 (մահ ծանր սրտանոթային և շնչառական անբավարարության հետևանքներից),
- *«Ե.Մ.-ն և այլք ընդդեմ Ռուսիայի»* (որոշ.), § 56 (մահ հիվանդանոցում հետվիրահատական շրջանում բակտերիալ վարակի հետևանքներից),
- *«Բուքսան ընդդեմ Լեհաստանի»* (որոշ.), §§ 15-16 (ծծկեր երեխայի մահը՝ լյարդում չախտորոշված որովայնային բարորակ ուռուցքի հետևանքներից):

բ. Դժբախտ պատահարներ

191. Դատարանը եզրակացրել է, որ պետությունը դժբախտ պատահարի հետևանքով անձի մահվան վերաբերյալ արդյունավետ դատական լուծում չի առաջարկել, մասնավորապես, հետևյալ դեպքերում:

- Չափից ավելի երկար ներպետական ընթացակարգ, որը բնորոշվում է ազգային իրավասու մարմինների կողմից ջանասիրության պակասով («Աննա Տոդորովան ընդդեմ Բուլղարիայի», § 83, «Իգոր Շնչենկոն ընդդեմ Ուկրաինայի», § 61, «Ստարշնիչն ընդդեմ Խորվաթիայի», § 67, «Մուշիբաբիջն ընդդեմ Սերբիայի», § 135, «Միդիկա Իմրեն ընդդեմ Թուրքիայի», § 67, «Ֆերգեչն ընդդեմ Խորվաթիայի», §§ 41-42):
- Ապացույցների տնօրինման հարցում տեղ են գտել այնպիսի թերություններ, որոնք վերացրել են դեպքի հանգամանքները և մեղադրված անձանց պատասխանատվությունը հետագա ընթացակարգերի շրջանակներում պարզելու ամեն հավանականություն («Սյեչոնսկան ընդդեմ Լեհաստանի», § 75, «Անտոնովն ընդդեմ Ուկրաինայի», § 50):

192. Փոխարենը՝ հետևյալ գործերում Դատարանը չի արձանագրել այնպիսի մեխանիզմի բացակայությունը, որը թույլ կտար քրեական, կարգապահական կամ քաղաքացիական պատասխանատվության ենթարկել հնարավոր մեղավորներին.

- «Ֆուրդիկն ընդդեմ Սլովակիայի» (որոշ.) (լեռնագնացի մահ),
- «Կոչեսկին ընդդեմ նախկին Հարավսլավիայի Մակեդոնիայի Հանրապետության» (որոշ.), § 28 (խաղաղապարակում ծանր բետոնե սյուների փլատակների տակ մնացած աղջկա մահ),
- «Չավիտ Թինարլիօղլուն ընդդեմ Թուրքիայի», § 125 (չսահմանագծված լողագոտում լողալիս շարժիչային նավակին բախված դիմումատուի կողմից ստացված ծանր վնասվածքներ),
- «Միխնոն ընդդեմ Ուկրաինայի», § 151 (հանրության համար բաց օդային շոուին ներկա գտնվող անձանց մահն ընկած ռազմական օդանավի պատճառով),
- «Չարմաքն ընդդեմ Թուրքիայի» (որոշ.), § 34 (տարրական դպրոցի այգում գտնվող ծառից սոճու կոներ հավաքելու ժամանակ դիմումատուների հարազատի էլեկտրահարում),
- «Աքտաշն ընդդեմ Թուրքիայի» (որոշ.), § 29 (մոտոցիկլով ֆուրգոնին բախված դիմումատուի որդու մահը):

Մեջբերվող գործերի ցանկ

Սույն ուղեցույցում մեջբերվող նախադեպային իրավունքի շրջանակներում հղում է կատարվում Դատարանի կայացրած վճիռներին և որոշումներին, ինչպես նաև Մարդու իրավունքների եվրոպական հանձնաժողովի («Հանձնաժողով») որոշումներին և զեկույցներին:

Եթե գործի անվանումից հետո այլ նշում չի կատարվում, ապա մեջբերումը վերաբերում է Դատարանի որևէ պալատի կողմից ըստ էության կայացված վճիռին: Եթե բերվում է «(որոշ.)» նշումը, ապա այն հղում է կատարում Դատարանի որոշմանը, իսկ «[ՄՊ]» հապավումը նշանակում է, որ գործը քննվել է Մեծ պալատի կողմից:

Սույն թարմացված հրապարակման դրությամբ Կոնվենցիայի 44-րդ հոդվածի իմաստով պալատի ոչ վերջնական վճիռները ստորև բերված ցանկում նշված են աստղանիշով (*): Կոնվենցիայի 44-րդ հոդվածի 2-րդ մասը ձևակերպված է հետևյալ կերպ. «Պալատի վճիռը դառնում է վերջնական, եթե՝ ա. կողմերը հայտարարում են, որ չեն պահանջի գործի հանձնում Մեծ պալատին, կամ բ. վճռի կայացումից հետո երեք ամսվա ընթացքում չի պահանջվում գործի հանձնում Մեծ պալատին, կամ գ. Մեծ պալատի հանձնախումբը, 43-րդ հոդվածին համապատասխան, մերժում է գործը հանձնելու պահանջը»: Եթե Մեծ պալատի հանձնախումբն ընդունում է գործը հանձնելու պահանջը, ապա պալատի վճիռը վերջնական չի դառնում և հետևաբար չի ստանում որևէ իրավաբանական ուժ, իսկ Մեծ պալատն այնուհետև ընդունում է վերջնական վճիռ:

Ուղեցույցի էլեկտրոնային տարբերակում ներկայացված հղումներով մեջբերվում է «HUDOC» տվյալների շտեմարանը (<http://hudoc.echr.coe.int/fre>), որտեղ կարելի է գտնել Դատարանի նախադեպային իրավունքը (Մեծ պալատի, պալատի և կոմիտեի վճիռներ և որոշումներ, հանձնված գործեր, Նախադեպային իրավունքի տեղեկագրից վերցված խորհրդատվական եզրակացություններ և իրավաբանական ամփոփագրեր), Հանձնաժողովի նախադեպային իրավունքը (որոշումներ և զեկույցներ), ինչպես նաև Նախարարների կոմիտեի բանաձևերը: Հանձնաժողովի առանձին որոշումներ բերված չեն «HUDOC» տվյալների շտեմարանում և առկա են միայն տպագիր տարբերակով՝ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի տարեկան տեղեկագրի համապատասխան հատորում:

Դատարանն իր վճիռներն ու որոշումները կայացնում է անգլերենով և (կամ) ֆրանսերենով, որոնք Դատարանի երկու պաշտոնական լեզուներն են: «HUDOC» տվյալների շտեմարանում կարելի է գտնել նաև Դատարանի որոշ հիմնական գործերի թարգմանությունները՝ ավելի քան երեսուն ոչ պաշտոնական լեզուներով: Բացի այդ, շտեմարանում բերված են հղումներ նախադեպային իրավունքի մոտ հարյուր առցանց տեղեկագրի, որոնք պատրաստվել են երրորդ անձանց կողմից:



Արունան և այլք ընդդեմ Ռուսաստանի, թիվ 27065/05, 2 դեկտեմբերի 2010թ.

Ադիյանանն ընդդեմ Թուրքիայի (որոշ.), թիվ 58933/00, 9 փետրվարի 2010թ.

Աթամանն ընդդեմ Թուրքիայի, թիվ 46252/99, 27 ապրիլի 2006թ.

Ալ Նաշիրին ընդդեմ Լեհաստանի, թիվ 28761/11, 24 հուլիսի 2014թ.
Ալբեկովը և այլք ընդդեմ Ռուսաստանի, թիվ 68216/01, 9 հոկտեմբերի 2008թ.
Ալթուդը և այլք ընդդեմ Թուրքիայի, թիվ 32086/07, 30 հունիսի 2015թ.
Ալի և Այշե Դուրանն ընդդեմ Թուրքիայի, թիվ 42942/02, 8 ապրիլի 2008թ.
Ալ-Սաադուն և Մուֆդիին ընդդեմ Միացյալ Թագավորության, թիվ 61498/08, ՄԻԵԴ, 2010թ.
Ալ-Սկեյինը և այլք ընդդեմ Միացյալ Թագավորության [ՄՊ], թիվ 55721/07, ՄԻԵԴ, 2011թ.
Ալքինն ընդդեմ Թուրքիայի, թիվ 75588/01, 13 հոկտեմբերի 2009թ.
Ահմեդ Օզկանը և այլք ընդդեմ Թուրքիայի, թիվ 21689/93, 6 ապրիլի 2004թ.
Ադրաշն ընդդեմ Թուրքիայի, թիվ 34592/97, 27 հուլիսի 2004թ.
Ամունան և այլք ընդդեմ Ռուսաստանի, թիվ 17321/06, 25 նոյեմբերի 2010թ.
Այդոդդուն ընդդեմ Թուրքիայի, թիվ 40448/06, 30 օգոստոսի 2016թ.
Անգելովան ընդդեմ Բուլղարիայի, թիվ 38361/97, ՄԻԵԴ, 2002-IV
Անդրոնիկուն և Կոնստանտինուն ընդդեմ Կիպրոսի, 9 հոկտեմբերի 1997, *Վճիռների և որոշումների ժողովածու* 1997թ.
Աննա Տոդորովան ընդդեմ Բուլղարիայի, թիվ 23302/03, 24 մայիսի 2011թ.
Անտոնովն ընդդեմ Ուկրաինայի, թիվ 28096/04, 3 նոյեմբերի 2011թ.
Ասիլե Գենչն ընդդեմ Թուրքիայի, թիվ 24109/07, 27 հունվարի 2015թ.
Ասլախանովան և այլք ընդդեմ Ռուսաստանի, թիվ 2944/06 և 4 այլ գործ, 18 դեկտեմբերի 2012թ.
Ավլարն ընդդեմ Թուրքիայի, թիվ 25657/94, ՄԻԵԴ, 2001-VII (քաղվածքներ)
Արմանի Դա Սիլվան ընդդեմ Միացյալ Թագավորության [ՄՊ], թիվ 5878/08, 30 մարտի 2016թ.
Արսկայան ընդդեմ Ուկրաինայի, թիվ 45076/05, 5 դեկտեմբերի 2013թ.
Աքդենիզը և այլք ընդդեմ Թուրքիայի, թիվ 23954/94, 31 մայիսի 2001թ.
Աքդոդդուն ընդդեմ Թուրքիայի, թիվ 46747/99, 18 հոկտեմբերի 2005թ.
Աքումը և այլք ընդդեմ Թուրքիայի, թիվ 21894/93, ՄԻԵԴ, 2005-II (քաղվածքներ)
Աքտաշն ընդդեմ Թուրքիայի, թիվ 24351/94, ՄԻԵԴ, 2003-V (քաղվածքներ)

—Բ—

Բաբար Ահմադը և այլք ընդդեմ Միացյալ Թագավորության (որոշ.), թիվ 24027/07 և 4 այլ գործ, 6 հուլիսի 2010թ.
Բաբինսն ընդդեմ Միացյալ Թագավորության, թիվ 50196/99, ՄԻԵԴ, 2005-II (քաղվածքներ)
Բագորկինան ընդդեմ Ռուսաստանի, թիվ 69481/01, 27 հուլիսի 2006թ.
Բականն ընդդեմ Թուրքիայի, թիվ 50939/99, 12 հունիսի 2007թ.
Բայսանան ընդդեմ Ռուսաստանի, թիվ 74237/01, 5 ապրիլի 2007թ.
Բայրաքը և այլք ընդդեմ Թուրքիայի, թիվ 42771/98, 12 հունվարի 2006թ.
Բանելն ընդդեմ Լիտվայի, թիվ 14326/11, 18 հունիսի 2013թ.
Բաջիջն ընդդեմ Խորվաթիայի, թիվ 41108/10, 13 նոյեմբերի 2012թ.
Բարբու Անգելեսկուն ընդդեմ Ռումինիայի, թիվ 46430/99, 5 հոկտեմբերի 2004թ.
Բեկթաշը և Յոզալփն ընդդեմ Թուրքիայի, թիվ 10036/03, 20 ապրիլի 2010թ.
Բեկսուլտանովան ընդդեմ Ռուսաստանի, թիվ 31564/07, 27 սեպտեմբերի 2011թ.
Բենգերը և այլք ընդդեմ Թուրքիայի, թիվ 23502/06, 12 նոյեմբերի 2013թ.
Բեսեն ընդդեմ Թուրքիայի (որոշ.), թիվ 48915/09, 19 հունիսի 2012թ.
Բետանը և Բետանան ընդդեմ Ռուսաստանի, թիվ 37315/03, 29 մայիսի 2008թ.
Բեքերն ընդդեմ Թուրքիայի, թիվ 27866/03, 24 մարտի 2009թ.
Բիբիջան և Բլաժնիչն ընդդեմ Խորվաթիայի, թիվ 62870/13, 12 հունվարի 2016թ.

Բիննուր Ուզուն և այլք ընդդեմ Թուրքիայի, թիվ 28678/10, 19 սեպտեմբերի 2017թ.
Բիրժիկովսկին ընդդեմ Լեհաստանի, թիվ 11562/05, 27 հունիսի 2006թ.
Բյակայր և այլք ընդդեմ Խորվաթիայի, թիվ 74448/12, 18 սեպտեմբերի 2014թ.
Բոսոն ընդդեմ Բոսնիայի (որոշ.), թիվ 50490/99, 5 սեպտեմբերի 2002թ.
Բուդանան և այլք ընդդեմ Ռուսաստանի, թիվ 15339/02 և 4 այլ գործ, ՄԻԵԴ, 2008թ.
(քաղվածքներ)

Բուլդանն ընդդեմ Թուրքիայի, թիվ 28298/95, 20 ապրիլի 2004թ.
Բուքսան ընդդեմ Լեհաստանի (որոշ.), թիվ 75749/13, 31 մայիսի 2016թ.
Բուրբուրուն և այլք ընդդեմ Ֆրանսիայի, թիվ 30059/15, 16 նոյեմբերի 2017թ.
Բրանկո Թոմաշիչը և այլք ընդդեմ Խորվաթիայի, թիվ 46598/06, 15 հունվարի 2009թ.
Բրեքնելն ընդդեմ Միացյալ Թագավորության, թիվ 32457/04, 27 նոյեմբերի 2007թ.
Բրինքաթը և այլք ընդդեմ Մալթայի, թիվ 60908/11 և 4 այլ գործ, 24 հուլիսի 2014թ.

—Գ—

Գ.Ն.-ն և այլք ընդդեմ Բոսնիայի, թիվ 43134/05, 1 դեկտեմբերի 2009թ.
Գարդը և այլք ընդդեմ Միացյալ Թագավորության (որոշ.), թիվ 39793/17, 27 հունիսի 2017թ.
Գեորգեն ընդդեմ Ռումինիայի (որոշ.), թիվ 19215/04, 22 սեպտեմբերի 2005թ.
Գլասն ընդդեմ Միացյալ Թագավորության (որոշ.), թիվ 61827/00, 18 մարտի 2003թ.
Գլիկոնդին և այլք ընդդեմ Հունաստանի, թիվ 17249/10, 21 դեկտեմբերի 2017թ.
Գյուլեչն ընդդեմ Թուրքիայի, 27 հուլիսի 1998թ., *ՎՃԽՆԵՐԻ և որոշումների ժողովածու*
1998-IV
Գյոքդեմիրն ընդդեմ Թուրքիայի (որոշ.), թիվ 66309/09, 19 մայիսի 2015թ.
Գոնգաձեն ընդդեմ Ուկրաինայի, թիվ 34056/02, ՄԻԵԴ, 2005-XI
Գորովենկին և Բուզարան ընդդեմ Ուկրաինայի, թիվ 36146/05 և 42418/05, 12 հունվարի
2012թ.
Գուրթեքինը և այլք ընդդեմ Կիպրոսի (որոշ.), թիվ 60441/13 և 2 այլ գործ, 11 մարտի 2014թ.

—Դ—

«1989թ. դեկտեմբերի 21» ասոցիացիան և այլք ընդդեմ Ռումինիայի, թիվ 33810/07 և
18817/08, 24 մայիսի 2011թ.
Դե Դոնդերը և Դե Քլիպելն ընդդեմ Բելգիայի, թիվ 8595/06, 6 դեկտեմբերի 2011թ.
Դենիզչին և այլք ընդդեմ Կիպրոսի, թիվ 25316-25321/94 և 27207/95, ՄԻԵԴ, 2001-V
Դոդովն ընդդեմ Բուլղարիայի, թիվ 59548/00, 17 հունվարի 2008թ.

—Ե—

Ե.Մ.-ն և այլք ընդդեմ Ռումինիայի (որոշ.), թիվ 20192/07, 3 հունիսի 2014թ.
Եվգենյա Լազարն ընդդեմ Ռումինիայի, թիվ 32146/05, 16 փետրվարի 2010թ.

—Զ—

Զ.-ն ընդդեմ Լեհաստանի, թիվ 46132/08, 13 նոյեմբերի 2012թ.
Զաֆեր Օզթուրքն ընդդեմ Թուրքիայի, թիվ 25774/09, 21 հուլիսի 2015թ.

Ջենգինն ընդդեմ Թուրքիայի, թիվ 46928/99, 28 հոկտեմբերի 2004թ.
Զջելարը և այլք ընդդեմ Խորվաթիայի, թիվ 80960/12, 6 հուլիսի 2017թ.

—Է—

Էդվարդսն ընդդեմ Միացյալ Թագավորության, 16 դեկտեմբերի 1992թ., սերիա Ա, թիվ 247-Բ
Էմարսն ընդդեմ Լատվիայի, թիվ 22412/08, 18 նոյեմբերի 2014թ.
Էմին և այլք ընդդեմ Կիպրոսի, Հունաստանի և Միացյալ Թագավորության (որոշ.), թիվ 59623/08 և 6 այլ գործ, 3 հունիսի 2010թ.
Էնզիլ Օզդեմիրն ընդդեմ Թուրքիայի, թիվ 54169/00, 8 հունվարի 2008թ.
Էնուկիձեն և Գիրգվիլիանին ընդդեմ Վրաստանի, թիվ 25091/07, 26 ապրիլի 2011թ.
Էստամիրովն և այլք ընդդեմ Ռուսաստանի, թիվ 60272/00, 12 հոկտեմբերի 2006թ.
Էվանս ընդդեմ Միացյալ Թագավորության [ՄՊ], թիվ 6339/05, ՄԻԵԴ, 2007-I
Էվրիմ Օքտեմն ընդդեմ Թուրքիայի, թիվ 9207/03, 4 նոյեմբերի 2008թ.
Էրզին ընդդեմ Թուրքիայի, 28 հուլիսի 1998, *Վճիռների և որոշումների ժողովածու* 1998-IV
Էրդողանը և այլք ընդդեմ Թուրքիայի, թիվ 19807/92, 25 ապրիլի 2006թ.

—Թ—

Թահսին Աքարն ընդդեմ Թուրքիայի [ՄՊ], թիվ 26307/95, ՄԻԵԴ, 2004-III
Թանիշը և այլք ընդդեմ Թուրքիայի, թիվ 65899/01, ՄԻԵԴ, 2005-VIII
Թանյին ընդդեմ Թուրքիայի, թիվ 26129/95, ՄԻԵԴ, 2001-III (քաղվածքներ)
Թեքին և Արսլանն ընդդեմ Բելգիայի, թիվ 37795/13, 5 սեպտեմբերի 2017թ.
Թիմուրթաշն ընդդեմ Թուրքիայի, թիվ 23531/94, ՄԻԵԴ, 2000-VI

—Ի—

Իգոր Շնչենկոն ընդդեմ Ուկրաինայի, թիվ 22737/04, 12 հունվարի 2012թ.
Իլբեյի Քեմալօղլուն և Մերիյե Քեմալօղլուն ընդդեմ Թուրքիայի, թիվ 19986/06, 10 ապրիլի 2012թ.
Իլհանն ընդդեմ Թուրքիայի [ՄՊ], թիվ 22277/93, ՄԻԵԴ, 2000-VII
Իկինչիսոյն ընդդեմ Թուրքիայի, թիվ 26144/95, 27 հուլիսի 2004թ.
Իսահան և այլք ընդդեմ Ռուսաստանի, թիվ 57947/00 և 2 այլ գործ, 24 փետրվարի 2005թ.
Իփեքն ընդդեմ Թուրքիայի, թիվ 25760/94, ՄԻԵԴ, 2004-II (քաղվածքներ)

—Լ—

Լ.Յ.Բ-ն ընդդեմ Միացյալ Թագավորության, 9 հունիսի 1998թ., *Վճիռների և որոշումների ժողովածու* 1998-III
Լամբերը և այլք ընդդեմ Ֆրանսիայի [ՄՊ], թիվ 46043/14, ՄԻԵԴ, 2015 (քաղվածքներ)
Լըրեյը և այլք ընդդեմ Ֆրանսիայի (որոշ.), թիվ 44617/98, 16 հունվարի 2001թ.
Լոպես դե Սուսա Ֆերնանդեսն ընդդեմ Պորտուգալիայի [ՄՊ], թիվ 56080/13, 19 դեկտեմբերի 2017թ.
Լորգան ընդդեմ Մոլդովայի, թիվ 12219/05, 23 մարտի 2010թ.

—Խ—

Խայրույինան ընդդեմ Ռուսաստանի, թիվ 29729/09, 19 դեկտեմբերի 2017թ.
Խաշիևը և Ականան ընդդեմ Ռուսաստանի, թիվ 57942/00 և թիվ 57945/00, 24 փետրվարի
2005թ.

—Կ—

Կազիրովն ընդդեմ Ռուսաստանի, թիվ 36367/09, 23 ապրիլի 2015թ.
Կաթսը և այլք ընդդեմ Ուկրաինայի, թիվ 29971/04, 18 դեկտեմբերի 2008թ.
Կալվելին և Չիլյոն ընդդեմ Իտալիայի [ՄՊ], թիվ 32967/96, ՄԻԵԴ, 2002-I
Կակուլին ընդդեմ Թուրքիայի, թիվ 38595/97, 22 նոյեմբերի 2005թ.
Կարպիսևիչն ընդդեմ Լեհաստանի (որոշ.), թիվ 14730/09, 11 դեկտեմբերի 2012թ.
Կելերն ընդդեմ Ռուսաստանի, թիվ 26824/04, 17 հոկտեմբերի 2013թ.
Կիպրոսն ընդդեմ Թուրքիայի [ՄՊ], թիվ 25781/94, ՄԻԵԴ, 2001-IV
*Կիտանովսկա Ստանոյկովիչը և այլք ընդդեմ նախկին Հարավսլավիայի Մակեդոնիայի
Հանրապետության*, թիվ 2319/14, 13 հոկտեմբերի 2016թ.
Կլասան ընդդեմ Գերմանիայի, 22 սեպտեմբերի 1993, սերիա Ա թիվ 269
Կոլվին ընդդեմ Բուլղարիայի, թիվ 1108/02, 5 նոյեմբերի 2009թ.
Կոլյադենկոն և այլք ընդդեմ Ռուսաստանի, թիվ 17423/05 և 5 այլ գործ, 28 փետրվարի
2012թ.
Կոչեսկին ընդդեմ նախկին Հարավսլավիայի Մակեդոնիայի Հանրապետության (որոշ.),
թիվ 41107/07, 22 հոկտեմբերի 2013թ.
Կոսևան ընդդեմ Բուլղարիայի (որոշ.), թիվ 6414/02, 22 հունիսի 2010թ.
Կոտելնիկովն ընդդեմ Ռուսաստանի, թիվ 45104/05, 12 հուլիսի 2016թ.
Կուդրան ընդդեմ Խորվաթիայի, թիվ 13904/07, 18 դեկտեմբերի 2012թ.
Կուշտովան և այլք ընդդեմ Ռուսաստան (թիվ 2), թիվ 60806/08, 21 փետրվարի 2017թ.
Կրաստանովն ընդդեմ Բուլղարիայի, թիվ 50222/99, 30 սեպտեմբերի 2004թ.

—Հ—

Հասան ընդդեմ Շվեյցարիայի, թիվ 31322/07, ՄԻԵԴ, 2011թ.
Հասանն ընդդեմ Միացյալ Թագավորության [ՄՊ], թիվ 29750/09, ՄԻԵԴ, 2014թ.
Հարիսոնն ը այլք ընդդեմ Միացյալ Թագավորության (որոշ.), թիվ 44301/13, 25 մարտի
2014թ.
Հենսթորթն ընդդեմ Միացյալ Թագավորության, թիվ 58559/09, 16 հուլիսի 2013թ.
Հեսիբե Հարան ընդդեմ Թուրքիայի, թիվ 28299/95, 6 հոկտեմբերի 2005թ.
Հիլերն ընդդեմ Ավստրիայի, թիվ 1967/14, 22 նոյեմբերի 2016թ.
Հյու Ջորդանն ընդդեմ Միացյալ Թագավորության, թիվ 24746/94, 4 մայիսի 2001թ.
Հուոհվանայնենն ընդդեմ Ֆինլանդիայի, թիվ 57389/00, 13 մարտի 2007թ.
Հրիստոգովը և այլք ընդդեմ Բուլղարիայի, թիվ 47039/11 և 358/12, ՄԻԵԴ, 2012թ.
(քաղվածքներ)

—Ձ—

Ձյեցյակն ընդդեմ Լեհաստանի, թիվ 77766/01, 9 դեկտեմբերի 2008թ.

—Մ—

- Ս. Օզելը և այլք ընդդեմ Թուրքիայի*, թիվ 14350/05 և 2 այլ գործ, 17 նոյեմբերի 2015թ.
Մագոմադովն ընդդեմ Ռուսաստանի, թիվ 68004/01, 12 հուլիսի 2007թ.
Մալիք Բարայնն ընդդեմ Ադրբեջանի, թիվ 30500/11, 1 հունիսի 2017թ.
Մախարաձեն և Միխարուլիձեն ընդդեմ Վրաստանի, թիվ 35254/07, 22 նոյեմբերի 2011թ.
Մակարացիսն ընդդեմ Հունաստանի [ՄՊ], թիվ 50385/99, ՄԻԵԴ, 2004-XI
Մահմուտ Քայան ընդդեմ Թուրքիայի, թիվ 22535/93, ՄԻԵԴ, 2000-III
Մայորանոն և այլք ընդդեմ Բուլղարիայի, թիվ 28634/06, 15 դեկտեմբերի 2009թ.
Մանսուրօղլուն ընդդեմ Թուրքիայի, թիվ 43443/98, 26 փետրվարի 2008թ.
Մաստրոմատեոն ընդդեմ Իտալիայի [ՄՊ], թիվ 37703/97, ՄԻԵԴ, 2002-VIII
Մարգուշն ընդդեմ Խորվաթիայի [ՄՊ], թիվ 4455/10, ՄԻԵԴ, 2014թ. (քաղվածքներ)
Մարուսևան ընդդեմ Ռուսաստանի (որոշ.), թիվ 28602/02, 1 հունիսի 2006թ.
Մեդովան ընդդեմ Ռուսաստանի, թիվ 25385/04, 15 հունվարի 2009թ.
Մեժիևան ընդդեմ Ռուսաստանի, թիվ 44297/06, 16 ապրիլի 2015թ.
Մեհմեդ Շենթյուրքը և Բեքիր Շենթյուրքն ընդդեմ Թուրքիայի, թիվ 13423/09, ՄԻԵԴ, 2013թ.
Մենսոն ընդդեմ Միացյալ Թագավորության (որոշ.), թիվ 47916/99, ՄԻԵԴ, 2003-V
Մերյեմ Չելիքը և այլք ընդդեմ Թուրքիայի, թիվ 3598/03, 16 ապրիլի 2013թ.
Մըկֆենն և այլք ընդդեմ Միացյալ Թագավորության, 27 սեպտեմբերի 1995, սերիա Ա թիվ 324
Մըկֆերն ընդդեմ Միացյալ Թագավորության (որոշ.), թիվ 28883/95, 4 ապրիլի 2000թ.
Միխնոն ընդդեմ Ուկրաինայի, թիվ 32514/12, 1 սեպտեմբերի 2016թ.
Միկիևան և այլք ընդդեմ Ռուսաստանի, թիվ 61536/08 և 4 այլ գործ, 30 հունվարի 2014թ.
Միտիչն ընդդեմ Սերբիայի, թիվ 31963/08, 22 հունվարի 2013թ.
Միքայիլ Մամադովն ընդդեմ Ադրբեջանի, թիվ 4762/05, 17 դեկտեմբերի 2009թ.
Մոլին ընդդեմ Ռումինիայի (որոշ.), թիվ 13754/02, 1 սեպտեմբերի 2009թ.
Մոկանուն և այլք ընդդեմ Ռումինիայի [ՄՊ], թիվ 10865/09 և 2 այլ գործ, ՄԻԵԴ, 2014թ. (քաղվածքներ)
Մոզիևն ընդդեմ Լեհաստանի, թիվ 11818/02, 24 մարտի 2009թ.
Մոսենձն ընդդեմ Ուկրաինայի, թիվ 52013/08, 17 հունվարի 2013թ.
Մուչիրաբիչն ընդդեմ Սերբիայի, թիվ 34661/07, 12 հուլիսի 2016թ.
Մուսանևան և այլք ընդդեմ Ռուսաստանի, թիվ 74239/01, 26 հուլիսի 2007թ.
Մուստաֆա Թունչը և Ֆեյիր Թունչն ընդդեմ Թուրքիայի [ՄՊ], թիվ 24014/05, 14 ապրիլի 2015թ.

—Յ—

- Յարանսուն և այլք ընդդեմ Թուրքիայի*, թիվ 43903/09, 12 նոյեմբերի 2013թ.
Յանգերն ընդդեմ Միացյալ Թագավորության (որոշ.), թիվ 57420/00, ՄԻԵԴ, 2003-I
Յերեմյաշովան և Պեչովան ընդդեմ Չեխական (révision), թիվ 23944/04, 20 հունիսի 2013թ.
Յոտովան ընդդեմ Բուլղարիայի, թիվ 43606/04, 23 հոկտեմբերի 2012թ.
Յուքսեղ Էրդողանը և այլք ընդդեմ Թուրքիայի, թիվ 57049/00, 15 փետրվարի 2007թ.

—Ն—

- Նաչովան և այլք ընդդեմ Բուլղարիայի* [ՄՊ], թիվ 43577/98 և 43579/98, ՄԻԵԴ, 2005-VII
Նաֆիյե Չեթինը և այլք ընդդեմ Թուրքիայի, թիվ 19180/03, 7 ապրիլի 2009թ.

Նենչևան և այլք ընդդեմ Բուլղարիայի, թիվ 48609/06, 18 հունիսի 2013թ.
Նիտեցկին ընդդեմ Լեհաստանի (որոշ.), թիվ 65653/01, 21 մարտի 2002թ.
Նուրայ Շենն ընդդեմ Թուրքիայի (թիվ 2), թիվ 25354/94, 30 մարտի 2004թ.

—Շ—

Շանդրուն և այլք ընդդեմ Ռումինիայի, թիվ 22465/03, 8 դեկտեմբերի 2009թ.
Շաֆիևան ընդդեմ Ռուսաստանի, թիվ 49379/09, 3 մայիսի 2012թ.
Շիլիհն ընդդեմ Սլովենիայի [ՄՊ], թիվ 71463/01, 9 ապրիլի 2009թ.
Շիմշեկը և այլք ընդդեմ Թուրքիայի, թիվ 35072/97 և 37194/97, 26 հուլիսի 2005թ.
Շիրին Յիլմազն ընդդեմ Թուրքիայի, թիվ 35875/97, 29 հուլիսի 2004թ.

—Ու—

Ուրսուն ընդդեմ Ռումինիայի (որոշ.), թիվ 58670/00, 3 մայիսի 2005թ.

—Չ—

Չավիտ Թինարլիօղլուն ընդդեմ Թուրքիայի, թիվ 3648/04, 2 փետրվարի 2016թ.
Չաքմակչին ընդդեմ Թուրքիայի (որոշ.), թիվ 3952/11, 2 մայիսի 2017թ.
Չաքմաքն ընդդեմ Թուրքիայի (որոշ.), թիվ 34872/09, 21 նոյեմբերի 2017թ.
Չելրիօղլուն ընդդեմ Թուրքիայի, թիվ 69546/12, 4 հոկտեմբերի 2016թ.
Չորեֆտակիսը և Չորեֆտակին ընդդեմ Հունաստանի, թիվ 46846/08, 17 հունվարի 2012թ.

—Պ—

Պալիչն ընդդեմ Բոսնիա և Հերցեգովինայի, թիվ 4704/04, 15 փետրվարի 2011թ.
Պենտյացովան և այլք ընդդեմ Մոլդովայի (որոշ.), թիվ 14462/03, ՄԻԵԴ, 2005-I
Պերեյրա Էնրիկեսն ընդդեմ Լյուքսեմբուրգի, թիվ 60255/00, 9 մայիսի 2006թ.
Պերնեդեցկն ընդդեմ Ռուսաստանի, թիվ 39583/05, 24 ապրիլի 2014թ.
Պիտալեն ընդդեմ Ռուսաստանի, թիվ 34393/03, 30 հուլիսի 2009թ.

—Ջ—

Ջալուդն ընդդեմ Նիդեռլանդների [ՄՊ], թիվ 47708/08, ՄԻԵԴ, 2014թ.
Ջելիչն ընդդեմ Խորվաթիայի, թիվ 57856/11, 12 հունիսի 2014թ.
Ջուլիանին և Գաջոն ընդդեմ Բոսնիայի [ՄՊ], թիվ 23458/02, ՄԻԵԴ, 2011թ. (քաղվածքներ)

—Ռ—

Ռ.Ռ.-ն և այլք ընդդեմ Հունգարիայի, թիվ 19400/11, 4 դեկտեմբերի 2012թ.
Ռամսահայր և այլք ընդդեմ Նիդեռլանդների [ՄՊ], թիվ 52391/99, ՄԻԵԴ, 2007-II
Ռանցն ընդդեմ Կիպրոսի և Ռուսաստանի, թիվ 25965/04, ՄԻԵԴ, 2010թ. (քաղվածքներ)
Ռաջկովսկան ընդդեմ Լեհաստանի (որոշ.), թիվ 37393/02, 27 նոյեմբերի 2007թ.
Ռեյնոլդսն ընդդեմ Միացյալ Թագավորության, թիվ 2694/08, 13 մարտի 2012թ.

Ռենտլդեն ընդդեմ Ֆրանսիայի, թիվ 5608/05, ՄԻԵԴ, 2008թ. (քաղվածքներ)
Ռուպան ընդդեմ Ռումինիայի (թիվ 1), թիվ 58478/00, 16 դեկտեմբերի 2008թ.

—Ս—

Սալմանն ընդդեմ Թուրքիայի [ՄՊ], թիվ 21986/93, ՄԻԵԴ, 2000-VII
Սաշո Գորգինն ընդդեմ նախկին Հարավսլավիայի Մակեդոնիայի Հանրապետության, թիվ 49382/06, ՄԻԵԴ, 2012թ. (քաղվածքներ)
Սաուդն ընդդեմ Ֆրանսիայի, թիվ 9375/02, 9 հոկտեմբերի 2007թ.
Սելահաթին Դեմիրթաշն ընդդեմ Թուրքիայի, թիվ 15028/09, 23 հունիսի 2015թ.
Սեյհանն ընդդեմ Թուրքիայի, թիվ 33384/96, 2 նոյեմբերի 2004թ.
Սեսիլիա Պերեյրա Էնրիկեսը և այլք ընդդեմ Լյուքսեմբուրգի (որոշ.), թիվ 60255/00, 26 օգոստոսի 2003թ.
Սերգեյ Շևչենկոն ընդդեմ Ուկրաինայի, թիվ 32478/02, 4 ապրիլի 2006թ.
Սերֆն ընդդեմ Թուրքիայի, թիվ 12938/07, 3 մայիսի 2016թ.
Սևիմ Գյունգորն ընդդեմ Թուրքիայի (որոշ.), թիվ 75173/01, 14 ապրիլի 2009թ.
Սիդիկա Իմրեն ընդդեմ Թուրքիայի, թիվ 47384/11, 13 սեպտեմբերի 2016թ.
Սինիմն ընդդեմ Թուրքիայի, թիվ 9441/10, 6 հունիսի 2017թ.
Սլիմանին ընդդեմ Ֆրանսիայի, թիվ 57671/00, ՄԻԵԴ, 2004-IX (քաղվածքներ)
Սկավուձո-Հագերն ընդդեմ Շվեյցարիայի, թիվ 41773/98, 7 փետրվարի 2006թ.
Սյեչոնսկան ընդդեմ Լեհաստանի, թիվ 19776/04, 14 հունիսի 2011թ.
Սոարեն և այլք ընդդեմ Ռումինիայի, թիվ 24329/02, 22 փետրվարի 2011թ.
Ստարշնիչն ընդդեմ Խորվաթիայի, թիվ 80909/12, 13 նոյեմբերի 2014թ.
Ստոյանովին ընդդեմ Բուլղարիայի, թիվ 42980/04, 9 նոյեմբերի 2010թ.

—Վ—

Վալենտին Կամպենուի անվան իրավաբանական ռեսուրսների կենտրոնն ընդդեմ Ռումինիայի [ՄՊ], թիվ 47848/08, ՄԻԵԴ, 2014թ.
Վալերի Ֆուլլենն ընդդեմ Ուկրաինայի, թիվ 6318/03, 16 հունվարի 2014թ.
Վակրիլովն ընդդեմ Բուլղարիայի (որոշ.), թիվ 18698/06, 9 հոկտեմբերի 2012թ.
Վան Քոլլն ընդդեմ Միացյալ Թագավորության, թիվ 7678/09, 13 նոյեմբերի 2012թ.
Վառնավան և այլք ընդդեմ Թուրքիայի [ՄՊ], թիվ 16064/90 և 8 այլ գործ, ՄԻԵԴ, 2009թ.
Վասիլսկան և Կալուցկան ընդդեմ Լեհաստանի, թիվ 28975/04 և 33406/04, 23 փետրվարի 2010թ.
Վելիկովան ընդդեմ Բուլղարիայի, թիվ 41488/98, ՄԻԵԴ, 2000-VI
Վիլնեսը և այլք ընդդեմ Նորվեգիայի, թիվ 52806/09 և 22703/10, 5 դեկտեմբերի 2013թ.
Վյատերն ընդդեմ Լեհաստանի (որոշ.), թիվ 42290/08, 15 մայիսի 2012թ.
Վոլկն ընդդեմ Սլովենիայի, թիվ 62120/09, 13 դեկտեմբերի 2012թ.
Վոն ընդդեմ Ֆրանսիայի [ՄՊ], թիվ 53924/00, ՄԻԵԴ, 2004-VIII

—Տ—

Տագանան և այլք ընդդեմ Ռուսաստանի, թիվ 26562/07 և 6 այլ գործ, 13 ապրիլի 2017թ.
Տարարիևան ընդդեմ Ռուսաստանի, թիվ 4353/03, ՄԻԵԴ, 2006-XV (քաղվածքներ)
Տուրլուևան ընդդեմ Ռուսաստանի, թիվ 63638/09, 20 հունիսի 2013թ.

Տրևալեցն ընդդեմ Բելգիայի, թիվ 30812/07, 14 հունիսի 2011թ.
Տրուբնիկովն ընդդեմ Ռուսաստանի, թիվ 49790/99, 5 հուլիսի 2005թ.

—Փ—

Փաշա և Էրքան Էրոլն ընդդեմ Թուրքիայի, թիվ 51358/99, 12 դեկտեմբերի 2006թ.
Փատլն ընդդեմ Միացյալ Թագավորության (որոշ.), թիվ 45305/99, ՄԻԵԴ, 2000-V
Փերքն և այլք ընդդեմ Թուրքիայի, թիվ 50739/99, 28 մարտի 2006թ.
Փոլ և Օդրի Էդվարդսն ընդդեմ Միացյալ Թագավորության, թիվ 46477/99, ՄԻԵԴ, 2002-II
Փրիթին ընդդեմ Միացյալ Թագավորության, թիվ 2346/02, ՄԻԵԴ, 2002-III

—Ք—

Քալենդերն ընդդեմ Թուրքիայի, թիվ 4314/02, 15 դեկտեմբերի 2009թ.
Քամինզը և այլք ընդդեմ Միացյալ Թագավորության (որոշ.), թիվ 27306/05, 13 դեկտեմբերի 2005թ.
Քայան ընդդեմ Թուրքիայի, 19 փետրվարի 1998թ., Ժողովածու 1998-I
Քեթրերն ընդդեմ Ֆրանսիայի, թիվ 38447/09, 19 հուլիսի 2012թ.
Քելլին և այլք ընդդեմ Միացյալ Թագավորության, թիվ 30054/96, 4 մայիսի 2001թ.
Քիլինչը և այլք ընդդեմ Թուրքիայի, թիվ 40145/98, 7 հունիսի 2005թ.
Քիլիչն ընդդեմ Թուրքիայի, թիվ 22492/93, ՄԻԵԴ, 2000-III
Քինանն ընդդեմ Միացյալ Թագավորության, թիվ 27229/95, ՄԻԵԴ, 2001-III
Քիշմիրն ընդդեմ Թուրքիայի, թիվ 27306/95, 31 մայիսի 2005թ.
Քոքուն ընդդեմ Թուրքիայի, թիվ 27305/95, 31 մայիսի 2005թ.

—Օ—

Օ՛Նուզլինը և այլք ընդդեմ Միացյալ Թագավորության (որոշ.), թիվ 23274/04, 25 օգոստոսի 2005թ.
Օզալփը և այլք ընդդեմ Թուրքիայի, թիվ 32457/96, 8 ապրիլի 2004թ.
Օլյուրն ընդդեմ Թուրքիայի [ՄՊ], թիվ 21594/93, ՄԻԵԴ, 1999-III
Օյալն ընդդեմ Թուրքիայի, թիվ 4864/05, 23 մարտի 2010թ.
Օներյիլդիզն ընդդեմ Թուրքիայի [ՄՊ], թիվ 48939/99, ՄԻԵԴ, 2004-XII
Օսմանն ընդդեմ Միացյալ Թագավորության, 28 հոկտեմբերի 1998թ., *Վճիռների և որոշումների ժողովածու* 1998-VIII
Օսմանօղլուն ընդդեմ Թուրքիայի, թիվ 48804/99, 24 հունվարի 2008թ.
Օրհանն ընդդեմ Թուրքիայի, թիվ 25656/94, 18 հունիսի 2002թ.
Օրուքն ընդդեմ Թուրքիայի, թիվ 33647/04, 4 փետրվարի 2014թ.
Օփուզն ընդդեմ Թուրքիայի, թիվ 33401/02, ՄԻԵԴ, 2009թ.

—Տ—

Տ.Գ.-ն ընդդեմ Շվեդիայի [ՄՊ], թիվ 43611/11, 23 մարտի 2016թ.
Տերգեչն ընդդեմ Խորվաթիայի, թիվ 68516/14, 9 մայիսի 2017թ.
Տինոզենտվը և այլք ընդդեմ Ռուսաստանի (որոշ.), թիվ 18299/03 և 27311/03, 18 մարտի 2010թ.

Ֆինոգենովը և այլք ընդդեմ Ռուսաստանի, թիվ 18299/03 և 27311/03, ՄԻԵԴ, 2011թ.

(քաղվածքներ)

Տուրդիկն ընդդեմ Սլովակիայի (որոշ.), թիվ 42994/05, 2 դեկտեմբերի 2008թ.